Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

V, U.

206

Проф. Н. СУВОРОВЪ ❀ Պրոֆ. Ն. ՍՈՒՎՈՐՈՎ

280
1008-ՍՈՒ

ԵԿԵՂԵՑՈՒ

ԵՒ

ՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռուսերէնից թարգմանեց

ՊԵՏՐՈՍ ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Խմբագրութեամբ

Ս. Տիգրանեանցի

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1902

348
Ս-80

01 MAR 2010

Проф. Н. СУВОРОВЪ ❁ Պրոֆ. Ն. ՍՈՒՎՈՐՈՎ.

ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1905
20396

Ռուսերէնից թարգմանեց
ՊԵՏՐՈՍ ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Խմբագրութեամբ
Ս. Տիգրանեանցի

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
R.S.F.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
Մոսկվա, Մասնաճիւղ
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԱԳԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1902

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ—ՄԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
Երուանդ Լալայեանից

Дозволено Цензурою 27 Ноября 1901 г. г. Тифлисъ.

Այս գրքոյկը եկեղեցական իրաւաբանութեան պրոֆէսսոր (Մոսկուայի Համալսարանում) Ն. Սուվորովի «Учебникъ церковнаго права» դասագրքի 5-րդ մասի առաջին գլխի («Отношенія между церковью и государствомъ») թարգմանութիւնն է:

Թարգմանութիւնն արել է Պ. Տէր Յարութիւնեանը: Ես ուղղել եմ եւ խմբագրել այդ թարգմանութիւնը, ու տեղ-տեղ, գլխաւորապէս նոյն դասագրքից քաղելով, մի քանի ծանօթութիւններ աւելացրել (Ծ. Խ. ստորագրութեամբ), որով բնագրի մի քանի դարձուածքները գուցէ աւելի պարզ եւ հասկանալի դառնան:

Պիրական Տիգրանեան:

Ս. Էջմիածին, 1901 Նոյեմբեր:

07 AUG 2013

ԵԿԵՂԵՑՈՒ

ԵՒ

ՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 1 Քրիստոնեաների եւ պետական իշխանութեան յարաբերութիւնը ըստ Ս. Գրքի:

Աւետարանի մէջ յիշւում է Քրիստոսի այն խմաստալից խօսքը, որ ասուած է եղել ի պատասխան փարիսեցիների և հերովդիսեանների տուած հարցին։ Սոքա հրէական ժողովրդի մէջ կազմում էին երկու թշնամական կուսակցութիւն. փարիսեցիները ամենայն խստութեամբ պահպանում էին հրէական հոգևոր օրէնքը՝ սկզբունքով թոյլ չտալով Աստծու ժողովրդին՝ ենթարկուել որ և է օտար իշխանութեան. հերովդիսեանները կողմնակից էին Հերովդէսին, որին Հռովմը Հրէաստանի կառավարիչ էր նշանակել, հետևապէս սոքա կողմնակից էին և հռովմէական իշխանութեան։ Հարցն այս էր, պէտք է արդեօք հռովմէական կայսրի իշխանութեանն ենթարկուել և այդ օրինաւոր համարել։ Այս հարցին պատասխան տալը՝ հարց դնողների կարծիքով չափազանց դժուար էր. դրական պատասխանը Քրիստոսից պէտք է հեռացնէր ժողովրդի այն խումբը, որի համար թանկ էին Աստծու ընտրեալ ժողովրդի անկախութեան աւանդութիւնները. իսկ բացասական պատասխանը Նորա թշնամիների ձեռքը պէտք է դէնք տար, առիթ տալով մեղադրելու Նորան իշխանութեան դէմ խռովութիւն յարուցանելում։ Բայց Քրիս-

տոն այնպէս պատասխանեց, որ ոչ փարիսեցիք և ոչ հերոդիսեանները չլսեցին այն, ինչ բանի որ սպասում էին. «Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»։ Ինչ որ կայսրինն է կայսրին տալ, հնազանդ լինել պետական իշխանութեան՝ քարոզեցին և Քրիստոսի աշակերտները։ Այսպէս Պօղոս առաքեալը սովորեցնում էր քրիստոնեաներին՝ հնազանդ լինել բարձր իշխանութեան ոչ միայն պատժի երկիւղից, այլ և խղճի դրդումից, որովհետև իւրաքանչիւր իշխանութիւն հիմնւում է Աստծուց և աստուածային աշխարհակալութեան օրդան է, որ բարիներին վարձատրում է և սուր է կրում չարերին պատժելու համար։ Նոյն առաքեալը համոզում է քրիստոնեաներին աղօթել թագաւորի և բոլոր կառավարիչների համար, թէպէտ առաջին քրիստոնեաները՝ աշխարհի շուտով վերջանալու ակնկալութեամբ ապրելով, պատրաստ էին հռովմէական աշխարհի պետին (Ներոնին) Ցայտնութեան Նեռը, այսինքն հակաքրիստոս համարել։ Նոյն կերպ և միւս առաքեալ Պետրոսը պարտաւորեցնում էր քրիստոնեաներին յարգանք և հնազանդութիւն ցոյց տալ ինչպէս կայսրին, նոյնպէս և ստորադրեալ կառավարիչներին, որոնք ուղարկուած են նրա կողմից յանցաւորներին պատժելու, իսկ բարութիւն անողներին խրախուսելու։ Սակայն առաքեալները՝ այդքան բարձր դնահատելով պետական իշխանութեան առաքելութիւնը՝ արդարութիւն սերմանել աշխարհի մէջ, միւս կողմից ցոյց են տալիս, որ անհրաժեշտ է Աստծունը Աստծուն տալ։ Այսպէս Պետրոս և Յովհաննէս առաքեալները՝ յիշելով Քրիստոսի պատուէրը— քարոզել Իւր աւետարանը,—մերժեցին հնազանդուել հրէական հոգևոր իշխանութիւններին, որ արգելում էին նոցա խօսել և սովորեցնել Քրիստոսի անունով։ «Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել, քան մարդկան», ասում էին առաքեալները։ Այսպիսով Նոր Կտակարանը՝ չշոշափելով Եկեղեցու դէպի պետութիւնն ունենալիք յարաբերութիւնները և դրանով նոցա փոխադարձ յարաբերութեան

կազմակերպման համար ընդարձակ ասպարէզ բանալով, պարունակում է իւր մէջ պարզ ցուցմունք, թէ իւրաքանչիւր քրիստոնեայ ինչպէս պէտք է վերաբերուի դէպի թէ մարմնաւոր և թէ հոգևոր իշխանութիւնը։ Եթէ սրանց հրամանը հակասող կլինի Աստծու կամքին, այնպէս որ հրամանի կատարելը հնարաւոր կը լինի միայն Աստծու պատուիրանի խախտմամբ, քրիստոնեան պարտաւոր է կատարել վերջինը, և ոչ թէ առաջինը։

---

§ 2. Եկեղեցու դիրքը հեթանոս հռովմէական կայսրութեան մէջ։

Քրիստոնէութեան առաջին դարերը լի էին հռովմէական իշխանութեան կողմից քրիստոնեաների դէմ յարուցած հալածանքներով, և տիեզերական պատմութեան այդ երևոյթը նրանով աւելի նշանաւոր է, որ Հռովմում թոյլատրւում և տանելի էին նուաճուած ազգերի ամեն տեսակ և երբեմն յայտնի անբարոյական պաշտամունքները, օրինակ Ցիբելայի, Իսիդայի, Աստարտայի, Միհրի և Բահազի պաշտամունքները։ Նշանաւոր է նոյնպէս և այն փաստը, որ ամենից խիստ և սիստեմօրէն հալածանքներ քրիստոնեաների դէմ տեղի են ունեցել հռովմէական ոչ թէ վատ, այլ ամենալաւ կայսրների օրով։ Ամենից առաջին հալածանքները հրէշ կայսրների օրով (Ներոն և Դոմետիանոս) պատահական բնաւորութիւն ունէին և որ և է որոշ կառավարչական ծրագրով չէին առաջ եկել։ Առաջինը, որ որոշ սիստեմ մտցրեց հռովմէական թագաւորութեան կողմից քրիստոնեաների դէմ յարուցած հալածանքների մէջ, Տրայանոսն էր, հրամայելով Բիւթանիայի և Պոնտոսի կուսակալ (պրոկոնսուլ) Պլինիոս կրտսերին քրիստոնեաների նկատմամբ հետևեալ պատուէրին հետևել. ի պաշտօնէ (ex officio) քրիստոնեաներին չփնտռել,

բայց մահնութեան դէպքում (ոչ անհանուն) ապացուցածներին մահուան պատժի ենթարկել, եթէ նոքա քրիստոնէութիւնից չեն հրաժարւում և իրենց հեռանալը գործով ցոյց չեն տալիս, այսինքն եթէ հռովմէական աստուածներին չեն երկրպագում։ Այս կարգը էական մասով շարունակուեց մինչև 3-րդ դարի կէսը, երբ Դեկիոս կայսրը հրատարակեց մի հրովարտակ (էդիկտ), որով հրամայում էր իշխանաւորներին պատիժ սպառնալով, որ ամեն տեսակ միջոցներով ստիպեն քրիստոնեաներին մասնակցել հեթանոս—հռովմէական պաշտամունքներին, եպիսկոպոսներին մահուան պատժի ենթարկեն, փախչող քրիստոնեաների գոյքը յարքունիս դրաւեն, իսկ երբ փախստականները կը վերադառնան, ենթարկեն նոցա մահուան պատժի։ Դեկիոսից յետոյ Վալերիանոսը հրատարակեց մի օրէնք՝ հալածել հոգևորականութիւնը և առհասարակ բոլոր հեղինակաւոր անձնաւորութիւններին, որոնք կառավարութեան կարծիքով կարող էին իբրև նեցուկ ծառայել այն կրօնի համար, որը պէտք էր արմատախիլ անել։ Խիստ սիստեմական և սաստիկ հալածանք սկսուեց 4-դ դարի սկզբում Դիոկղետիանոսի օրով, որն հրամայեց քրիստոնեաների մօտից հաւաքել և այրել Ս. Գիրքը, քանդել տաճարները, ազատ ծնուած քրիստոնեաներին ենթարկել անուանարկութեան (ինֆամիայ), ստրուկներին զրկել ազատութիւն ստանալու յոյսից և յետոյ՝ չբաւականանալով այդ համեմատաբար մեղմ միջոցներից, հրամայեց ոչնչացնել բոլոր այն քրիստոնեաներին, որոնք մերժում էին հռովմէական աստուածներին զոհ մատուցանել։ Մի խօսքով հռովմէական միւս բոլոր, նոյն իսկ անմիտ ու անբարոյական պաշտամունքների նկատմամբ համբերամիտ եղած պետութիւնը յարձակուեց քրիստոնեաների վրայ, ծանր հալածանքի ենթարկելով այն մարդկանց, որ իրենց աստուածային Ուսուցչի և Նոքա առաքեալների պատուէրի համաձայն միշտ պատրաստ էին անկեղծ և առանց երեսպաշտութեան կայսրինը

կայսրին տալ, կատարել իրենց քաղաքացիական և հպատակութեան բոլոր պարտականութիւնները և նայել պետական իշխանութեան վրայ, ինչպէս աստուածային աշխարհակալութեան օրգանի վրայ։

Առաջին հայեացքից տարօրինակ թուացող այս երևոյթի ամենակոր պատճառը կրօնականի և քաղաքականի, նուիրականի և հանրայինի այն ձուլման մէջ է, որի շնորհիւ հռովմէական պաշտամունքը համարւում էր իբրև պետական կարգի հիմք և դրա համար պէտք է պարտաւորիչ կերպով տարածուէր հռովմէական կայսրութեան բոլոր հպատակների մէջ։ Ինչպէս հին հռովմէական աստուածների պաշտամունքը, նոյնպէս էլ՝ առանձնապէս կայսրութեան ժամանակ չափազանց ժողովրդականութիւն վայելող կայսրների պաշտամունքը, այսինքն կայսրի կենդանութեան ժամանակ նորա ոգուն երկրպագութիւն տալը և ձևական կերպով նորան մահից յետոյ աստուածների շարքում կարգելը, ծառայում էին հռովմէական կայսրութեան վեհութեան գաղափարի արտայայտութեանը և հետևապէս հռովմէական պաշտամունքին յարգանք չտալը պէտք է պետութեան դէմ յանցանք համարուէր։ Հռովմէական պետութիւնը, ինչպէս և առհասարակ հին աշխարհը, չէր ճանաչում պետական օրէնքից բարձր որ և է նորմա, հրաման կամ օրէնք, և ոչ էլ անհատական խղճի իրաւունք։ Միւս բոլոր պաշտամունքներին հետևողները հռովմէական աստուածներին երկրպագելիս չէին զգում խղճի ճնշում, որովհետև հռովմէական պաշտամունքը չէր ձգտում մարդուս ներքին աշխարհի վրայ իշխել, տալով ցանկացողներին կատարեալ հնարաւորութիւն հետևել ցանկացած պաշտամունքներին (եգիպտական, փիւնիկական, փռիւգական և այլն), միայն թէ պաշտօնական կերպով հռովմէական կրօնին արտաքին յարգանք մատուցուէր։ Ընդհակառակը քրիստոնեաները, միշտ պատրաստ լինելով կայսրինը կայսրին տալ, Աստծու պատուէրի խանդարում էին համարում բացի ճշմարիտ Աստծուց որ

և է մեկին աստուածային երկրպագութիւն տալը, և մինոյն ժամանակ չէին կարող յենուել որ և է պատմական աւանդութեան վրայ, որ կարող լինէր յարգուել հռովմէացիներից, ինչպէս հրէական ժողովուրդը կարողացաւ յենուել նման աւանդութիւնների վրայ։ Հրէաները նոյնպէս անհնարին էին համարում խախտել Եհովայի պատուէրը. «Ես եմ քո Տէր Աստուածը, չպէտք է այլ աստուածներ ունենաս բացի ինձանից»։ Բայց նախ՝ հռովմէացին, որպէս մի պահպանողական ժողովուրդ, որ յարգում էր ամեն մի աւանդական պատմական կարգ, չէր կարողանում անտես առնել, որ թէպէտ հռովմէական իշխանութեամբ հրէական պետութիւնը ոչնչացուած էր, բայց հրէական կրօնը հին ժամանակներից ի վեր կապուած է եղել առանձին ազգութեան և առանձին քաղաքական կազմուածքի հետ։ Երկրորդ՝ հրէական կրօնը պաշտում էին միայն հրէաները. քիչ էր պատահում, որ այլ կրօններից այդ կրօնը նորադարձներ գրաւէր՝ երկիւղ ազդելով հռովմէական պետութեան ներկայացուցիչներին։ Քրիստոնէութեան նկատմամբ չէր կարելի ասել ոչ այս և ոչ էլ այն։ Քրիստոնէական համայնքները բաղկացած էին զանազան ազգութեան պատկանող անձերից և նոցա պատմական անցեալը Օգոստոս և Տիբերիոս կայսրներից այն կողմը չէր անցնում, որովհետև առաջինի օրով ծնուեց քրիստոնէական կրօնի Հիմնադիրը և երկրորդի օրով խաչուեց։ Յետոյ՝ քրիստոնէութիւնը մեծ արագութեամբ էր տարածւում, այնպէս որ պետական մարդիկ, որոնք հին հռովմէական կրօնի մէջ պետական կեանքի հիմք էին տեսնում, անհնար էին համարում թոյլ տալ պետութեան մէջ մարդկանց մի այնպիսի խումբ, որը սկզբունքով մերժում էր այդ կրօնը։ Ուստի ամենալաւ կայսրները, որոնք սիստեմաբար ձգտում էին հռովմէական կրօնի հիմունքի վրայ հաստատել տատանուող պետական կարգը, մի և նոյն ժամանակ քրիստոնեաներին սիստեմօրէն հալածողներն էին։ Իշխանութեան օրգանների համար քրիստոնեաների

դէմ քրէական դատ բաց անելու օրինական հիմք ծառայում էին lex Julia majestatis,[1] Կեսարի և Օգոստոսի օրէնքները արգելուած ընկերակցութիւնների դէմ և Մարկոս Աւրելիոսի հրովարտակը այն անձերի դէմ, որոնք նոր հերձուածքներ են կազմում և անյայտ կրօններ ներմուծում։ Վեհութեան դէմ գործած յանցանքի մասին եղած Յուլիոսի օրէնքը մահուան պատիժ կամ ունեցուածքը յարքունիս գրաւել էր սպառնում այն մարդկանց, որոնք հռովմէական ժողովրդի և նորա ապահովութեան դէմ թշնամականձեռնարկութիւններ էին հնարում. իսկ որովհետև կրօնը և նուիրական իրաւունքը պատկանում էին պետութեան հիմնական հաստատութիւններին (publicum jus in sacris, in sacerdotibus, in magistratibus consistit), ապա քրիստոնեաները, որոնց խիղճը արգելում էր մասնակից լինել հռովմէական կրօնի արարողութիւններին, կարող էին այդ օրէնքով դատի ենթարկուել, ևս առաւել որ կայսերական պաշտամունքին չմասնակցելու ցանկութիւնը մեծութեան դէմ վիրաւորանք էր համարւում։ Յուլիոս Կեսարի և Օգոստոսի՝ ընկերակցութիւններին վերաբերեալ օրէնքները, թէպէտ քրիստոնեաներին ի նկատի չունէին, բայց կարողացան սոցա վրայ ևս գործադրուել, քանի որ առ հասարակ արգելում էին ընկերակցութիւնների ապօրինի կազմուելը և մեծութեան դէմ գործած յանցանք համարելով այդ, սպառնում էին նոյն պատժին ենթարկել։ Իսկ Մարկոս Աւրելիոսի հրովարտակը, ինչպէս ենթադրում են, ուղղակի քրիստոնեաների դէմ էր ուղղուած։ Առհասարակ եթէ քրիստոնէական համայնքները առաջին 3 դարի ընթացքում կարողացան երբեմն հանդստութիւն վայելել, այդ հնարաւոր եղաւ մասամբ այն լուսաւոր ժամանակամիջոցներում, երբ հալածանքները մեղմանում էին և նոյն իսկ դադարում. մասամբ նաև հալածանքների ժամանակ, որչափ որ քրիս-

1 Յուլիոսի վեհութեան օրէնքը։

տոնեաներին յանձնում էր կառավարութեան առաջ օրինաւոր ձև ստանալ իբրև աղքատ մարդկանց և թաղման ընկերակցութիւնների (collegia tenuiorum collegia funeraticia). սրանց կազմուելը թաղման նպատակի համար հռովմէական պետութեան մէջ չէր արգելւում։ Հալածանքները վերջացան, երբ իշխանութիւնը քրիստոնեաներին ոչնչացնելու իւր անզօրութիւնը խոստովանեցաւ։ Այդ խոստովանութիւնը արտայայտուած է Գալերիոսի 311 թ. հրովարտակում, ուր յայտնուած էր, թէ քանի որ քրիստոնեաներին իրենց հայրենի կրօնին վերադարձնելու բոլոր ջանքերը ապարդիւն մնացին և որովհետև էլի լաւ է որ նրանք գոնէ մի կերպ ազօթեն պետութեան բարօրութեան համար, նրանց թոյլ է տալիս պահել իրենց կրօնը, այն պայմանով, որ նրանք չը խախտեն եղած կարգերը։ Դրանից 3 տարի յետոյ 313 թ. հրատարակուեց Կոստանդիանոսի և Լիկինիոսի Միլանի հրովարտակը, որի զօրութեամբ քրիստոնեաները ազատ եղան հեթանոսական աստուածպաշտութեանը մասնակցելուց, նոցա ընկերակցութիւնները թուլատրելի դառան՝ ստանալով իրաւունակութիւն,[1] և Մարկոս Աւրելիոսի հրովարտակը վերացուաւ։

---

§ 3. Պետութեան եւ եկեղեցու յարաբերութեան՝ բիւզանդական սիստեմի էական յատկանիշները:

Միլանի հրովարտակը՝ քրիստոնէական պաշտամունքին ազատութիւն շնորհելով և մի և նոյն ժամանակ միւս բոլոր պաշտամունքները չսահմանափակելով՝ հռովմէական պետութեան հպատակներին անպայման և անսահման ազատութիւն շնորհեց այս կամ այն կրօնը ընդունելու և դաւանուելու։ Բայց անսահման կրօնական ազատութեան այդ սկզբունքը գործնականօրէն չը իրագործուեց

1 Правоспособность.

որովհետև հռովմէական կայսրների աւանդական քաղաքականութեան հետ չէր հաշտւում, և քրիստոնէական եկեղեցու նուիրապետութեան[1] մէջ յենարան չգտաւ։ Քրիստոնեայ կայսրները կամենում էին քրիստոնէական կրօնի մէջ պետական կեանքի նոյնպիսի ընդհանուր հիմք տեսնել, ինչպիսին հեթանոս կայսրները տեսնում էին հռովմ հեթանոս պաշտամունքի մէջ։ Այսպէս ղից ծագեց կայսրների ձգտումը կայսրութեան մէջ կրօնական միութիւն հաստատել։ Սակայն այդ անհնարին էր ոչ նորա համար միայն, որ ժողովրդի մի մասը, մանաւանդ բարձր դասակարգի մէջ, հեթանոս մնաց, ինչպէս որ հրէաներն էլ իրենց կրօնը պահեցին, այլ և նորա համար, որ հէնց քրիստոնէութեան մէջ երևան եկան կրօնական մտքի զանազան ուղղութիւններ։ Ուստի յիշեալ ձգտումը պէտք է կրօնական ճնշում առաջ բերէր։ Քրիստոնէութիւնը, և իսկապէս ընդհանրական քրիստոնէութիւնը, հռովմէական կայսրութեան մէջ պէտք է դառնար ոչ միայն ազատ դաւանելի կրօն, այլ բացառապէս տիրող կրօն։ Յուլիանոսի օրով հեթանոսութեան վերականգնելը մի կարճատև միջնադէպ էր, որը պատմութեան ապագայ ընթացքի համար նշանակութիւն չունեցաւ։ Քրիստոնեայ կայսրը, որ եկեղեցու կարգի դլուխ էր, նախապատրաստուած չէր եկեղեցու և պետութեան շրջանները միմեանցից զանազանելու. ընդհակառակը՝ հաւատարիմ մնալով աւանդական, նուիրական իրաւունքի վրայ եղած հռովմէական հայեացքին, որով այդ իրաւունքը պետութեան juris publici (հանրային իրաւունքի) բաղկացուցիչ մասն էր համարւում, նա քրիստոնէական եկեղեցու կրօնական հարցերը համարում էր պետական կարգի հարցեր, և դրանց լուծելու համար դիմում էր ստիպողական, սովորական միջոցների։ Այն հայեացքը, թէ ստիպողութիւնը անհրաժեշտ է, ընդհանրապէս լիովին

1 Іерархія.

ընդունուեցաւ և եկեղեցու նուիրապետութեան կողմից։ Պետութեան և եկեղեցու յարաբերութեան բիւզանդական սիստեմի էութիւնը, կամ ինչպէս Արևմուտքում ընդունուած է անուանել՝ բիւզանդականութիւնը (բիւզանտինիզմ), որի հիմքերը դրել էր դեռ Կոստանդին Մեծը, հաստատել Թէոդոսիոս Մեծը, մանրամասն կերպով զարգացրել էր Յուստինիանոսը, և որոնք 10-րդ դարում հասել էին որոշ կատարելութեան և մշակութեան, կարելի է ներկայացնել հետևեալ կէտերով։

1. Պետութիւնը և եկեղեցին կազմում են մի մարմին—պետութիւն, միացած ընդհանուր քրիստոնէական կրօնով։ Պետութեան և եկեղեցու օրգանական ձուլման շնորհիւ՝ ով որ չի պատկանում եկեղեցուն պետութեան մէջ գոյութիւն ունենալու իրաւունք չունի։ De facto, ի հարկէ, պատմութեան մէջ երբէք գոյութիւն չէ ունեցել այնպիսի մի բոպէ, երբ եկեղեցա—պետական միութիւնը լիովին իրականացած լիներ, երբ բոլոր հպատակները առանց բացառութեան դաւանէին մի և նոյն կրօնը, իսկ բոլոր այլակրօնները առանց բացառութեան զրկուած լինէին քաղաքական իրաւունակութիւնից. բայց եկեղեցա—պետական միութիւնը մնաց միշտ իբրև իդէալ, որին կառավարութեան քաղաքականութիւնը ձգտում էր հասնել։ Սակայն քանի որ տիեզերական ժողովների ժամանակ ուղղափառութիւնը մշակուած և որոշուած դաւանական ֆորմուլաների մի ամբողջութիւն չէր և կրօնական կուսակցութիւնների խիստ ընդհարման միջոցին կայսրները շատ անգամ անցնում էին սխալ մտածող կուսակցութեան կողմը, որը նոքա բարեմտօրէն ուղղափառութիւն էին համարում, ուստի եկեղեցա—պետական միութեան քաղաքականութիւնը այդպիսի դէպքերում պատճառ էր դառնում ուղղափառ եկեղեցին հալածելու։ Այսպէս օրինակ, Կոստանդին Մեծի որդու, Կոստանտիոսի օրով արիոսականութիւնը պետական կրօն էր, իսկ ուղղափառ վարդապետութեան հետևողները անընդհատ հալածանքի

ենթարկուում։ Նոյնն էր և միաբնակ, միակամ և պատկերամարտ կայսրների օրով։

2. Կայսրը անձամբ ոչ մի սահման չէր դնում եկեղեցական և պետական կարգի մէջ։ Կոստանդին Մեծը իրեն անուանեց «արտաքին եպիսկոպոս», որպէս զի տարբերուի ներքին եպիսկոպոսներից, որոնք նուիրապետութեան բարձր ներկայացուցիչներն էին. իսկ եկեղեցական պատմագիր Եւսեբիոսը՝ խօսելով Կոստանդին Մեծի այդ դարձուածքի մասին, նորան անուանեց ընդհանուր եպիսկոպոս։ Յետոյ, ինչպէս կայսրները իրենց, նոյնպէս էլ եպիսկոպոսները և նոյն իսկ ժողովները կայսրներին անուանում էին թագաւոր—քահանայապետներ (βασιλεῖς ἀρχιερεῖς)։ Իսկ Լևոն Իսաւրացին և Կոստանդին Կոպրոնիմոս կայսրները Պօղոս առաքեալի օրինակով իրենց էին վերագրում քրիստոնէական հաւատացեալ հօտը հովուելու առաքելութիւնը։ Այդ բոլոր և նման դարձուածքների մէջ երևում է մի և նոյն միտքը, թէ կայսրը ոչ միայն եկեղեցական գործերի մասին է հոգում հաւասար պետականին, այլ և իրեն պատկանող պետական իշխանութեան բոլոր միջոցներով առաջնորդում է պետական կեանքը եկեղեցու հայեացքների համաձայն։ Իրենց օրէնքներով կայսրները ձգտում էին նոյն նպատակին, որին ձգտում էր և եկեղեցին. այդ էր գոնէ իդէալը, որի իրագործման էր ուղղուած կառավարութեան քաղաքականութիւնը, թէպէտ իրականութիւնը կրկին լիովին չէր համապատասխանում այդ իդէալին։ Նախ՝ մի քանի յարաբերութիւնների մէջ, օրինակ ամուսնական գործերում, պետութեան տենդրութիւնը հաղիւ հաղ աստիճանաբար և շատ դանդաղ համաձայնեցնում էին եկեղեցու պահանջներին և հայեացքներին և, թէպէտ սկզբունքով անկասկածելի էր համարուում, որ օրէնքների և կանոնների ընդհարման ժամանակ վերջինները գերադասուում են առաջիններից, բայց կայսրները չէին քաշուում կանոններին անհամաձայն օրէնքներ հրատարակել. իսկ կանոնագէտները

չէին քաշւում բացատրել, որ կայսերական աւելի յետագայ օրէնքներով հնագոյն կանոնները վերացւում են։ Երկրորդ, կայսրների կողմից հաւատի դաւանանքների հարցերին խառնուելու անյաղող յաճախակի փորձերը, հերետիկոս կուսակցութիւններին արած բացարձակ օժանդակութիւնը և միւս կողմից ընդհանրական վարդապետութեան և դորա հետևողների հալածանքները եկեղեցու նուիրապետութիւնը հասցրին այն մտքին, որով կայսրների քահանայապետութիւնը բոլորովին մերժւում էր։ Արդէն 4-րդ դարից սկսած նուիրապետութեան առանձին հեղինակաւոր ներկայացուցիչները սկսեցին ոչ միայն քահանայութիւնը (sacerdotium, ἱερωσύνη) հակադրել կայսերական իշխանութեան (imperium βασιλεία), այլ սրանից բարձր դասել՝ համեմատելով, թէ ինչպէս հոգին գերազանց է մարմնից, ոգին նիւթից և երկնայինը երկրայինից, նոյնպէս էլ քահանայութիւնը առաւել է կայսրութիւնից։ Նոյն միտքը արտայայտել էին Օսիա Կորդուբացին, Գրիգոր Նազիանզացին, Ամբրոսիոսը, Ոսկեբերանը և այլք։ Միակամների վէճի ժամանակ Մաքսիմ խոստովանողը և Սովրոնիոս Երուսաղէմացին, իսկ պատկերամարտութեան ժամանակ Յովհաննէս Դամասկացին և Թէոդոր Ստուդիտ հակառակելով կայսրի՝ հաւատի դոգմաներին խառնուելուն, որոնցից նա ոչինչ չէր հասկանում, պահանջում էին կայսերական և եկեղեցական իշխանութեանց մէջ խիստ որոշում և նոյն իսկ պառակտում հաստատել. բայց մի և նոյն ժամանակ պարտաւորացնում էին, որ կայսրը եղած ուղղափառութիւնը պաշտպանէ։ Արդէն Յուստինիանոսը ուշադրութիւն դարձրեց այն դարձուածքների (տերմինոլոգիայ) վրայ, որ որոշում էին կայսրութիւնը քահանայութիւնից։ Իւր 4-րդ նովելլայի (օրէնքի) յառաջաբանում նա խօսում է երկու մեծ ձիրքերի, այն է քահանայութեան և կայսրութեան մասին, որ ի վերուստ տրուած են մարդկանց։ Բայց Յուստինիանոսը հեռու էր այն մտքից, թէ նուիրապետութեան որ և է առանձին ներկայացուցիչ հա-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
Мясникян
1005
90396

սասար է կայսրին. աւելի ևս հեռու էր [illegible], թէ հոգևոր իշխանութիւն կրողը դերազանց կան, որպէս աշխարհական իշխանութիւն վարողից։ Դահանայութիւնը Յուստինիանոսի խօսքերի համաձայն պէտք է ծառայէ աստուածպաշտութեան, իսկ կայսերական իշխանութիւնը մարդկանց համախմբութեան մէջ կարգ հաստատէ. այնպէս որ նոյն իսկ կրօնի դաւանանքների պահպանութեան և քահանայական պաշտօնի արժանավայել ընթացքի հոգացողութիւնը կայսերական կառավարութեան շրջանի մէջ է մտնում։ 9-րդ դարի վերջում, այսպէս անուանուած Էպանագոգէի[1] մէջ (հրատարակուած է Վասիլ Մակեդոնացու օրով) նկատւում է քահանայութիւնն ու կայսրութիւնը միմեանցից տարբերելու դաղափարի յետագայ զարգացումը, որ կատարուել է բիւզանդական հողի վրայ։ Եթէ Էպանագոգէն նոյն իսկ մնացած լինէր իբրև օրէնքի նախագիծ առանց օրէնքի ոյժ ստանալու, ինչպէս ենթադրում են մի քանի հեղինակաւոր բիւզանդագէտներ, դարձեալ պաշտօնական վկայագրի նշանակութիւն ունի, ևս առաւել որ ենթադրելու հիմքեր կան, թէ նշանաւոր Փոտ պատրիարքը մասնակցել է Էպանագոգէն կազմելուն։ Էպանագոգէի մէջ երկու յատուկ տիտղոս կայ, մէկը թագաւորի (περὶ βασιλέως), միւսը պատրիարքի համար (περὶ πατριάρχου)։

9-րդ դարու վերջում, երբ Աղէքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղէմի՝ արևելեան այս երեք պատրիարքները, որ Կ. Պոլսին հաւասար իրենց նշանակութիւնը արդէն կորցրել էին, կայսրութեան սահմանից դուրս եկան, բիւզանդական օրէնսդիրը կարող էր խօսել միայն Պոլսի պատրիարքի մասին և նորան բիւզանդական քահանայութեան գլուխ համարել։ Իսկ այդ ժամանակ միակամների

1 Ἐπαναγωγή—Էպանագոգէ—օրէնսդրութիւնը հրատարակուեց 884—886 թուին. սակայն տակաւին ստուգուած չէ, արդեօք պարտադիր օրէնքի, թէ լոկ օրինագծի զօրութիւն է ունեցել այդ։ Ծ. Խ.

և պատկերամարտների շփոթութիւնները կայսերական իշխանութիւնից անկախ քահանայութեան դաղափարի զարդացման համար շատ առիթ ներկայացրին. կա առաւել, որ հերետիկոսութիւնների դէմ մարտնչողները, ինչպէս են Մաքսիմ խոստովանողը և Թէոդոր Ստուդիտը, Հռովմի հետ սերտ հաղորդակցութիւն ունէին, ուր այդ ժամանակ արդէն շատ որոշ հայեացքներ էին կազմուել հոգևոր և աշխարհական իշխանութիւնների մասին (տես հետևեալ §)։ Էպանագոգէն չի ճանաչում եկեղեցին և պետութիւնը ինչպէս 2 համախմբութիւններ. եկեղեցին և պետութիւնը կազմում են մէկ եկեղեցա—պետական կարգ, որի գլուխն են թագաւորը և պատրիարքը։ Թագաւորը կառավարում է մարմինը, իսկ պատրիարքը հոգին։ Թագաւորը հատուցանում է իւրաքանչիւրին իւր ծառայութեան համապատասխան, անխոնջ հոգ է տանում պետութեան եղած ոյժերը պահպանելու և կորածը վերադարձնելու կամ անհրաժեշտը ձեռք բերելու մասին։ Թագաւորը պէտք է պաշտպանէ և կատարէ Ս. Գրքի բոլոր դրուածները, 7 սուրբ ժողովներից հաստատուածը, նոյնպէս և հռովմէական օրէնքները։ Թագաւորը պէտք է աչքի ընկնի իւր ուղղափառութեամբ, բարեպաշտութեամբ, և Երրորդութեան, Աստուծոյ որդու մարմնառութեան, Աստուածութեան երեք անձնաւորութեան համագոյակից լինելու, Քրիստոսի անմիասնական և անբաժանելի միաւորութեան, մի անձն և երկու բնութիւն, երկու կամք և երկու ազդեցութիւն ունենալու վերաբերեալ դաւանանքների նկատմամբ հաչակուի իւր աստուածային նախանձախնդրութեամբ։ Թագաւորը պէտք է բացատրէ նախկին օրէնքները և դրանց պակասները լրացնէ՝ թոյլ տալով սովորոյթի գործադրութիւնը, բայց չթողնելով որ կանոններին որ և է հակառակ բան ներմուծուի։ Քրիստոսի կենդանի պատկերն է պատրիարքը, որը ճշմարտութիւնը թէ գործով և թէ խօսքով երևան է հանում։ Աստծուց նորան յանձնուած մարդկանց նա պէտք է բարեպաշտութեան և առաքինի կեանքի մէջ պահէ, բոլոր հերձուածողներին ըստ կարելոյն ուղղափառ դարձնէ և եկեղեցուն միացնէ, իսկ անհաւատներին հաւատի բերէ՝ աղերով նոցա վրայ իւր վեհ, բոլորի համար ակներև և զարմանալի վարք ու բարքով։ Պատրիարքի նպատակը նորան յանձնուած հոգիների փրկութիւնն է. միայն պատրիարքին է պատկանում մեկնաբանել, ինչ որ սուրբ հայրերն և ժողովներն հաստատել են։ Թէ հեղինակը ինչպէս էր ներկայացնում իրեն եկեղեցա—պետական կարգի երկու մեծ իշխանութեանց համեմատական աստիճանը, կատարելապէս պարզ չէ։ Ըստ երևոյթին՝ թագաւորը և պատրիարքը հաւասար բարձրութեան վրայ են կանգնած. բայց քանի որ թագաւորին յատկացնում է մարմնի մասին հոգալ, իսկ պատրիարքին հոգու մասին (իսկ թէ հոգին առաւել է մարմնից, այդ մի ակսիոմայ էր, որ ոչ մի կասկածի չէր ենթարկուում), որովհետև թագաւորը իրաւունք չունի կանոններին որ և է հակառակ բան ներմուծել, իսկ կանոնները միայն պատրիարքը կարող է մեկնաբանել՝ որպէս Քրիստոսի կենդանի պատկեր և ճշմարտութիւնը իւր մէջ կրող մի անձն, ապա այս բոլորից կարելի է եզրակացնել, որ պատրիարքին աւելի բարձր դիրք է տրուում քան թագաւորին։ Էպանագոգէի դաղափարները, եթէ այդ ինչպէս օրէնադրական կոդէքս հրատարակուած և յայտարարուած էլ լինէր, Բիւզանդիայում իրենց համար գործնական հող չունեցան, և իրենք կանոնագէտներն էլ, ինչպէս օրինակ Բալսամոնը իւր «պատրիարքական արտօնութիւնների մասին խորհրդածութիւններ»-ի և կանոնների մեկնութեան մէջ, այլ կերպ էին նկարագրում թագաւորի դիրքը՝ տալով սորան թէ վարդապետական և թէ քահանայական պատիւ՝ հոգալ հպատակների հոգու և մարմնի մասին և օրէնքներով կանոններ վերանորոգել։ Էպանագոգէի դաղափարները գործադրուեցան միայն միջանկեալ կերպով առանձին պատրիարքների գործունէութեան շրջանում, երբ հանգամանքները պատ-

բիարքի համար լաւ ընթացք էին ընդունում, իսկ կայսրների համար անյաջող. բայց յամենայն դէպս այդ բաները ցոյց են տալիս, որ եկեղեցա—պետական մարմնի (օրգանիզմի) միութիւնը՝ գլուխ ունենալով քահանայութիւնը և կայսրութիւնը, Բիւզանդիայում էլ կարող էր հիերոկրատիկ հայեացք յառաջ բերել։

3. Բիւզանդիայի եկեղեցա—պետական կարգի մէջ եպիսկոպոսները, ինչպէս բարձրագոյն ներկայացուցիչներ կղերի, որը պետութեան մէջ արտօնեալ դասակարգ դառաւ, ստացան պետական ընդարձակ դատաստանական և վարչական իրաւազօրութիւն։ Թէպէտ այն ընդարձակ իրաւասութիւնը քաղաքացիական գործերի վերաբերմամբ, որ Կոստանդին Մեծը 321 և 331[1] թուականներին երկու օրէնքով յանձնել էր եպիսկոպոսներին, բիւզանդական իրաւունքի մէջ երկար չմնաց. բայց երբ այդ օրէնքները դադարեցին գործելուց, եպիսկոպոսներին էլի մնաց դատաստանական գործունէութեան (судебная компетенція) մի մեծ շրջան՝ առանձնապէս հոգևորականների գործերի նկատմամբ։ Ապաստան տալու (jus asyli)[2] և

1 321 թուի օրէնքը իրաւունք էր տալիս բոլոր դատաւորներին փոխադարձ համաձայնութեամբ ամեն մի քաղաքացիական գործ ներկայացնել եպիսկոպոսի դատաքննութեանը. եպիսկոպոսի վճիռը, մի քանի բացառութիւններով, վերջնական և անբողոքելի ոյժ ունէր։ 331 թուի օրէնքը—բացարձակապէս վերջնական և անբողոքելի յայտարարեց եպիսկոպոսների դատավճիռները, վերացնելով մինչև այդ ժամանակ եղած բոլոր բացառութիւնները։ Բացի դրանից դատաւոր կողմերից իւրաքանչիւրին իրաւունք էր տրւում գործը եպիսկոպոսի դատաստանին յանձնել նոյն իսկ այն դէպքում, երբ դատաւոր միւս կողմը անհամաձայն և գործը պետական դատարանում արդէն սկըսուած լինէր, միայն եթէ դատավճիռը դեռ չէր գրուած եղել։ Ծ. Խ։

2 Ապաստանի իրաւունքի (jus asyli) հիման վերայ եպիսկոպոսները եկեղեցիներում ապաստան էին տալիս դատական և վարչական հալածանքից փախչողներին. քրէական պատժից այս կերպ խոյս տալով՝ յանցաւորները ենթարկւում էին եկեղեցական ապաշխարութեան։ Ծ. Խ։

միջամտելու (jus intercessionis) իրաւունքը,[1] որ պատկանում էր եպիսկոպոսներին, նոցա առաջ ճանապարհ էր բաց անում քրէական իրաւարարութեան[2] ընթացքի վրայ ազդելու։ Մաղթանք և խաչ կանգնեցնելու կրօնական արարողութիւնը կատարելով՝ եպիսկոպոսները կեանքի էին կոչում եկեղեցական հաստատութիւններ, ինչպէս քաղաքացիական իրաւունքի իրաւաբանական անձեր[3]։ Եպիսկոպոսը քաղաքային իշխանութեան[4] և քաղաքի նշանաւոր անձանց հետ միասին նշանակում էր երեխաների համար խնամակալներ, անչափահասների և խելագարների աղջիկներին օժիտ իսկ տղաներին ամուսնական նուէր (propter nuptias donatio): Նա իրաւունք ունէր քաղաքային վարչութեան պաշտօնեաներ ընտրել և նոյն իսկ դաւառապետի պաշտօնի համար արժանաւոր թեկնածու ցոյց տալ։ Եպիսկոպոսը պատուաւոր քաղաքացիների հետ ստուգում էր քաղաքների եկամուտների գործադրութեան նպատակայարմար լինելը, հաշիւ էր առնում կառավարիչներից, հետևում էր, որ բնակիչների մէջ ջուրը հաւասար բաժանուի, չէր թոյլ տալիս, որ կամայական տուրքերով և պարտականութիւններով քաղաքացիներին ապօրինի կերպով ծանրաբեռնեն։ Եպիսկոպոսները քաղաքացիական վարչութիւններին հաւասար իրաւունք ունէին ուրիշների իշխանութեան տակ գտնուած իգական սեռի անձնաւորութիւններին (աղջիկներին և ստրկուհիներին) պաշտպանել, որպէս զի չստիպեն նոցա անառակ կեանք վարել. հսկել բանտերի վրայ. չորեքշաբթի և ուրբաթ

1 Միջամտելու իրաւունքը—հասարակ բարեխօսութիւն չէր, այլ մի գօրաւոր միջամտութիւն, որով եպիսկոպոսը քրէական դատաստանին ենթակայ և որոշ պատժի դատապարտուած յանցաւորներին ազատ էր կացուցանում պետական իշխանութեան ձեռքից և ինքն էր ենթարկում դրանց եկեղեցական ապաշխարութիւն։ Ծ. Խ։

2 Уголовное правосудіе.

3 Юридическое лицо.

4 Городское начальство.

օրերը այցելել նոցա, հարց ու փորձ անել բանտարկեալներին բանտ նստելու պատճառի մասին. դիտել՝ արդեօք բանտերի մէջ նոցա մարդասիրութեամբ են պահում և դատաւորական իշխանութիւններին[1] ենթարկուած նոցա գործերը իւր ժամանակին են քննում և այլն... Եպիսկոպոսները նոյն իսկ վերահսկում էին դատաւորների փոխանորդների գործունէութեան ձևին և եթէ վերջինները ընակիչներին ճնշում էին, նոքա՝ մանաւանդ իրաւարարութեան մերժման դէպքում, պէտք է յայտնէին կայսրին. եպիսկոպոսները նմանապէս հետամուտ էին լինում առհասարակ բոլոր դատաւորների և աստիճանաւորների գործունէութեան եղանակին։ 10-րդ դարից յետոյ եպիսկոպոսներին և կրօնաւորներին[2] բարձր պալատական և պետական պաշտօններ յանձնելը բաւական սովորական երևոյթ էր դարձել։ Բացի դրանից դահի ժառանգման համար օրինական հաստատուն կարգ չլինելու պատճառով և հարստութիւնների յաճախակի փոփոխման շնորհիւ՝ հոգևորականութիւնը Կ. Պոլսի պատրիարքին գլուխ ունենալով՝ հնարաւորութիւն ստացաւ զօրեղ կերպով ազդելու կայսրների գահակալման վրայ, մանաւանդ երբ թեկնածուն ուղղափառ չէր լինում, այլ որ և է հերետիկոս։

4. Ընդհակառակը՝ պետութեան օրգանները պէտք է հսկէին եկեղեցական կարգապահութեան[3] օրէնք դարձած հրամանագրութիւնների կատարման վրայ։ Յուստինիանոսի 6-րդ նովելլան, որ պարունակում է իւր մէջ հոգևոր կարգապահութեան վերաբերեալ զանազան հրամաններ, ուղղուած էր ոչ միայն պատրիարքներին ի գիտութիւն և ի կատարումն, այլ և պրետորիաների պրեֆեկտներին և, որ աւելի ևս նշանաւոր է, 123-րդ նովելլան, որ կարելի է կանոնական իրաւունքի համառօտութիւն

1 Судебная власть.
2 Монахъ.
3 Дисциплина.

համարել (compendium juris canonici), ուղղակի պետական բարձր աստիճանաւոր Պետրոսին էր ուղղուած (magister sacrorum officiorum), որի վրայ պարտականութիւն էր դրուում հսկել այդ նովելլայի մէջ եղածի ընդհանուր կատարման վրայ։ Իսկ 127-րդ նովելլայում, որ ուղղուած էր նոյն պետական աստիճանաւորին, դատական փոխանորդներին յանձնարարուում է՝ հետևել այդ նովելլայի մէջ եղած օրէնքների կատարմանը, որ վերաբերում են եպիսկոպոսների և առհասարակ հոգևորականների ձեռնադրութեանը. այսինքն թեկնածուի ընտրութեանը, նոքա դէմ յայտնուած մեղադրանքների քննութեանը և այլն,—և առանձնապէս հսկել, որ մետրապոլիտները տարեկան ժողովներ գումարեն. այլ և քաղաքացիական վարչութիւններին ծանր պատիժ սպառնալով հրամայուում է՝ յորդորել մետրապոլիտներին և եպիսկոպոսներին ժողովներ կազմել. իսկ այդ յորդորանքների անյաջողութեան դէպքում յայտնել կայսրին։ Պատրիարքական սինոդի նիստերին ներկայ էին լինում և պետական բարձր աստիճանաւորներ։

---

§ 4. Եռանելի Օգուստինոսի աշխարհայեցողութիւնը իբրեւ տեսական հիմք միջին դարի հիէրոկրատիկ սիստեմի։

Այն գաղափարը, թէ ինչպէս հոգին առաւել է մարմնից, ոգին նիւթից և երկնայինը երկրայինից, նոյնպէս էլ քահանայութիւնը թագաւորութիւնից, որ արևելքում զանազան անձինք զանազան ժամանակներում և զանազան առիթով արտայայտած էին, 5-րդ դարի սկզբում ամբողջ սիստեմի վերածեց արևմտեան լատին եկեղեցու վարդապետ, Հիպպոնի եպիսկոպոս (հիւսիսային

Ավրիկայում) երանելի Օգուստինոսը։ Սորա աշխարհայեցողութիւնը շարադրուած է իւր զանազան գրուածքներում, գլխաւորապէս «Աստուածային թագաւորութեան մասին» հռչակաւոր գրուածքում (De civitate Dei): Այդ երկի 22 գրքերում Օգուստինոսը հետևողական կերպով զուգնթացաբար առաջ է բերում երկու թագաւորութիւն, այն դուալիզմը, որը սկսուեց դեռ ստեղծագործութեան առաջին օրերում, երբ հոգիները բաժանուեցան բարիներից, և սկսած Ադամի որդիներից, Կայէնից և Աբելից, շարունակուեց մարդկային սեռի ամբողջ պատմութեան ընթացքում։ Երկրային թագաւորութեան (civitas terrena) նպատակը միայն երկրային բարօրութիւնն է, ասում է նա. այդ նպատակին ձգտում է նաև ոչ քրիստոնէական պետութիւնը, որը միայն այդ չափով էլ քրիստոնեաներին իրեն հպատակեցնելու իրաւունք ունի, որովհետև աստուածային թագաւորութիւնն էլ (civitas Dei) իւր երկրային արտայայտութեան մէջ կարիք ունի երկրային թագաւորութեամբ ապահովուած խաղաղութեան։ Բայց մի պետութիւն, որ միայն այդ նպատակին է ձգտում, նոյնքան մեղանչական է, որքան առհասարակ իւրաքանչիւր մարդու բացառիկ ձգտումը դէպի միայն երկրային բարօրութիւնը։ Այն պետութիւնը, որ ցանկանում է յենուել միայն իւր վրայ, անջատուում է Աստծուց, սուտ աստուածներին, դևերին դերադասում է ճշմարիտ Աստծուց, դառնում է սատանայի թագաւորութիւն (civitas diaboli), և այդպիսով չի կարող նոյն իսկ միայն երկրային նպատակին հասնել։ Երջանկութեան (felicitas) և խաղաղութեան (pax) փոխարէն թագաւորում են միայն թշուառութիւններ (miseria) և կռիւ (bellum). պետութիւնը դառնում է մի աւազակային մեծ ընկերշակութիւն (magnum latrocinium). ուր բացակայում է ճշմարիտ աստուածպաշտութիւն, արդարութիւն և սէր դէպի մերձաւորը։ Այդպիսի պետութեան մէջ չի կարող լինել ոչ մի առաքինութիւն, բացի այն կարծեցեալ կամ կեղծ առաքինութիւններից, որ էութեամբ փայլող արատներ են։ Դևի իշխանութեանը չենթարկուելու համար, երկրային պետութիւնը պէտք է ծառայէ երկնայինին—եկեղեցուն. այսինքն իւր օրէնսդրութեան և ամբողջ դարձուածքի մէջ առհասարակ պէտք է համակերպուի եկեղեցու պատուէրներին, պէտք է արգելէ և պատժէ ինչ որ հակառակ է աստուածային պատուէրներին և ամենից առաջ իւր ստիպողական միջոցները պէտք է դարձնէ կռապաշտութեան, հերետիկոսութիւնների և հերձուածների դէմ. որովհետև ստիպողական ոյժը այսպիսի դէպքերում բարիներին պահպանում է դայթակղութիւնից, տատանուողներին և անգէտներին խելքի է բերում, իսկ չարերին պատժում է։ Հէնց այդ է թագաւորների կողմից՝ Աստծուն ծառայելը, որպէս թագաւորների և ոչ թէ մասնաւոր մարդկանց. որովհետև թագաւորը Աստծուն այլ կերպ է ծառայում, հասարակ մարդը այլ կերպ։ Նոյն սկզբունքներին համաձայն պէտք է կառավարէ նաև քրիստոնեայ կայսրը. հակառակ դէպքում նորա պետութիւնը կլինի սատանայի թագաւորութիւն։ Սակայն կայսրը չպէտք է իւր սեփական դատողութեամբ որոշէ, թէ որն է Աստծու կամքը, այլ եկեղեցու կամ, ուրիշ խօսքով, եկեղեցին ներկայացնող քահանայութեան[1] յուցմունքներով. որովհետև քահանայութեան ձեռքին են այն շնորհատու միջոցները, առանց որոնց ոչ ոք չի կարող փրկուել։ Ուրեմն Աստծու կամքը եկեղեցու կամքն է, իսկ եկեղեցու կամքը քահանայութեան կամքն է։ Եթէ պետութեան օրէնքները համաձայն են եկեղեցու պատուէրներին, այն ժամանակ հպատակները պէտք է հնազանդ լինին օրէնքներին, ինչպէս Աստծու կամքին. որովհետև այդ դէպքում Քրիստոս ինքն է հրամայում կայսրի միջոցով։ Իսկ եթէ ընդհակառակը կայսերական հրամանները հակառակ են եկեղեցու պատուէրներին, հետևապէս հակառակ են և աս-

---

1 Священство.

տուածային պատուիրանին, քրիստոնեան էլ չպէտք է հնազանդուի դրանց. որովհետև Աստծու պատուիրանները բարձր են կայսերական օրէնքներից։ Այսպիսով Օգուստինոսի սիստեմի մէջ աշխարհական իշխանութիւնը զբրկուում է ոչ միայն հոգևոր և նուիրական ընաւորութիւնից, այլ և այն ինքնուրոյն առաքելութիւնից (արդարութիւն հատուցանել և աստուածային աշխարհակալութեան օրդան լինել), որի մասին խօսել են առաքեալները. իսկ Աստծու կամքը նոյնանում է քահանայութեան կամքին։ Այն ժամանակ, երբ Օգուստինոսի դաղափարները հանդէս եկան, դեռ հնարաւորութիւն չունէին գործնական կերպով իրականանալու և կայսրներին ու թագաւորներին նուիրապետութեան հեղինակութեանը հպատակեցնելու. որովհետև հռովմէական կայսրութեան աւանդութիւնները աւելի զօրեղ էին, քան ս. հօր տեսական հայեացքները։ Բայց այդ հայեացքները, որ Օգուստինոսը տրամաբանօրէն յօրինեց և պարզ կերպով ձևակերպեց, յետագայում միջին դարի մեծ պապերի համար ծրագիր դարձան. նոքա ձգտում էին այդ իրագործել, որի համար ճարպիկ կերպով և նոյն իսկ հարկադրուած օգտուում էին պատմական անցքերից։ Օգուստինոսի հայեացքները այս մտքով դարձան «տիեզերական պատմութեան ապագայ զարգացման տեսական հիմքը» (Niehues):

---

§ 5. Միջին դարի հիէրոկրատիկ[1] սիստեմը:

Աստուծքի պատմական զարգացման առանձնայատկութիւնները, իսկ մանաւանդ երկու չափազանց կարևոր նշանակութիւն ունեցող պատմական հանգամանք հնարաւոր դարձրին նուիրապետութեան բարձրագոյն ներկայացուցիչների-Հռովմի եպիսկոպոսների-համար երանելի Օգուստինոսի կրօնա-քաղաքական դաղափարների իրականացումը։ Այդ երկու անցքերից մէկը պապերի քաղաքական վերապետութեամբ[1] եկեղեցական պետութեան[2] հիմնադրութիւնն է առանձին տերրիտորիումի (երկրի) սահմանում, և միւսը հռովմէական կայսրութեան վերականգնիլը նախ յանձին ֆրանկների թագաւոր Կարլոս Մեծի, իսկ յետոյ, Կարոլինգեան տան անկմամբ, յանձին գերմանական թագաւորների։ Եկեղեցական պետութիւնը կազմուեց մասամբ հողերի այն բազմութիւնից, որ հնուց հռովմէական եկեղեցու սեփականութիւնն էին, իսկ դլխաւորապէս Իտալիայի այն մասից, որը իրաւունքով դտնուում էր Բիւզանդիայի կայսրի ծայրագոյն իշխանութեան տակ (Ռավէննայի էկզարխատը), սորանից նուաճել էին Լոմբարդացիք, իսկ սոցանից կրկին խլել էր Պիպին Կարճահասակը և վերջը ընծայել էր Ս. Պետրոսին, այսինքն Հռովմէական եկեղեցուն։ Հռովմի եպիսկոպոսը իւր պետութեան մէջ միապետ դառնալով՝ իրեն աւելի ամուր հողի վրայ էր դտնում, քան այն դէպքում, եթէ մի այլ միապետի հպատակ մնար։ Հռովմէական կայսրութեան վերականգնումը կայսերական կոչմանը յատուկ այն դաղափարի հետ, թէ կայսրը պէտք է պաշտպան լինի ընդհանրական եկեղեցու (advocatia ecclesiae), նոյնպէս նպաստեց հիէրոկրատիկ դաղափարի յաղթանակին։ Եկեղեցու պաշտպանութեան դաղափարը ինքն ըստ ինքեան չպէտք է անհրաժեշտօրէն այդ հետևանքին հասցնէր. քանի որ մի եկեղեցա-պետական կարդը և այդ կարդի հիմքը-ընդհանրական հաւատը-պաշտպանում էին և քրիստոնեայ հռովմէական կայսրները, որոնք սակայն այդ դաղափարը իրագործում էին ինքնակալ[3] կերպով և ոչ թէ

---

1 Іерократическій

1 Политическій суверенитетъ.
2 Церковное государство.
3 Самодержавный.

նուիրապետութեան հեղինակութեանը ենթարկուելով։ Արևմուտքում հռովմէական վերականգնած կայսրութեան առաջին կայսրը, Կարլոս Մեծը, նոյնպէս հետևեց Կոստանդինի, Թէոդոսի և Յուստինիանոսի օրինակին՝ պահելով իւր ձեռքում կայսրութեան թէ պետական և թէ եկեղեցական գործերի բարձրագոյն կառավարութիւնը։ Թէ պետական և թէ եկեղեցական կարգի գլուխ կանգնած էր կայսրը, որի վերաբերմամբ եպիսկոպոսները նոյնպիսի օգնականներ էին հոգևոր կառավարութեան շրջանում, ինչպէս կոմսերը՝ աշխարհական կառավարութեան. և Հռովմի եպիսկոպոսին աւելի բարոյական քան իրաւական[1] բարձրագոյն հեղինակութիւն էին տալիս։ Պապը, նոյն իսկ որպէս Կարլոս Մեծի հօրից նորան շնորհուած տերրիտորիումի աշխարհական պետ, անկախ դիրք չունէր Կարլոսի նկատմամբ, որ կայսրութեան պետն էր։ Բայց արդէն Կարլոս Մեծի անմիջական յաջորդների ժամանակ երևաց, որ միակ իրաւական հիմքը, որի վրայ կարող էր արևմտեան կայսրութիւնը հաստատել իւր օրինաւորութիւնը իւր ախոյեանների—արևելեան կայսրների—դէմ, որոնք կայսերական տիտղոսը միմիայն իրենց բացառիկ սեփականութիւնն էին համարում, պապի ձեռքով օծուելն ու թագադրուելն էր։ Մինչդեռ հռովմէական կայսրների իշխանութիւնը յենուում էր հռովմէական պատմութեան դարաւոր աւանդութիւնների վրայ, որ անկախ էին եկեղեցուց և այդ եկեղեցու վրայ դրել էին հին—հռովմէական նուիրական իրաւունքի կնիքը, արևմտեան կայսերական իշխանութիւնը առաջ էր եկել եկեղեցուց։ Միայն եկեղեցուց ստացած օծման և կայսերական թագադրութեան շնորհիւ ֆրանկների Կարլոս թագաւորը կայսերական իշխանութիւն ստացաւ. գաղափարով մի նոյնքան համաշխարհային իշխանութիւն, որքան համաշխարհային էր այն եկեղեցին, որի պաշտպանութիւնը կայսրի կոչումն

1 Юридическій.

էր։ Թէպէտ 10-րդ դարում և 11-րդի սկզբում հռովմէական եկեղեցին խոր անկման մէջ էր և կայսրները, ինչպէս Օտտոն 1-ը և Հենրիխ 3-րդը, կարողացան մի առ ժամանակ եկեղեցու նկատմամբ Կարլոս Մեծի դիրքը բռնել, սակայն 11-րդ դարի երկրորդ կիսից սկսած եկեղեցա-պետական յարաբերութիւնները արևմուտքում ուղղակի հիերոկրատիկ ուղղութիւն ստացան։ Այդ ուղղութիւնը Գրիգոր 7-րդ Հիլդեբրանդ պապի ամբողջ գործունէութեան եղանակի հիմք դարձաւ, տեսականապէս պաշտպանուեց միջին դարի գիտութեան մէջ և Բոնիֆացիոս 8-րդ պապի նշանաւոր հրովարտակում (Unam Sanctam Բուլլայում. 1302 թ.) ստացաւ օրէնսդրական արտայայտութիւն։ Այդ հրովարտակով եկեղեցին (իսկ եկեղեցի ասելով պէտք է հասկանանք համաշխարհային և մի եկեղեցա-պետական կարգը) ունի մի Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն և մի տեսանելի գլուխ, որը Քրիստոսի ներկայացուցիչն է և Պետրոսի յաջորդը։ Նորա ձեռքում են այն երկու սուրը, որոնց մասին խօսում է Աւետարանը (Ղուկ. ԻԲ, 34 և շար.) և որոնցով պէտք է հասկանանք հոգևոր սուր (gladius spiritualis) և աշխարհական կամ նիւթական սուր (gladius materialis)։ Բայց պապը անմիջապէս իրագործում է միայն հոգևոր սրի, այսինքն բանի՝ իշխանութիւնը. իսկ նիւթական սուրը պապից յանձնուում է աշխարհականներին և գործադրուում է նորա հրամանով ի պաշտպանութիւն եկեղեցու թագաւորների և զինուորների ձեռքով։ Վերջին սուրը պէտք է ենթարկուի առաջինին և աշխարհական իշխանութիւնը հոգևոր իշխանութեանը. հոգևոր իշխանութիւնն է նշանակում աշխարհական իշխանութիւնը և դատում, եթէ նա ուղիղ ճանապարհից շեղուել է. և առհասարակ իւրաքանչիւր մարդ արարածի Հռովմի քահանայապետին ենթարկուած լինելը հաւատի մի դոգմայ է, որ անհրաժեշտ է հոգու փրկութեան համար։—Երկու սրերի տեսութիւնից, ինչպէս որ այդ հասկացուել և պաշտպանուել է հիերոկրատիկ տեսակէտից, հե-

տեւեցնում էին հետեւեալ մասնակի եղրակացութիւնները։

1) Պապերը ամբողջ աշխարհի վրայ ծայրագոյն իշխանութիւն ունեն և կայսրներն ու թագաւորները, ինչպէս առաքելական աթոռի վասալներ, նոցանից են ստանում աւատական իրաւունքով իրենց տերրիտորիումները. այնպէս որ ուրեմն ոչ միայն հոգևոր, այլ և աշխարհական գործերում աշխարհական իշխանութիւնը ենթարկուած է պապին։ Աւելի ուշ, երբ ֆէոդալական կողմակերպութիւնն ընկաւ և թագաւորների իշխանութիւնը զօրացաւ, հիէրոկրատիկ հայեացքի կողմնակիցները աշխարհական գործերի մէջ պապի ունեցած այդ «անմիջական» իշխանութեան (potestas directa) փոխարէն սկսեցին, այսպէս անուանուած, «միջնորդական» կամ «կողմնակի» իշխանութեան մասին խօսել (potestas indirecta), պաշտպանելով, թէ պապը իշխանութիւն ունի 'իւր քննութեան և դատաստանին ենթարկել ամեն տեսակ աշխարհական գործեր, որքան դրանց մէջ մեղքի տարր է լինում։

2) Ընդհակառակը՝ աշխարհական իշխանութիւնը եկեղեցու կառավարման գործերին խառնուելու, միջամուխ լինելու իրաւունք չունի. օրինակ՝ ժողովներ դումարել, եկեղեցական պաշտօնեաներ նշանակել, կղերին աշխարհական դատաստանի ենթարկել և այլն. այն էլ հոգևոր (եկեղեցական) և ոչ հոգևոր գործերի սահմանը բացառապէս հոգևոր իշխանութեան հայեցողութեամբ պէտք է որոշուի։

3) «Այս աշխարհի իշխանութիւնը,» պետական իշխանութիւնը (saeculum) կարող է բարոյապէս արդարանալ և սրբագործուել մի միայն եթէ իւր ոյժերը և միջոցները եկեղեցուն ծառայելու համար գործ դնէ՝ որպէս եկեղեցու հրամանները կատարող աշխարհական ձեռք և մկանունք (brachium saeculare), որ շարժւում են եկեղեցու կամքով։ Աշխարհական իշխանութիւնը լուսաւորում է ոչ թէ սեփական լուսով, այլ փոխառած. այնպէս, ինչպէս երկու լուսաւոր մարմիններից—արևից և լուսնից, որ Աստուած դրել է երկնքի հաստատութեան վրայ, վերջինը իւր լոյսը փոխ է առնում առաջինից։

4) Այն օրէնքները, որ դրել է աշխարհական իշխանութիւնը հակառակ եկեղեցական պահանջներին, պապը կարող է բեկանել,[1] ինչպէս անվաւեր[2] բաներ։

5) Բացի դրանից այն աշխարհական իշխանութիւնը, որի ներկայացուցիչը չէ կատարում եկեղեցու պահանջները, պապի հայեցողութեամբ կարող է մի ուրիշի տրուել. այնպէս որ կայսրը կամ թագաւորը, եթէ ուղիղ ճանապարհից շեղուել են, կարող են իրենց պաշտօնից զրկուել. իսկ նոցա հպատակները կազատուին նոցա տուած հաւատարմութեան երդումից։

Այս բոլորից երևում է, որ հիէրոկրատիկ սիստեմը բիւզանդականի նման՝ եկեղեցին պետութիւնից չէր տարբերում ինչպէս առանձին համախմբութիւններ,[3] կեանքի առանձին կարգեր. այլ մի մեծ համաշխարհային համախմբութեան մէջ հոգևոր և աշխարհական իշխանութիւններ էր որոշում. այդ համախմբութիւնը տեսականօրէն ընդգրկում էր ոչ միայն բոլոր քրիստոնեաներին, այլ և ամբողջ մարդկութիւնը՝ աշխարհական իշխանութիւնը հոգևոր իշխանութեան համար մի ստորադրեալ գործիք համարելով։

---

§ 6. Հիէրոկրատիկ հայեացքների դէմ եղած ընդդիմադրութիւնը միջին դարում։

Պապականութեան և կայսրութեան միջնադարեան կռիւների ժամանակ կայսերական իշխանութիւնը իրեն

---

1 Кассировать.
2 Недѣйствительный.
3 Общеніе.

կողմնակիցները գտաւ ոչ միայն Գիբելեանների քաղաքական կուսակցութեան, այլ և ժամանակի եկեղեցական գրականութեան ներկայացուցիչների մէջ։ Միջնադարեան հեղինակների մի մասի ձայնը ճիշտ նոյն կերպ բարձրացաւ կայսերական իշխանութիւնը պապական իշխանութիւնից դերազանց պահելու համար, ինչպէս որ միւս մասը պապական իշխանութեանն էր տալիս այդ դերազանցութիւնը։ Սակայն կայսերական իշխանութեան կողմնակիցներն էլ մնացին մի քրիստոնէական եկեղեցա-պետական կարգի նոյն հողի վրայ, միայն թէ այդ երկու իշխանութիւնների յարաբերութիւնը ձևակերպում էին հակառակ հիէրոկրատիկ սիստեմին և յօգուտ կայսրի։ Իրենք կայսրները, հէնց որ իրականութիւնը հնարաւոր էր դարձնում իրագործելու կայսերական ձևակերպութիւնը, գործում էին նոյն եղանակով, ինչ եղանակով որ գործում էին պապերը։ Պապը դահընկէց էր անում կայսրին եկեղեցական հրամաններին անհնազանդ լինելու համար և իրեն տէր էր յայտարարում կայսերական թագի, որ կարող է տալ ում և կամենայ (ինչպէս որ Գրիգոր 7-րդը Հենրիխ 2-դի և Յովհաննէս 22-րդը Լուդովիկոս Բաւարացու հետ վարուեցին)։ Իսկ կայսրները դահընկէց էին անում պապին հերետիկոսութեան համար՝ իրենց իրաւունք հռմարելով Հռովմի աթոռը տնօրինել ըստ իրենց հայեցողութեան։ Բայց ոչ պապը, ոչ կայսրը և ոչ այս կամ այն իշխանութեան կուսակիցները չէին կասկածում, որ եկեղեցին և պետութիւնը կազմում են մի մարմին, և ինչ որ եկեղեցին դատապարտում է՝ պետութեան մէջ էլ գոյութիւն ունենալու իրաւունք չունի։ Մի և նոյն ժամանակ անկասկածելի էր համարւում, որ աշխարհական իշխանութիւնը կառավարում է հպատակների միայն մարմինը, իսկ հոգին կառավարում է հոգևոր իշխանութիւնը։ Հասկանալի է, որ միջնադարեան աշխարհայեցողութեան այս անհաշտ հակասութիւնների պատճառով կայսերական իշխանութիւնը պէտք է տուժէր պապի հետ ընդհարուե-

լիս, որովհետև միջին դարերի կրօնամոլ տրամադրութեան շնորհիւ Իննոկենտիոս 3-րդ պապի հետևեալ խորհրդածութիւնը պէտք է անհամեմատ աւելի համոզիչ հանդիսանար, քան այն բոլոր ապացոյցները, որ խօսում էին յօգուտ կայսրների դերազանցութեան։ Ահա այդ խորհրդածութիւնը. «Հոգևորը նոյնքան ազնուագոյն է անցաւորից, որքան հոգին դերազանց է մարմնից» (Spiritualia tanto sunt temporalibus digniora, quanto animus praefertur corpori): Մանաւանդ որ միջին դարը շատ նեղ հասկացողութիւն ունէր աշխարհական կամ պետական իշխանութեան նպատակների մասին, և նորա գործունէութեան շրջանը սահմանափակում էր միայն արտաքին թշնամիների դէմ պաշտպանելու և ներքին կարգը պահպանելու դերով։ Աւելի բարձր կարգի բոլոր ինդիրներն և շահերը (գիտութիւն, գեղարուեստ, բարեգործութիւն), նոյն իսկ արդիւնագործութեան և վաճառականութեան շահերը, մէկ խօսքով այն բոլորը, ինչ որ արդի հասկացողութիւնը պետութեան մասին՝ դնում է սորա հոգացողութեան շրջանի մէջ, միջին դարում ոչ թէ աշխարհական կայսերական, այլ հոգևոր իշխանութիւնից էր պաշտպանութիւն գտնում, կամ մշակւում էր ինքնօրէն ընկերակցութիւնների[1] ձեռքով (գիլդերի և համքարների). ինչպէս օրինակ վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնը։ Հոգևոր իշխանութիւնը ունենալով համեմատաբար աւելի բարեկարգ դատարան՝ աշխարհական իրաւարարութեան պակասները լրացնում էր. որովհետև հոգևոր իշխանութեանն էին դիմում երբ աշխարհական դատարանները հրաժարւում էին իրաւարարութիւնից։ Միջին դարերի պատմութեան մէջ ամենից աւելի նշանաւոր է այն փաստը, որ պապականութիւնը յարատև և սիստեմօրէն կռիւ էր մղում ոչ թէ թագաւորների և թագաւորութիւնների դէմ, այլ գերմանական ազգի սրբազան հռովմէական կայսրութեան դէմ։ Պատճառն այն

1 Корпорація.

էր, որ կայսրութիւնը նոյնպէս թեկնածում էր համաշխարհային և գլուխ լինել ամբողջ քրիստոնէական մարմնի համար, ինչպէս որ պապականութիւնը. և հետևապէս sacerdotium-ի և imperium-ի, երկու բարձրագոյն իշխանութիւնների կամ այդ մարմնի պետերի մէջ ծագած կռուում՝ պապը կայսրին պէտք է իրեն հակառակորդ տեսնէր։ Պապը ցանկանում էր թագաւորական թագերը բաժանել իբրև աւատ.[1] բայց կայսրն էլ միջնադարեան տեսութեամբ ներկայանում էր դերագոյն աւատատէր[2] միւս թագաւորների նկատմամբ, որոնք իւր վերաբերմամբ դաւառական թագաւորներ էին կոչւում (reges provinciales)։

Դեռ 1338 թ. կարելի էր դիտել այն հետաքրքրական տեսարանը, երբ Անգլիայի Էդուարդ թագաւորը եկաւ Գերմանիա Լուդովիկոս Բաւարացու մօտ, և վերջինս իւր համաշխարհային իշխանութեան հիման վրայ՝ «չնորհեց» նորան ֆրանսիական թագաւորութիւնը, «որին թեկնածում էր անիրաւացի կերպով Վալուեան Փիլիպպոսը», Էդուարդին Ֆրանսիայում «կայսրութեան ներկայացուցիչ» նշանակեց և աւատական երդում առաւ նորանից (Huldigung)։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ «չնորհումը» Էդուարդի և Փիլիպպոսի դիրքը մի մազի չափ էլ չէր փոխում. բայց տեսութեանը պատիւ տուեց։ Նոյն իսկ 15-րդ դարում ժամանակի գերմանացի քաղաքագէտը գրում էր. «Ներկայումս թագաւորների մեծ մասը, աւելի de facto, քան de jure, կայսրին գլուխ չէ ճանաչում և գրաւում է կայսրութեան բարձր իրաւունքները»։ Գերմանական իրաւաբանները այնպէս էին դատում, թէ ենթադրութիւնը (պրեսումցիո) խօսում է յօգուտ՝ ժողովրդի և թագաւորների գերմանական կայսրից կախումն ունենալուն, և թէ ով որ հաստատում է հակառակը, պէտք է բացատրութիւնը ապացուցանէ։

Իրաք «դաւառական թագաւորները», առանց համաշխարհային իշխանութեան թեկնածելու, իրենց սահմաններում կայսրից աւելի ազատ էին գործում, և աւելի կամ պակաս յաջողութեամբ պահպանում էին թագաւո-

1 Ленъ.

2 Сюзеренъ.

ական իշխանութեան իրաւունքները հիերոկրատիկ յաւակնութիւններից։ Միւս երկրներից վաղ այդ յաւակնութիւններին դիմադրութիւն ցոյց տուին Անգլիայում, ուր Հենրիխ 2-րդ թագաւորի օրով Կլարենդոնում 1164 թ. գումարուած ժողովում հոգևորականութեան վրայ եղած եկեղեցու իրաւասութիւնը[1] բաւական սահմանափակեցին, բարձրաստիճան հոգևորականների կալուածները թագաւորական աւատ յայտարարեցին, եպիսկոպոսների ընտրութիւնները հրամայեցին թագաւորի մօտ որա բարոնների մասնակցութեամբ կատարել, բարձրաստիճան հոգևորականների արտասահման ճանապարհորդելու և Հռոմի բողոք յայտնելու, նոյնպէս և թագաւորի անմիջական վասալներին և ատիճանաւորներին եկեղեցուց մերժելու համար պարտադիր հրամայեցին թագաւորից թոյլտուութիւն ստանալ։ Կլարենդոնի կանոնադրութիւնը առիթ եղաւ թագաւորի և Թոմաս Բեկետ արքեպիսկոպոսի ընդհարմանը. վերջինիս սպանումը, որ տեղի ունեցաւ աստուածպաշտութիւն կատարելիս, խիստ վնասեց թագաւորին։ Մեղադրուելով այդ սպանութեան դրդման մէջ և Հռոմի կողմից բանադրանքի (ինտերդիկտ) սպառնալիք ստանալով՝ թագաւորը ստիպուած եղաւ խոնարհուել, և շուտով դրանից յետոյ Յովհաննէս Անհողը յայտնեց պապի լեգատին (1213 թ). որ նա իւր թագաւորութիւնը —Անգլիան և Իրլանդիան—տալիս է պապին և նորա յաջորդներին իբրև սեփականութիւն, միայն թէ ինքը այնուհետև իբրև վասալ տիրապետէ այդ թագաւորութիւններին. այլ և պարտաւորուեց ամեն տարի պապին հարկ վճարել և հաւատարմութեան երդում տուեց։ Աւելի հաստատ յաջողութեամբ գործեց հիւսիսում, Սկանդինավիայում, Նորվեգիայի Սվերրիր թագաւորը (12-րդ դարի վերջում). սա պաշտպանեց Հռոմի դէմ հոգևորականութեան վրայ եղած թագաւորի իրաւասութիւնը և երկրի

1 Юрисдикція

եկեղեցական գործերի վրայ եղած թագաւորական իշխանութիւնը, թէպէտ նորան մերժեցին և բանադրեցին։ Աւելի մեծ յաջողութեամբ, այն էլ սիսաեմօրէն գործեցին Ֆրանսիայի թագաւորները։ Ֆրանսիայում Հռովմի դէմ կռիւը սկսուել էր Փիլիպպոս Գեղեցիկ թագաւորից, որը ցանկանում էր հակառակ պապական արգելքի հոգևորականութեան վրայ էլ միւս դասակարգերի նման հարկեր դնել, և վերջացաւ պապականութեան վճռական պարտութեամբ։ Չնայելով որ վերոյիշեալ (տես § 5) Unam Sanctam հրովարտակը (բուլլան) ուղղուած էր եղել առանձնապէս Փիլիպպոս Գեղեցիկի դէմ, բայց և այնպէս Բոնիֆացիոս 8-դի յաջորդ Կլիմենտ 5-դը, որ պապական աթոռը Հռովմից Ավինիոն փոխադրեց և Ֆրանսիայի թագաւորի քաղաքական ծրագիրների գործիք դարձրեց, «Meruit» հրովարտակը (բրեվէ) արձակեց. այս հրովարտակում Ֆրանսիան, ֆրանսիական ժողովուրդը և թագաւորը բացառութիւն են յայտարարւում այն դոգմայի նկատմամբ, որ Unam Sanctam բուլլայի մէջ էր արտայայտուած և որով իբրաքանչիւր մարդ արարած յաւիտենական փրկութիւնից չզրկուելու համար պէտք է հնազանդուէր պապին։ Ֆրանսիան (յատկապէս Փարիզի համալսարանը) եղաւ Հռովմի դէմ սկսուած եպիսկոպոսականութեան շարժման[1] գլխաւոր բոյնը։ Նոյն Ֆրանսիայում Բազէլի ժողովի (1431—37) ազատամիտ հրովարտակները հրատարակուեցին իբրև թագաւորական օրէնք Կարլոս 7-րդ թագաւորի «Պրագմատիկ սանկցիայ»-ի անունով, և, չնորհիւ թագաւորական իշխանութեան և ֆրանսիական նուիրապետութեան մէջ եղած համերաշխութեան՝ հնարաւոր եղաւ շատ ազգային առանձնայատկութիւններ և կարգեր կազմակերպել, որ «Գաղղիական եկեղեցու ազատութիւններ»-ի[1] անուն ստացան։ Երկրի եկեղեցական կառավարութեան մէջ թագաւորին ազատ մասնակցութիւն տալուց և մի և նոյն ժամանակ պապի՝ այդ կառավարութեան վրայ ունեցած կողմնակի (նուիրակների միջոցով) և անմիջական ազդեցութիւնը սահմանափակելուց յետոյ, «Գաղղիական ազատութիւնների» մէջ յիշատակուած էր իբրև մի անխախտ ճշմարտութիւն, որ Ֆրանսիայի թագաւորները աշխարհական գործերի մէջ անկախ են պապից, որ թագաւորի հպատակները չեն կարող ազատուել թագաւորին տուած հաւատարմութեան երդումից, որ թագաւորական աստիճանաւորները թագաւորի կարգադրութիւնները կատարելու համար չեն կարող մերժուել եկեղեցուց, որ առհասարակ քաղաքացիական գործերի նկատմամբ եկեղեցական մերժում թոյլ չէ տրւում, որ պապը իրաւունք չունի օրինաւոր դարձնել ապօրինի ծնուածներին[2] քաղաքացիական իրաւունքի[3] հետևանքներով և վերականգնել այն մարդկանց պատիւը, որոնք քաղաքացիական անուանարկութեան են ենթարկուած և այլն։ 15-րդ դարում Սպանիայում էլ թագաւորները՝ գործելով խիստ կաթոլիկ, նոյն իսկ ուլտրակաթոլիկ ոգով, աւելի զարհուրելի հաւատաքննու-

1 Այս շարժումը (епископальное движеніе) սկսուեց 15-րդ դարում, որպէս մի ընդդիմադրութիւն պապի միահեծանութեան դէմ։ Այս ընդդիմադիր կանոնական տեսութեան համաձայն (որ գործնականապէս արտայայտուեց Պիզայի, Կոնստանցի և Բազելի եկեղեցական համագումար ժողովներում) եկեղեցու ծայրագոյն իշխանութիւնը համագումար ժողովին է պատկանում, որ իրաւունք ունի պապին խրատելու, պատժելու և դահընկեց անելու. պապը—եկեղեցու գործադիր գլուխն է, եկեղեցու միութեան կէտրոնը և հսկող ժողովից սահմանուած կանոնների գործադրութեանը. համագումար ժողովն է համայն եկեղեցու ներկայացուցիչը. պապը սրա հրամանատար օրգանն է, որի կարգադրութիւնների դէմ կարելի է բողոքել նոյն ժողովին։ Ծ. Խ։

1 Libertés de l'église gallicane: «Գաղղիական» էր կոչւում ֆրանսիական ազգի կաթոլիկ եկեղեցին, որ որոշ չափով անկախ դիրք գրաւեց Հռովմի եպիսկոպոսի նկատմամբ և իւր վայելած «ազատութիւնների» չնորհիւ մասամբ ազգային բնաւորութիւն ունէր։ Ծ. Խ։

2 Незаконнорожденный.

3 Гражданское право.

թիւն կազմակերպելով քան այլ երկրներում, մի և նոյն ժամանակ Հռովմի նկատմամբ անկախ դիրք բռնեցին և իրենց իշխանութեամբ կարգաւորում էին երկրի եկեղեցական գործերը։ Վերջապէս նոյն իսկ Գերմանիայում՝ կայսերական դահը տնօրինելու յաւակնութիւններին, որ յայտնել էր Յովհաննէս 22-րդ պապը, հակառակեցին գերմանական կայսր ընտրող իշխանները (կուրֆիւրստները)։ սոքա Ռենդի ժողովում վճռեցին, որ միաձայն կամ իրենց (կուրֆիւրստների) ձայների բազմութեամբ ընտրուած գերմանական թագաւորը (որ է նաև գերմանական ազգի հռովմէական սրբազան պետութեան կայսր) կարօտ չէ պապի անուանադրութեան, հաստատման կամ հաւանութեան՝ կայսերութեան ունեցուածքները և իրաւունքները տնօրինելու և թագաւորական տիտղոս ընդունելու համար։ Բայց այս քիչ է։ Կայսերական իշխանութեան ուժասպառ լինելը պապականութեան դէմ վարած մշտատև կռիւների մէջ, մանաւանդ Հոհենշտաուֆէնների տան անկումից յետոյ, Գերմանիայում նպաստեց տեղական իշխանութիւնների, այսինքն կայսերական քաղաքների և հոգևոր ու աշխարհական իշխանների, զօրեղանալուն։ այնպէս որ 16-րդ դարում այդ տեղական իշխանութիւնները իրօք անկախ էին դառել կայսրից, որին դրեթէ լոկ տիտղոսն էր մնացել՝ զուրկ իրական բովանդակութիւնից։ Գերմանիայի եկեղեցա-պետական յարաբերութիւնների համար այս փաստը խիստ կարևոր նշանակութիւն ունեցաւ։ Այժմ իւրաքանչիւր տեղական իշխանութիւն (Landesherr) յաւակնութիւն յայտնեց ձեռք բերել եկեղեցին պաշտպանելու (advocatia ecclesiae) այն իրաւունքը, որ տիեզերական եկեղեցու վերաբերմամբ վայելում էր կայսրը, և որ այժմ տեղական իշխանութիւնների համար նոցա երկրների սահմաններում յարմար ճանապարհ բաց արեց իշխելու նոյն երկրի եկեղեցիների և վանքերի վրայ։ Սորա հետ միասին պետական իշխանութեան նպաստակներին վերաբերեալ հայեացքների մէջ 15-րդ դարում բաւական

մեծ փոփոխութիւն է նկատւում. սկսում է քաղաքավարական[1] (ներքին կառավարութեան) օրէնսդրութիւնների հրատարակութիւնը, որով պետութեան նպատակները այլ ևս չեն սահմանափակւում միայն հպատակներին արտաքին թշնամիներից պաշտպանելու և պետութեան ներքին իրաւական կարգը և խաղաղութիւնը պահպանելու գործով, այլ ստանում են դրական բնաւորութիւն՝ հոգալ քաղաքացիների[2] բարեկեցութեան և բարի բարքերի մասին։ Որովհետև միջին դարի վերջում եկեղեցական կեանքը տառապում էր անտանելի անկարգութիւններից, որ եկեղեցու թէ գլխի և թէ անդամների վերանորոգման կարիք առաջ բերեց, ուստի իշխանները՝ տեսնելով, որ եկեղեցական օրգանները անհոգ կերպով են կատարում իրենց պարտականութիւնները, պէտք է սրանց լրացնէին և փոխանակէին։ Օրինակ. Սաքսոնիայի կուրֆիւրստները իրաւունք և պարտք համարեցին իրենց երկրի վանքերը այցելել և բարենորոգել. կատարել այն բոլորը, ինչ որ անհոգութեան պատճառով հոգևոր իշխանութիւնը չէր անում. այն էլ այցելութիւնները անել ոչ թէ փչացած հոգևորականութեան, այլ բարեպաշտ և եռանդուն աշխարհականների միջոցով։ Jus reformandi—«բարենորոգելու իրաւունք»[3] ասածը, որ վերանորոգութեան ժամանակ կաթոլիկ եկեղեցու համար մի անսպասելի զարկ ստացաւ, նախավերանորոգչական և կաթոլիկական ծագում ունի. ինչպէս և դեռ Լութերի վերանորոգութիւնից առաջ երե-

---

1 Полицейскій.

2 Гражданинъ.

3 Միջին դարի վերջում այսպէս կոչում էր կաթոլիկ պետական կառավարութեան իրաւունքը՝ բարեկարգել իւր երկրի կրօնական, եկեղեցական գործերը։ Իսկ կրօնական վերանորոգութեան (ռեֆորմացիո) շրջանում այդպէս կոչում էին աշխարհական (պետական) իշխանութեան իրաւունքը և պարտականութիւնը՝ Ավետարանի ճշմարիտ իմաստի համաձայն կարգի բերել ժողովրդի կրօնական կեանքը։

Ծ. Խ։

ւան էին եկել այն հանգամանքները, որոնց շնորհիւ կազմուեց առածը dux Cliviae est papa in terris suis («Կլիվէ հերցոգութեան գլուխը պապ է իւր երկրում»)։ Այս բոլոր հանգամանքները Գերմանիայում հեշտացրին նոր եկեղեցա-պետական կարգի հաստատուիլը, որի համար հիմք ծառայեցին 16-րդ դարի սկզբի գերմանական և զվինգլեական վերանորոգիչների (ռեֆորմատոր) գաղափարները։

---

§ 7. Կրօնական վերանորոգութեան (ռեֆորմացիօ) գաղափարների ազդեցութիւնը եկեղեցա-պետական յարաբերութեան վրայ:

16-րդ դարի վերանորոգիչները յենւում էին եկեղեցա-պետական համախմբութեան միութեան միջնադարեան գաղափարի վրայ։ Վերանորոգութեան ժամանակ, ինչպէս և միջին դարում, բոլորն էլ խօսում էին եկեղեցու և պետութեան մասին՝ ոչ իբրև երկու առանձին համախմբութիւնների, այլ իբրև մի քրիստոնէական համախմբութեան կամ մարմնի մասին, որ ունի երկու իշխանութիւն կամ երկու սուր (Լութերն ասում էր. «Christus hat nicht zwei noch zweierlei Art Körper einen weltlichen, den andern geistlich. Ein Haupt ist und einen Körper hat Er»)[1]: Բայց երկու սրերի յարաբերութիւնը արդէն բոլորովին այլ կերպ էր ներկայանում համեմատած կաթոլիկականի հետ։ Աշխարհական իշխանութիւնը չէր հակադրւում հոգևորին՝ ինչպէս ստորինը բարձրին. որովհետև քրիստոնէութեան բոլոր անդամները հաւասար հոգևոր բնաւորութիւն ունեն. հետևապէս աշխարհական իշխանութիւնն էլ քրիստոնէական մարմնի անդամ է՝ նոյնքան հոգևոր, որքան, այդպէս անուանուած, հոգևոր

1 «Քրիստոսը երկու կամ երկու տեսակ մարմին չունի՝ մէկը աշխարհական միւսը հոգևոր։ Մի գլուխ է և մի մարմին ունի Նա»։

իշխանութիւնը։ Հոգևոր և աշխարհական իշխանութիւնները տարբերւում են միմեանցից ոչ թէ իրենց հոգևոր և ոչ հոգևոր բնաւորութեամբ, այլ կոչումով կամ պաշտօնով։ Աշխարհական իշխանութիւնը միայն մարմնի վրայ չպէտք է հոգս տանի (corpora tueri, ինչպէս ասում էր Մելանխտոնը). որովհետև այդ դէպքում նա ուղղակի անասունների հօտի հովիւ կլինէր։ Երկու իշխանութիւնների ոչ խնդիրներն են տարբեր, ոչ էլ նպատակները. վերջնական կէտ-նպատակը մի և նոյնն է՝ փառաբանել Աստծուն (ut Deus glorificetur).—տարբեր են այն պաշտօնային[1] գործառնութիւններն ու միջոցները, որ տանում են դէպի այդ նպատակը։ Հոգևոր պաշտօնը գործում է աստուածային խօսքի քարոզով և խորհրդակատարութիւնով, առանց յաւակնութեան՝ որ և է աշխարհական գործ կատարելու կամ ստիպողական իշխանութիւն ունենալու. իսկ աշխարհական իշխանութիւնը հէնց ուղղակի Աստծուց առաքելութիւն է ստացել նիւթական սուրը, իրաւական իշխանութիւնը և մարմնական ստիպողութիւնը տնօրինելու։ Խօսելով աշխարհական իշխանութեան մասին, վերանորոգիչները ի նկատի ունէին ոչ թէ կայսրին, որպէս գերմանական կայսրութեան համաշխարհային իշխանութիւն, այլ տեղական իշխանութիւնները, այսինքն իշխաններին և կայսերական քաղաքների իշխանութիւնները։ Այժմ Լութերի վարդապետութիւնը ընդունող իշխանութիւնների ձեռքում՝ jus reformadi-ն սկսում է ծառայել եկեղեցական գործերը այդ վարդապետութեան օգով կարգաւորելու և նոյն վարդապետութիւնը ստիպողական կերպով հպատակների մէջ տարածելու նպատակին. որովհետև վարդապետութեան միութեան պաշտպանութիւնը, ինչպէս Լութերը գրում էր Սաքսոնիայի կուրֆիւրստին, պահանջում է աշխարհական իշխանութեան հոգացողութեանը։ Աշխարհական իշխանութիւնը պէտք է

1 Должностной.

հակէ, որ այդ վարդապետութեան առթիւ հպատակների մէջ վէճեր, երկպառակութիւններ և խռովութիւններ առաջ չգան, ինչպէս որ գործում էր մի ժամանակ Կոստանդին կայսրը։ Այսպիսով՝ եթէ դեռ միջին դարի վերջում նկատելի էր, որ պետական իշխանութեան խնդիրների և նպատակների մասին եղած հասկացողութիւնները փոփոխութեան են ենթարկւում, վերանորոգչական գաղափարներն դրանց նկատմամբ արդէն կատարեալ յեղաշրջում առաջ բերին։ Աշխարհական իշխանութիւնը պէտք է հոգ տանի պետութեան հասարակութեան բոլոր կարիքների մասին և առանձնապէս վարդապետութեան մաքրութեան, կանոնաւոր աստուածպաշտութեան և հպատակների հոգիների փրկութեան մասին։ Նոյն հայեացքն ունէին և զվիցերական վերանորոգիչները։ Կազմակերպուեցին այսպէս կոչուած Landeskirchen (երկրի եկեղեցիներ). այսինքն իւրաքանչիւր առանձին երկրի (տերրիտորիումի) մէջ պետական մարմինը ձուլուեց որոշ դաւանութեան հետ՝ կաթոլիկ իշխանների երկրներում կաթոլիկ դաւանութեան հետ, վերանորոգչական շարժումով համակուած երկրներում բողոքական կամ վերանորոգչական դաւանութեան հետ, տեղ չտալով այլ դաւանութիւնների բացի նոյն երկրում տիրապետող դաւանութիւնից։ Միևնոյն ժամանակ աւետարանական տերրիտորիալ իշխանութիւնը՝ անմիջապէս Աստծուց համարելով իւր իշխանութիւնը և յենուելով այն մտքին, թէ իւր պաշտօնը թերի կատարելու համար Աստծու առաջ սեփական պատասխանատուութեան է ենթարկուելու, եկեղեցական գործերը վերից վար կարգաւորում էր և խնամակալում քրիստոնէական կեանքը, վերացնելով ինքնօրէն[1] համայնական կազմակերպութեան հնարաւորութիւնը, չնայելով որ վերանորոգութեան անդրանիկ սկզբունքներում հաւատացեալների համայնքը առաջնակարգ տեղ էր բռնում։ Եթէ իշխանութիւնը երբեմն անհրաժեշտութիւն էր զգում աստուածաբանների կարծիքը հարցնելու, այս դէպքում սոքա ոչ թէ եկեղեցու և եկեղեցական իշխանութեան ներկայացուցիչ էին համարւում, այլ իբրև դիտակ մարդիկ. իշխանները կարող էին ոչ միայն իրենց, այլ և միւս իշխանութեանց պատկանող աստուածաբաններին դիմել, երբ ցանկանում էին որ և է խնդրի վերաբերմամբ սոցա կարծիքն իմանալ։

1 Автономный.

---

§ 8. Բնական իրաւունքի գաղափարների ազդեցութիւնը եկեղեցա-պետական յարաբերութիւնների վրայ։

Պետական իշխանութեան այն դիրքը, որ կազմակերպուեց կրօնական վերանորոգութեան դաղափարների ազդեցութեան տակ, բնական իրաւունքի փիլիսոփայութեան ազդեցութեամբ սկզբունքով մի այլ ձևակերպութիւն ստացաւ։ Այս փիլիսոփայութեան տեսակէտից՝ պետութիւնը, պետական իշխանութիւնը և այլ կարգութիւնները[1], օրինակ ամուսնութիւնը, վերուստ՝ Աստծուց չեն ծագում, այլ առաջ են գալիս դաշնադրութիւնից, մարդկանց ազատ կամքից և բանական համոզմունքից։ Առանց դաշնադրութեան չկայ իշխանութիւն, nullum imperium sine pacto: Պետութեան նպատակը՝ Աստծուն վառաբանելը և հպատակների ճշմարիտ քրիստոնէական կեանքի մասին հոգալը չէ, այլ նոյն պետութեան բարիքը, շահը և օգուտը (ratio status). Կրօնը միայն մի միջոց է, որ տանում է այդ նպատակին։ Պետական իշխանութեան ծաւալը և բովանդակութիւնը անսահման ընդարձակւում են. վրայ է հասնում, այսպէս անուանուած, քաղաքավարական պետութեան[2] դարը։ Կրօնի մա-

1 Институтъ.

2 Полицейское государство.

մասին հոգ տանելը՝ հպատակների միւս շահերի հոգացողութեան նման համարւում է պետութեան բարեկեցութեան և ապահովութեան ներքին կառավարութեան[1] վերաբերող մի խնդիր, և ոչ թէ իշխանութեան վրայ Աստծուց դրուած մի պարտականութիւն։ Սակայն Գերմանիայում, առանձնապէս անցքերի ընթացքի շնորհիւ, ինչպէս տեսութեան, «համախմբութեան տեսութեան»[2], նոյնպէս և դործնականի[3] մէջ թողին այն միտքը, թէ պետութիւնը անպատճառ պէտք է ձուլուի որ և է մէկ դաւանութեան վարդապետութեան հետ, և մի և նոյն երկրում զանազան կրօնական ընկերակցութիւնների[4] դոյութիւնը հնարաւոր եղաւ, որ հաւասարապէս անհասկանալի էր թէ միջնադարեան կաթոլիկութեան և թէ 16-րդ դարի վերանորոգիչների համար։ 18-րդ դարի դերմանական պետութիւնների մեծ մասի եկեղեցական քա-

1 Полиція благосостоянія и безопасности.

2 Բնական իրաւունքի վարդապետութիւնը ընդունում էր, որ մարդիկ, իրենց անկախամակերպ կենցաղավարութեան և «բնական վիճակին» վերջ դնելու համար, դաշն են կապում՝ միմեանց հետ միանալու, իրենց իրաւունքները մի անձին յանձնելու և սորան հպատակուելու. որով և ծագում է պետութիւնը իւր իշխանութիւնով։ «Համախմբութեան (կոլլեգիալ) տեսութիւնը» վարդապետում էր, որ պետութիւն կազմելիս և ունեցած իրաւունքներից հրաժարուելիս յօգուտ պետական կառավարութեան՝ մարդիկ իրենց վերապահեցին կրօնական իրաւունքները. ուստի եկեղեցական գործերի նկատմամբ անկախ մնացին պետութեան իշխանութիւնից և ապատ նրան հպատակուելուց։ Այս կրօնական պէտքերին բաւարարութիւն տալու համար՝ մարդիկ միանում և մի առանձին կրօնական համախմբութիւն են կազմում (որ Պուֆենդորֆը «կոլլեգիում» անուանեց, որտեղից տեսութիւնն էլ «կոլլեգիալ» կոչուեց)։ Կրօնական համախմբութեան, կամ եկեղեցու, ներքին կառավարութիւնը նոյն համախմբութեան—նրա համայնքին—է պատկանում. իսկ պետական իշխանութիւնը այդ համախմբութեան նկատմամբ միայն հսկելու և պաշտպանելու իրաւունք ունի։ Ծ. Խ.

3 Практика.

4 Религіозное общество.

ղաքականութեան ամենաբնորոշ վարդապետութիւնը դրսում են պրուսական «ընդհանուր օրէնսգրքում»[1]։ «Լանդրեխտի» (այդ օրէնսդրքի) համաձայն՝ պետութիւնը ներկայանում է իբրև մարդկային ամբողջ հասարակութիւնն իւր մէջ պարփակող մի կարգ։ Այդ կարգի մէջ թոյլ է տրւում, որ կրօնական ընկերակցութիւններ գոյութիւն ունենան։ Մի և նոյն ժամանակ եկեղեցու և այլ կրօնական ընկերակցութիւնների մէջ տարբերութիւն չէ դրւում. այլ տարբերութիւնը դրւում է հէնց կրօնական ընկերակցութիւնների մէջ։ Մի քանիսը համարւում են իբրև իրաւունակ ընկերակցութիւններ և այս դէպքում նկատւում են ինչպէս պետական կազմակերպութեան մի մաս. միւսները ընկերակցութիւններ չեն համարւում և այս դէպքում ոչ մի հանրային[2] նշանակութիւն չունեն՝ մնալով մասնաւոր[3] խմբակցութիւններ (ֆերայններ)։ Կրօնական այն համախմբութիւնների վերաբերմամբ, որ մտել են պետական կարգի մէջ, պետութեան դլուխը նոյն բարձրագոյն իշխանութիւնն է վայելում և նորա՝ այս կամ այն դաւանութեան պատկանելը նշանակութիւն չունի։ Բնական իրաւունքի փիլիսոփայական հայեացքով՝ պետութեան դլուխը կարող է նոյն իսկ քրիստոնեայ չլինել և սակայն, իբրև պետութեան դլուխ, նա իշխանութիւն ունի այն բոլորի վրայ, ինչ որ գտնւում է պետական տերրիտորիումի սահմաններում։ Ինքը իշխանը, ինչպէս եկեղեցու անդամ (եթէ նա պատկանում է քրիստոնէական եկեղեցուն), չունի առանձին իրաւունքներ, որ զանազանէին նորան եկեղեցու իւրաքանչիւր հասարակ անդամից. բոլոր իրաւունքները և ամբողջ իշխանութիւնը պատկանում են նորան, որպէս պետութեան դլխի, թէ այն կրօնական համախմբութեան

1 «Allgemeines Landrecht» օրէնսդիրքը օրէնքի ոյժ ստացաւ 1794 թուին. պարունակում է իւր մէջ Պրուսիայի քաղաքացիական, քրէական, պետական և եկեղեցական իրաւունքը։ Ծ. Խ։

2 Публичный.

3 Частный.

վերաբերմամբ, որին նա անձամբ պատկանում է, և թէ այլ համախմբութիւնների, որ մտնում են պետական կարգի մէջ։ Այս է էական տարբերութիւնը վերանորոգիչների հայեացքներից, որոնք քրիստոնէական բութեանը Աստծուց նրան տուած իշխանութիւն էին չնորհում, և մի և նոյն ժամանակ ենթադրում էին, որ պետութեան մէջ տիրում է մի ճշմարիտ քրիստոնէական վարդապետութիւն (այն է վերանորոգութեան մտքով)։ Մինչդեռ վերանորոգութեան կրօնական դաղափարները թագաւորին պետական կեանքի մէջ եկեղեցական պահանջների առաջնորդ դարձրին, բնական իրաւունքի հայեացքները եկեղեցական կեանքի մէջ պետական պահանջների առաջնորդ ընտրեցին նորան։ Գործնականում առաջին և երկրորդ տեսակի հայեացքները սովորաբար խառնում էին, որովհետև երկուսի էլ գործնական հետևանքը նոյնն էր՝ թէ եկեղեցական և թէ պետական իշխանութիւնը պէտք է միապետի ձեռքին լինին, որը այս կամ այն օրգանների միջոցով երկրի եկեղեցական և պետական կարգը միացնում է իւր անձի մէջ։

---

§ 9. Կրօնական վերանորոգութեան եւ բնական իրաւունքի փիլիսոփայութեան գաղափարների ազդեցութիւնը կաթոլիկ պետութիւնների եւ կաթոլիկ եկեղեցու յարաբերութիւնների կազմուելու վրայ։

Աւետարանական իշխանների օրինակը ազդեց և կաթոլիկ պետերի վրայ. սոքա չէին կարող չդիտակցել, որ իրենց և իրենց հպատակների կողմից կաթոլիկութեան հաւատարիմ լինելը կախուած է իրենց բարի կամքից և իրենց արժանիքն է. ուստի իրաւունք էին համարում կառավարել իրենց պետութեան սահմանում եկեղեցական

գործերը. մանաւանդ որ իրենք պապերն էլ թագաւորներից ամենայն էին պահանջում՝ վերանորոգութեան շարժումից խանգարուած եկեղեցական կարգապահութիւնը վերականգնելու համար։ Իսկ միւս կողմից բնական իրաւունքի փիլիսոփայութիւնը առաջ էր տանում իւր գործը ոչ միայն բողոքական, այլ և կաթոլիկ Եւրոպայում։ Վերջինում, ինչպէս և առաջինում եկեղեցին դարձաւ պետական մի հիմնարկութիւն։ Պետութեան և եկեղեցու յարաբերութեան սիստեմը, որ առաջ եկաւ այս շրջանում յիշեալ ազդեցութիւնների տակ, դերմանական գրականութեան մէջ ընդունուած է անուանել պետական եկեղեցականութիւն (Staatskirchenthum)[1]։ Այս տերմինը յիրաւի աւետարանական պետութիւնների աւետարանական եկեղեցու հետ ունեցած յարաբերութեանն էլ է վերադրուում. բայց գլխաւորապէս ծառայում է 17-րդ և 18-րդ դարի պետութիւնների և կաթոլիկ եկեղեցու յարաբերութիւնը որոշելու համար։ Պետական եկեղեցականութեան սիստեմի էութիւնն այն է, որ եկեղեցու բոլոր արտաքին կողմը, եկեղեցականութիւնը, ենթարկուում է պետութեան գլխի ծայրագոյն իշխանութեան. սա կարող է կարգադրել, վերացնել և փոփոխել եկեղեցական շրջանում այն բոլորը, ինչ որ չէ հիմնուում Ս. Գրքի անմիջական աստուածային կանոնադրութեան վրայ։ Հռոմէական կաթոլիկ եկեղեցու գլխի—պապի հետ հաղորդակցութիւնը չվնասուեց. բայց նորա բարձրագոյն եկեղեցական իշխանութեան բանեցնելը որոշ պետութեան սահմանում կամ չէր թոյլատրուում կամ պետութեան խիստ հսկողութեան տակ էր դրուում։ Պետական եկեղեցականութեան սիստեմը կարելի է հիերոկրատիկ ուղղութեան հակապատկերը համարել՝ գործող ֆակտորների կամ «սրերի» տեղափոխութեամբ, այսինքն հոգևոր սուրը ենթարկելով աշխարհականին։ Գլխաւորապէս Վեստֆալեան

---

1 Государственная церковность.

խաղաղութեան հիման վրայ մշակուեց պետական իշխանութեան՝ եկեղեցու վերաբերմամբ ունեցած իրաւունքների հետևեալ դասաւորութիւնը (jura majestatis circa sacra), որ մինչև այսօր էլ չէ կորցրել իւր նշանակութիւնը Գերմանիայում. 1) jus reformandi—եկեղեցական կեանքը բարեկարգելու իրաւունք (այդ իրաւունքում implicite պարունակւում է նաև պետական տերրիտորիումի սահմանում որոշ վարդապետութիւն և որոշ կրօնական ընկերակցութիւն թոյլ չտալու իրաւունք). 2) jus inspiciendi cavendi—զանազան միջոցներով եկեղեցու գործունէութիւնը վերահսկելու և սահմանափակելու իրաւունք՝ պետութեան շահերը պաշտպանելու նպատակով. այդ միջոցներն են՝ սահմանափակող օրէնքներ և կարգադրութիւններ հրատարակելը. բուլլաների, բրեվեների, պապի և տիեզերական ժողովների համեն տեսակ վճիռների—առանց պետութեան դլխի հաստատութեան (placet)—յայտարարման արգելելը. եկեղեցական դատարանների վճիռների դէմ պետական հիմնարկութիւններին բողոքել (l'appel comme d'abus, recursus ad principem) և այլն. 3) jus advocatiae, Schutzrecht—եկեղեցուն՝ իւր նպատակներին հասնելու գործում պաշտպանելու, աջակցելու և հովանաւորելու իրաւունք այնչափով, ինչ չափով որ պետութիւնը այդ նպատակների իրագործման մէջ իւր սեփական շահն է գտնում։ Սակայն առանձին կաթոլիկ պետութիւններում պետական եկեղեցականութեան սիստեմի գործնական իրականացման նկատմամբ աչքի են ընկնում ոչ փոքր տարբերութիւններ։ Դէպի Հռովմը եղած վերաբերմունքը երբեմն թշնամական, երբեմն բարեկամական էր լինում. պետութեան ամենակարողութիւնը հիմնւում էր երբեմն ողորմութեամբ Աստուծոյ հաստատուած թագաւորութեան, երբեմն բնական իրաւունքի գաղափարների վրայ. միւս կրօնական վարդապետութիւնների նկատմամբ, բացի կաթոլիկութիւնից, տիրում էր կամ բացարձակ անհամբերողութիւն կամ հանդուրժամտութիւն։ Օրինակ Բաւարիայում

խիստ պաշտպանութիւն գտան placet, recursus ad principem, հաւատացեալների եկեղեցական կեանքի վերահսկողութիւնը, դրքերի ցենզուրը յանձնուած էր աշխարհական հիմնարկութիւններին, եկեղեցական դատարանների իրաւասութիւնը ոչնչացած էր՝ բացի հոգևորականութեան կարգապահութեան վերաբերեալ թեթև զանցառութիւններից. կրօնաւորական կարգերին (օրդեններին) արգելուած էր յարաբերութիւն ունենալ իրենց օտարերկրեայ գլխաւորների հետ, կառավարութեան հոգևոր խորհրդի մէջ մտան աշխարհական մարդիկ և այլն. բայց պետութեան դլուխը այստեղ գործում էր ինչպէս պահապան և պաշտպան կանոնների (custos et vindex canonum), որին այն էլ ինքը պապը տալիս էր իւր լիազօրութիւնը.—ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ իւրաքանչիւր հակակաթոլիկ շարժում Բաւարական պետական կառավարութեան կողմից ճնշիչ միջոցներ պէտք է առաջ բերէր։—Ֆրանսիայում թագաւորի իշխանութեան բացարձակ բնաւորութիւնը առանձին զօրութեամբ երևան եկաւ Լուդովիկոս 14-րդի օրով. սա պետութեան մարմնացում էր համարում իրեն. մի պետութեան, որ բովանդակում է իւր մէջ բոլոր իրաւունքները. և մի և նոյն ժամանակ իւր իշխանութիւնը հիմնում էր «Քրիստոսի սեփական խօսքերի վրայ»։ Ինչ որ եկեղեցական էր՝ ենթարկուած էր պետական դաղափարին և դաղղիական եկեղեցին իւր ազատութիւններով հանդերձ դարձաւ պետական մի հիմնարկութիւն. այնպէս որ Ֆենելոնը աւելի իրաւացի էր գտնում խօսել դաղղիական եկեղեցու «ստրկութիւնների» մասին և ոչ թէ «ազատութիւնների» (servitudes և ոչ libertés de l' église gallicane): Լուդովիկոս 14-րդը Հռովմի հետ այնքան լարուած յարաբերութեան մէջ էր, որ նոյն իսկ ուզում էր Հռովմից անկախ մի ազգային պատրիարքութիւն կազմել։

Հռովմի հետ ընդհարուելու առիթ էր տուել ազատանի իրաւունքի (jus asyli) և այսպէս ասուած ռեգալիաների մասին

եղած վէճը։ Սպասատանի իրաւունքի մասին եղած վէճում թագաւորը պնդում էր, թէ Հռովմում ֆրանսիական դեսպանութեան ոչ միայն ապարանքը, այլ և այն փողոցը, որի վրայ գտնւում է այդ ապարանքը, հալածուող յանցաւորների համար պէտք է իրրև ապաստանարան ծառայէ, որ պապը չէր կարող թոյլ տալ։ Այսպէս անուանուած ռեգալիաների վէճը առաջ եկաւ այն բանի համար, որ իրրև ֆեոդալական ժամանակների մնացորդ՝ պահպանւում էր ազգային սովորոյթի (coutume) ձևով մինչև Լուդովիկոս 14-րդը. այն է՝ եպիսկոպոսութիւնները համարւում էին աւատներ և, որպէս աւատներ, եպիսկոպոսի մահից յետոյ պէտք է յետ տրուէին աւատատէրին մինչև նոյն սթոռի յաջորդի ինվեստիտուր ստանալը և երդում տալը։ Ընդհաման ժամանակամիջոցին թագաւորները օգտւում էին թափուր եպիսկոպոսութիւնների եկամուտներից և իրաւունք էին ստանում նշանակելու հովութեան հետ չմիացած այն բոլոր հոգևոր պաշտօնները, աւանդնապէս կանոնիկոսութիւնները, որ եպիսկոպոսական սթոռի թափուր մնալու ժամանակ ազատ էին մնում։ Այդ սովորոյթը համատարած չէր. Գիեննի, Պրովանսի, Լանգեդոկի և Դոֆինէի գաւառները այդ սովորոյթը չունէին. բայց Լուդովիկոս թագաւորը իւր «ռեգալիաների իրաւունքը» տարածեց և այդ գաւառների վրայ այն հիմամբ, որ «Ֆրանսիայի թագը կոլոր է»։ Եպիսկոպոսները թագաւորի կողմը պահեցին՝ հակառակելով այդ նորամուծութեան դէմ բողոքող պապին, և պատրաստ էին Հռովմից բաժանուել։ Ահա այսպիսի հանգամանքներում երևան եկաւ 1682 թ. «Գաղղիական հոգևորականութեան յայտարարութիւնը»[1]։ Բանն այն է, որ Բոսսիւետը իւր կարգակից ֆրանսիական եպիսկոպոսներին — չթողեց, որ Հռովմից բաժանուեն՝ մեղմացնելով ըստ կարելոյն այդ Յայտարարութեան 4 յօդուածների դարձուածքները։ Թագաւորը հրամայեց Ֆրանսիայի բոլոր պարլամենտներում արձանագրել այդ Յայտարարութիւնը և արգելեց որ և է հակառակ բան վարդապետել. իսկ համալսարաննե-

1 Բոսսիւետի կազմած այս յայտարարութեան՝ «Գալլիկան Դեկլարացիայի» (Declaration du clergé gallicane) իմաստն էր—սահմանափակել պապի բացարձակ իշխանութիւնը։ Զորս յօդուածով այս յայտարարութիւնը հրատարակում էր, որ պապը իշխանութիւն ունի միայն հոգևոր գործերում. իսկ աշխարհական խնդիրներում թագաւորները, իշխաններ եւ սրանց հպատակները բոլորովին անկախ եւ ազատ են պապին հնազանդուելուց. պապը պարտաւոր է իրեն համար պարտադիր ճանաչել տիեզերական ժողովների կանոնները, հնաւանդ սովորոյթները, դարաւոր կարգերը. իսկ կրօնի վերաբերեալ խնդիրներում պապի կանոնադիր իշխանութիւնը կախուած է համարւում ամբողջ եկեղեցու հաւանութիւնից, առանց որի նրա վճիռները անուավեր են յայտարարւում։ Ծ. Խ։

ին հրամայեց, որ աստուածաբանութեան և կանոնագիտութեան գիտական աստիճանը տան միայն այն դէպքում, եթէ թեկնածուն կպաշտպանէ իւր թեզիսներից մէկի մէջ այդ Յայտարարութեան վարդապետութիւնը.

Մի և նոյն ժամանակ Լուդովիկոս 14-րդը պետութեան բացարձակ ինքնակալութեան նոյն գաղափարին յենուելով՝ թոյլ չէր տալիս Ֆրանսիայում որ և է այլ կրօն դաւանել բացի այն կրօնից, որին ինքն էր պատկանում, այսինքն բացի կաթոլիկ դաւանութիւնից. սրանով է բացատրւում Նանտի հրովարտակի վերացումը և Հուգենոտների արիւնահեղ հալածանքը։ Լուդովիկոս 14-դի և նորա յաջորդի օրով գաղղիականութիւնը հանդէս եկաւ ամենախստագոյն գծերով, որպիսիները կարող է ունենալ մի պետական եկեղեցի. պճնասէր եպիսկոպոսները և վանահայրերը, որ թագաւորական պալատում ապրելը ամեն ինչից վեր էին դասում, թողին եկեղեցական գործերի հոգատարութիւնը և իրենց ահագին եկամուտների շնորհիւ աշխարհիկ սանձարձակ կեանք էին վարում և մի և նոյն ժամանակ աչքի էին ընկնում կեղծաւորութեամբ ու կրօնական անհամբերողութեամբ. սոքա շատ նպաստեցին կաթոլիկ կրօնի դէմ ուղղած ատելութեան բռնկմանը, որ արտայայտուեց յեղափոխութեան ժամանակ։—Աւստրիայում տեսնում ենք կրկին մի այլ բան։ Այստեղ սկզբում՝ կրօնասէր և խիստ ջերմեռանդ կաթոլիկ Մարիա Թերեզիա կայսրուհին գործում էր պետական—եկեղեցականութեան ոգով. իսկ յետոյ՝ նորա որդի և յաջորդ Յովսէփ 2-րդ կայսրը այդ ընդհանուր հիմունքի վրայ կազմեց մի այնպիսի սիստեմ, որը «Յովսէփականութիւն» («Յոզեֆիզմ») յատուկ անունը ստացաւ։ Յովսէփ 2-դը տիպական ներկայացուցիչ էր, այսպէս ասուած, քաղաքավարական պետութեան՝ բնական իրաւունքի գաղափարների այդ ինքնակերպ մարմնացման, որ ձգտում էր հասնել ընդհանուրի բարեկեցութեան։ Սկզբունքով տերրիտորիա-

լիստ[1] լինելով, մի և նոյն ժամանակ պետական բարեկեցութեան շահերի համար լաւագոյն կարգ հաստատելու ցանկութեամբ ոգևորուած՝ Յովսէփ 2-րդը բարենորոգեց եկեղեցական կեանքի բոլոր կողմերը. աստուածպաշտութիւնը, հովուութիւնը, կրօնաւորական կեանքը, թեմերի (դիեցեզների) և ծխերի բաժանումը, հոգևորական դառնալու և եկեղեցական պաշտօններ ստանձնելու պայմանները, եկեղեցական դատաստանը, ամուսնական իրաւունքը[2], եկեղեցու ունեցուածքի իրաւունքը[3]։ Բոլոր բարենորոգութիւնները կայսրը ինքն էր կատարում՝ միայն իւր սեփական հայեցողութեամբ և կշռադատութեամբ. որովհետև միմիայն իրեն էր համարում պետական համախմբութեան կամքի օրինաւոր ներկայացուցիչ և միայն իրեն էր վերագրում դատողութիւն անել այն բանի մասին, թէ ինչ է օգտակար և ցանկալի պետական բարիքի շահերի համար՝ առանց ուշադրութիւն դարձնելու թէ ժողովրդի սովորոյթների վրայ և թէ հոգևոր նուիրապետութեան հայեացքների. նա իւր կոչումն էր համարել «իւր տեսութիւնների տրամաբանութեամբ վերածնել Աւստրիան»։ Մի և նոյն ժամանակ նորա հրովարտակները աչքի էին ընկնում ամենամանրակրկիտ քաղաքավարական կարգաւորումներով։ Պետութեան և եկեղեցու մէջ եղած կապը Յովսէփականութեամբ չէր քանդւում. բայց պետութիւնը կրօնի և հոգևորականութեան վրայ նայում էր ինչպէս պետական բարեկեցութեանը հասնելու մի պի-

1 Այսպէս են կոչւում «տերրիտորիալ տեսութեան» կամ «տերրիտորիալիզմի» հետևողները, որ եկեղեցին համարում են պետական մարմնի մի մասը, եկեղեցական իշխանութիւնը պետական իշխանութեան մի ճիւղը։ Այս տեսութեան համաձայն՝ պետութեան գլուխը մի և նոյն ժամանակ նաև եկեղեցու գլուխ է և կառավարում է սրա գործերը։ Պետութեան գլուխը ունի այդ իրաւունքը՝ որովհետև նա իրաւունք ունի տիրապետելու այն ամենին, ինչ որ գտնւում է իւր տերրիտորիումի (հողի) սահմաններում։ Ծ. Խ։

2 Брачное право.

3 Имущественное право.

տանի միջոցի վրայ. մի կողմից նրա համար, որ առհասարակ ոչ մի բարեկարգ պետութիւն չէ կարող կառավարուել, եթէ իւր քաղաքացիները նախախնամութեան և յաւիտենական պատժի հաւատը չունենան. միւս կողմից նրա համար, որ եկեղեցու ամբիոնը մի նպատակայարմար ճանապարհ է առողջ քաղաքացիական գաղափարներ տարածելու. օր. դիւղատնտեսական։ Բայց ի պատիւ Յովսէփ 2-րդ կայսրի՝ պէտք է ասել, որ եկեղեցա-պետական միութիւնը նա հասկանում էր բոլորովին այլ կերպ, քան Լուդովիկոս 14-րդը. Յովսէփ 2-րդը խղճի ազատութիւնը ճանաչելու դործում մի կարևոր քայլ արեց. նա իւր պետութեան մէջ թոյլ տուեց չորս—կաթոլիկ, լութերական, վերանորոգչական և յոյն-արևելեան—պաշտամունքների ազատ կատարումը։

---

§ 10. Ֆրանսիական-յեղափոխական օրէնսդրութիւնը եւ Նապոլեոնի կոնկորդատը[1]:

Մեծ յեղափոխութեան առաջին օրերում բնական իրաւունքի դաղափարները արտայայտուեցան մօտաւորապէս նոյն ձևերով, ինչ ձևով որ առաջ եկան տերրիտորիալիզմը, քաղաքավարական պետութիւնը և Յովսէփականութիւնը Գերմանիայում. միայն թէ Ֆրանսիայում

1. «Կոնկորդատը»—փոխադարձ համաձայնութիւն է, որ եկեղեցին և պետութիւնը, եկեղեցական և պետական կառավարութիւնների ձևերով կայացնում են այն խնդիրների նկատմամբ, որ հաւասար կապ ունեն թէ եկեղեցու և թէ պետութեան շահերի հետ։ Կոնկորդատները մեծ մասամբ չոչափում են առանձին վիճելի իրաւական խնդիրներ. թէպէտ եղել են կոնկորդատներ, որ նպատակ են ունեցել սկզբունքով որոշել եկեղեցու և պետութեան փոխադարձ աշխարհութեան ընդհանուր խնդիրը։ Ծ. Խ։

աւելի խիստ արմատական վերանորոգութիւն տեղի ունեցաւ և պետական ինքնակալութիւնը անցաւ ժողովրդին։ Յեղափոխութեան այդ առաջին շրջանի (դեռ Լուդովիկոս 16-րդի կենդանութեան ժամանակ) յիշատակարան մնաց, այսպէս ասուած, «Հոգևորականութեան քաղաքացիական սահմանադրութիւնը», որ 1790 թ. հաստատուեց ազգային ժողովի հրովարտակով՝ առանց պապի հետ հաղորդակցելու և նոյն իսկ ֆրանսիական եպիսկոպոսների ժողովի կարծիքը լսելու։ Սահմանադրութեամբ արմատական կերպով քանդուեցան երկրի թեմերի և ծխերի (դիւեցեղների և պարոխիաների) բաժանումը։ Ֆրանսիայի դեպարտամենտների վարչական–քաղաքական բաժանման համաձայն՝ որոշուած էր, որ իւրաքանչիւր դեպարտամենտ պէտք է կազմէ եկեղեցական մի դիւեցեղ, և արգելուած էր այն եպիսկոպոսի կամ միտրոպոլիտի հեղինակութիւնը ճանաչել, որի աթոռը հաստատուած է օտարերկրեայ իշխանութիւնից (այսինքն պապի ձեռքով)։ Իւրաքանչիւր դիւեցեղի մայր եկեղեցին պէտք է իւր սկզբնական դրութեանը դառնար, այսինքն լիներ մի և նոյն ժամանակ թէ եպիսկոպոսական և թէ ծխական եկեղեցի. սրանով վերացւում էր առաջնորդանիստ քաղաքում առանձին, զատուած ծխերի գոյութիւնը։ Եպիսկոպոսը, որպէս առաջնորդանիստ քաղաքի միակ ծխատէր (պարոխ), պէտք է ունենար մի քանի փոխանորդներ (12—16, նայելով բնակիչների թուին), իւրաքանչիւր դիւեցեղում պէտք է լիներ մի սեմինարիա՝ չորս առանձին փոխանորդների առաջնորդութեամբ հոգևոր պաշտօնեաներ պատրաստելու համար։ Այս և միւս փոխանորդները ի միասին կազմում էին եպիսկոպոսի մշտական խորհուրդը, և եպիսկոպոսը չէր կարող դիւեցեղի և սեմինարիայի նկատմամբ ոչ մի գործի ձեռնարկել առանց նոցա կարծիքները լսելու։ 6000 հոգուց ոչ աւելի բնակիչ ունեցող միւս բոլոր քաղաքներում և տեղերում պէտք է միայն մի ծխական համայնք լիներ. միւսները պէտք էր վերացուէին. աւելի բազմամարդ քաղաքներում

մի ծխական համայնք կարող էր ծխականների աւելի մեծ թիւ ունենալ. իսկ ծխական համայնքներ այդպիսի քաղաքներում պէտք է այնքան լինէր, որքան հարկաւոր էր՝ նայելով ժողովրդի կարիքներին և տեղական հանգամանքներին։ Սպա՝ կապիտուլները, բոլոր կանոնիկոսութիւններով[1], և երկու սեռի վանքերը կրօնաւորութեան հետ միասին վերացուան։ Եպիսկոպոսական աթոռի համար թեկնածու պէտք է ընտրէր նոյն քաղաքական ժողովը (ինչ դաւանութեան էլ պատկանելիս լինէին ընտրողները), որ ընտրում էր դեպարտամենտի վարչական խորհրդի անդամներին։ Ընտրող ժողովը կանչում էր պրոկուրորը, դեպարտամենտի գլխաւոր սինդիկը, և ընտրութիւնը պէտք է կատարուէր մայր եկեղեցում պատարագից յետոյ, և ներկայ պէտք է լինէին բոլոր ընտրողները (սոցա թիւում և ոչ կաթոլիկները)։ Ընտրուածին կանոնական հաստատութիւն էր տալիս միտրոպոլիտը (միտրոպոլիտներ և միտրոպոլիտական վիճակներ պէտք է 10 լինէր). իսկ հաստատելու մերժումը պէտք է պատճառաբանուած լինէր և բողոքելու հնարաւորութիւն էր տրւում (appel comme d'abus)։ Նոր եպիսկոպոսը չպէտք է դիմէր պապին, որ իրեն հաստատէ. նա պէտք է միայն գրաւոր կերպով յայտնէր պապին, որպէս տիեզերական եկեղեցու տեսանելի գլխին, իւր միութիւն, հաւատի և հաղորդակցութեան նկատմամբ։ Ծխական կիւրեները ընտրւում էին նոյն ձևով, ինչ որ հրամայուած էր դաւառի (դիստրիկտ) վարչական խորհրդի անդամների ընտրութեան համար, և այլն։ Հոգևորականութեան մեծ մասը մերժեց երդում տալ այդ սահմանադրութեանը, և պապը դատապարտեց

---

1 Կաթոլիկ եկեղեցում առաջնորդական (մայր) եկեղեցու հոգևորականութիւնը (միաբանութիւնը) վարչական մի հաստատութիւն է հանդիսանում—«կապիտուլ» անունով, որի անդամները «կանոնիկոս» են կոչւում, իսկ սրանց պաշտօնը «կանոնիկոսութիւն»։ Այս կապիտուլի խորհրդով կամ համաձայնութեամբ պարտաւոր է գործել որոշ գործերում եպիսկոպոսը։ Ծ. Խ։

այդ սահմանադրութիւնը. սկսուեցին ճնշումներ և յեղափոխութիւնը նոր շրջանի մէջ մտաւ։ Հալածանքը ուղղուեց կաթոլիկ եկեղեցու և նոյն իսկ ընդհանրապէս քրիստոնէութեան դէմ։ Բնական իրաւունքի տեսութեան ներկայացուցիչները արդէն 17-րդ դարում յայտնել էին իրենց մտքերը «բնական կրօնի» մասին, զանազանելով սրան այն դրական կրօններից, որոնց մէջ ճշմարտութիւնը միշտ խաւարուած և խեղաթիւրուած է լինում յաւելուածներից. մինչդեռ բնական կրօնում ճշմարտութիւնը լիակատար կերպով է երևան գալիս։ Այդ «բնական կրօնի» բովանդակութիւնը քաղում էին մասամբ որոշ բանաւոր ճշմարտութիւններից, որոնց թիւը ըստ կարելոյն աշխատում էին կարճել, որպէս զի կարելի լինէր այդ ճշմարտութիւնները գտնել բոլոր կրօնների մէջ (օրին. Աստծու գոյութիւնը, մահից յետոյ հաւատացումը). մասամբ որոշ բարոյական պարտականութիւններից։ Ֆրանսիայում այդ դաղափարը խիստ կարուկ և որոշ կերպով յայտնել էր Ժան Ժակ Ռուսսոն. սա վարդապետում էր, թէ պետութեան գլուխը որոշ պետական համախմբութեան մէջ ներկայացուցիչ լինելով իշխանութեան բոլոր լիազօրութիւնների ամբողջութեան՝ կարող է հրամայել բոլոր քաղաքացիներին մի ընդհանուր—պարտադիր պետական կրօն, որի յօդուածները կամ ճշմարտութիւնները պետութիւնը կորոշէ ոչ թէ հաւատի եկեղեցական դոգմաների մտքով, որ անհրաժեշտ են հոգու փրկութեան համար, այլ պետական այն սկզբունքների մտքով, առանց որոնց ոչ ոք չի կարող լաւ քաղաքացի և հաւատարիմ հպատակ լինել։ Ֆրանսիայի Կոնվենտը դործնականապէս իրագործեց Ռուսսոյի այդ տեսական դաղափարը նրանով, որ յօրինեց բանականութեան կրօն, հալածեց Ֆրանսիայից կաթոլիկութիւնը, վերացրեց քրիստոնէական տօմարը և նոր թուական սկսեց՝ ամիսների նոր անուններով, շաբաթները (եօթնեակները) և կիրակի օրերը փոխելով դեկադների (տասնեակների) և այլն։ Այսիսով յեղափոխութեան ժամանակ պետութիւնը սկսեց եղած եկեղեցական կարգը արմատից քանդելուց և վերջացրեց նրանով, որ ոչ միայն եկեղեցու հետ իւր ունեցած կապը կտրեց, այլ և եկեղեցին Ֆրանսիայից դուրս քշեց։ Նապոլեոնի օրով կաթոլիկութիւնը վերականգնեցաւ 1801 թ. պապի հետ կոնկորդատ կապուեց, իսկ 1802 թ. արդէն ինքը Նապոլեոնը, առանց պապի համաձայնութիւնը ստանալու, հրատարակեց այսպէս կոչուած «Օրդանիկ յօդուածները», որ պէտք է ծառայէին կազմակերպելու կոնկորդատուր արտայայտուած սկզբունքների ի կատար ածելը կամ դործադրելը։ Նապոլեոնը հասկանում էր կրօնի նշանակութիւնը ժողովրդի կեանքում. բայց նա ցանկանում էր՝ որ կրօնը և հոգևորականութիւնը իւր ձեռքում մի դործիք լինէին, որ կարողանար տնօրինել յօդուտ իւր քաղաքականութեան և ոչ թէ եկեղեցու շահերի։ Ուստի «Օրդանիկ յօդուածները» կազմուեցան քաղաքավարական պետութեան ոգուով։

Ցիրաւի չատ բան այդ «Յօդուածներում» նախկին «Գաղղիական ազատութիւնների» կրկնութիւնն է. օրին. placet, appel comme d'abus, 1862 թ. Հոգևորականութեան յայտարարութեան պարտադիր զօրութիւնը։ Բայց Նապոլեոնը չվերականգնեց դաղղիականութիւնը, այլ ընդհակառակը, առանց այդ ցանկանալու, նպաստեց Ֆրանսիայում դաղղիական ոգու կատարեալ ոչնչանալուն և Ֆրանսիական հոգևորականութեան ուլտրամոնտանական դառնալուն։ Նախ՝ վերացան այն ենթադրութիւնները, որոնց շնորհիւ Ֆրանսիայի «ամենաքրիստոնեայ» թագաւորների օրով հնարաւոր էր դաղղիականութիւնը՝ կաթոլիկ եկեղեցին դադարից բացառիկ լինելուց, որովհետև միւս պաշտամունքների հրապարակական կատարումը թոյլ տրուեց. պետութեան գլուխը այլ ևս չէր տալիս եկեղեցուն brachium saeculare-ը (աշխարհական աջակցութիւն) հերետիկոսների, հերձուածողների և ազատ մտածողների դէմ, դպրոցական կրթութեան մենաշնորհը և գրաքննութիւնը. հոգևորականութիւնը դադարեց պետութեան մէջ մեծ հոգատէր, զօրեղ դասակարդ լինելուց, որովհետև եկեղեցու անշարժ կայքերը յեղափոխութեան ժամանակ պետութիւնը դրաւել էր (աշխարհականացրել էր)[1] և եկեղեցու վերականգման ժամանակ

1 Секуляризировать.

կոնկորդատի համաձայն հոգևորականութեան համար նշանակուեց միայն որոշ, համեմատաբար չափաւոր, դրամական ռոճիկ։ Սրկրորդ՝ մասամբ Ֆրանսիայի ներքին եկեղեցական գործերը, մասամբ ընդարձակ քաղաքական ծրագիրները ստիպեցին Նապոլեոնին գնալ այնպիսի ճանապարհով, որը ոչ մի կապ չունէր գաղղիականութեան թագաւորութիւնների հետ։ Մինչդեռ Ֆրանսիայի նախկին թագաւորները ազգային հոգևորականութեան հետ համերաշխ գործում էին պապի բացարձակ իշխանութեան դէմ, Նապոլեոնը աշխատում էր պապի միջոցով ճնշում գործ դնել Ֆրանսիական նուիրաւորութեան վրայ։ Այսպէս՝ դեռ առաջին կոնսուլ եղած ժամանակ նա պէտք է ի նկատի առնէր յեղափոխութեամբ ստեղծուած այն անբնական փաստը, որ մի քանի տասնեակ եպիսկոպոսներ գաղթել էին Անգլիա, ապրում էին Անգլիայի հաշուով և կառավարում այնտեղից Ֆրանսիայի եկեղեցական գործերը։ Նապոլեոնը չէր կարող այդ եպիսկոպոսներին իրենց աթոռները յետ դարձնել, քանի որ նոքա յայտնի ռոյալիստներ էին—նոր ռեժիմի հակառակորդներ։ Բայց նա նմանապէս չէր կարող այդ աթոռների վրայ այլ անձեր նշանակել, որովհետև կանոնական իրաւունքով[1] այդ աթոռները թափուր չէին համարուում. իսկ կանոնական իրաւունքը խանգարել այդ կէտում կը նշանակէր նորից յեղափոխական փոթորիկ բարձրացնել։ Ուստի պահանջուում էր՝ որ գաղթական եպիսկոպոսները աթոռընկեց լինեն, իսկ նոր նշանակուած եպիսկոպոսներին պապը կանոնական հաստատութիւն տայ։ Այնուհետև կայսր դառնալով Նապոլեոնը իւր քաղաքական ծրագիրները ընդարձակից աւելի քան բուրբոնեան թագաւորների միապետութեան յաջորդ լինելը. նա ցանկանում էր Կոստանդին Մեծի և Կարլոս Մեծի յաջորդ—կայսր լինել։ Այդ ընդարձակ ծրագրի մէջ պապը պէտք է նշանաւոր տեղ բռներ, որպէս կայսրութեան սահմաններում բարձրագոյն հոգևոր հեղինակութիւն, որի վրայ մի և նոյն ժամանակ հնարաւոր կլիներ ճնշում գործ դնել յօգուտ կայսերական քաղաքականութեան։ Այսպիսի կչռադատութեամբ՝ Նապոլեոնը միշտ պապին դէպի այս կամ այն եկեղեցական ձեռնարկութիւնը ստիպելու և արդէն պապի միջոցով եպիսկոպոսների վրայ ազդելու կանոնին էր հետևում։ Իսկ պապին ստիպելը դժուար չէր. պապի եկեղեցական պետութիւնը մտել էր Ֆրանսիական հանրապետութեան[2] տերրիտորիումի մէջ. ինքը պապն էլ Ֆրանսիայում էր պահում իրրև գերի։ Բայց Նապոլեոնն ընկաւ. պապը Հռովմում

1 Каноническое право.
2 Республика.

վերատին հաստատուեց. իսկ Ֆրանսիական հոգևորականութիւնը ժառանգեց Նապոլեոնական դաղափարը—պապին համարել մի բարձրագոյն իշխանութիւն, որից բղխում են եկեղեցական կառավարական ակտերը (կարգադրութիւններ)։

---

§ 11. Պետութեան եւ եկեղեցու յարաբերութեան հիւսիս-ամերիկական սիստեմը։

Ամերիկական սիստեմը, որ ընդունուած է անուանել եկեղեցու բաժանում (Trennung) *պետութիւնից, հակադրութիւն է թէ պետական եկեղեցականութեան քաղաքավարական սիստեմին և թէ պետութեան պառակտմանը եկեղեցուց, որ տեղի ունեցաւ Ֆրանսիայում յեղափոխութեան ժամանակ։ Հիւսիս-ամերիկական սիստեմը կազմել էին հին աշխարհի գաղթականները, կրօնասէր մարդիկ, որոնց համար թանկ էին իրենց կրօնական համոզումները և որոնք սեփական վարձով հասկացել էին կրօնական ազատութեան չարիքը, փախչելով կրօնական հալածանքներից, որ գործադրուում էին Եւրոպայում։ Կրօնը և նորա հոգացողութիւնը յանձնուած են հաւատացողների մասնաւոր կարիքին. և այն բոլորը, ինչ որ Հիւսիս-Ամերիկայի Միացեալ նահանգների սահմանադրութիւնն ասում է կրօնի և եկեղեցու մասին, միայն այս երկու որոշումն է.*

1) *Պետական պաշտօն ստանալու համար չէ պահանջուում մի որոշ դաւանութիւն.*

2) *Կոնգրէսը չէ կարող հրատարակել օրէնքներ, որոնց միջոցով որ և է կրօն* establirmiծուէr, *կամ ընդհակառակը որ և է կրօնի ազատ կատարումը* արգիլուէr։

Պետութիւնը եկեղեցիների և այլ կրօնական համախմբութիւնների մէջ խարութիւն չէ դնում. այս պատճառով գոյութիւն ունեն միայն մասնաւոր կրօնական համախմբութիւններ, որ կազմուել են մասնաւոր, այս

դէպքում կրօնական, կարիքներին բաւարարութիւն տալու համար. և պետութիւնը այդ համախմբութիւններին թոյլ է տալիս հետամուտ լինել իրենց նպատակներին այն բոլոր միջոցներով, որ դատւում են քաղաքացիների ձեռքում. միայն թէ չխանգարուեն պետական օրէնքները և ընդհանուր մարդկային բարոյականութեան սկզբունքները։ Ընդհանուր կանոնով պետութիւնը կրօնական համախմբութիւններին չէ տալիս նոյն իսկ իրաւաբանական անձի իրաւունք. այնպէս որ համախմբութեան ունեցուածքը իրաւունքով վերագրւում է որ և է ֆիզիկական անձի։ Պետութիւնը չէ խառնւում կրօնական համախմբութիւնների կազմակերպութեանը. բայց միւս կողմից չէ էլ դիմում սրանց որ և է ծառայութիւն պահանջելու։ Ամերիկացիների կեանքի առանձին ուղղութեան շնորհիւ, ուր մինչև այժմ էլ դեռ երևում է առաջին դաղթականների խիստ-կրօնական պուրիտանական խմորը, կրօնի նկատմամբ պետութեան անտարբերութիւնը հասարակական կեանքում ցնցողական հետևանքներ չէ առաջացնում, քանի որ հասարակութեան մէջ այդ անտարբերութիւնը չկայ։ Կրօնը, թէպէտ անթիւ աղանդների է բաժանուած, մինչև այժմ էլ մնում է Ամերիկայում իբրև ահագին հասարակական մի ոյժ. այնպէս որ քրիստոնէութիւնը համարւում է ընդհանուր կամ սովորոյթի իրաւունքի բաղկացուցիչ մասը։ Պետութեան համար էլ անհնարին եղաւ սկզբունքի խիստ պահպանութեամբ և հետևողութեամբ եկեղեցու պետութիւնից բաժանման սիստեմը կազմակերպել։ Այսպէս պետութիւնը նպաստում է կիրակի օրը պահելուն՝ արգելելով այդ օրը ոչ միայն աշխատանքները, այլ և հասարակական զուարճութիւնները. բացի դրանից թէ առանձին նահանգների կառավարութիւնները և թէ նահանգների դաշնակցութեան նախագահը առանձին տօնի օրեր են հաստատում Աստծուն գոյութիւն մատուցանելու, կամ պահքի ու ապաշխարհութեան համար։ Կոնդրէսի իւրաքանչիւր նիստ բացւում է մաղթանքով. և մաղ-

թանք կատարելու համար կայ հոգևորականութիւն, որ պետութիւնից ռոճիկ է ստանում. նմանապէս զօրքի և նաւատորմիղի համար պետական—պաշտօնական հոգևորականութիւն կայ։ Մի քանի նահանգներում աստուածանարգութիւնը պատժւում է ոչ միայն ժողովրդի գայթակղութեան և կրօնական զգացմունքը վիրաւորելու տեսակէտից, այլ ինչպէս մի յանցանք, որ ուղղակի ուղղուած է Աստուածութեան դէմ։ Վերջապէս մատնացոյց են անում և այն բանի վրայ, որ անսահման կրօնական ազատութիւնը հնարաւորութիւն է տալիս կաթոլիկութեան աւելի ու աւելի զօրեղանալուն ի հաշիւ այլ կրօնական համախմբութիւնների, և որ այս հանգամանքը կարող է մօտակայ ապագայում էապէս ազդել այդ պետութեան վիճակի վրայ, ուր ամեն բան ընդհանուր ձայնատուութեան վրայ է հիմնւում, հետևապէս և ձայների մեծամասնութեան։

Եւրոպական պետութիւններից ամենքից առաջ Բելգիան վարձեց պետութեան և եկեղեցու յարաբերութիւնը կազմակերպել Ամերիկայի օրինակով (1731 թ. սահմանադրութեան մէջ), բայց աւելի ևս պակաս հետևողականութեամբ քան հիւսիսային Ամերիկայում։ Միայն եկեղեցու պետութիւնից ազատ լինելու սկզբունքը պահպանուեց։ Պետութիւնը հրաժարուեց որ և է ազդեցութիւն ունենալ եկեղեցական պաշտօններ հիմնելու և նշանակելու վրայ, placet-ից, ունեցուածքի վերահսկողութիւնից, վանքերի հիմնարկման վերաբերեալ բոլոր սահմանափակող միջոցներից և այլն։ Այս սկզբունքն էլ 1881-ին սահմանափակեցին՝ արգելելով օտարերկրեայ հոգևորականութեան Բելգիայում եկեղեցական գործառնութիւններ կատարել։ Իսկ ինչ վերաբերում է պետութեան եկեղեցուց ազատ լինելուն, մասամբ իրագործուեց (պետութիւնը չէ տալիս brachium saeculare եկեղեցական դատարանի կարգապահական վճիռները ի կատար ածելու և եկեղեցական տուրքեր հաւաքելու համար, եկեղեցական գործառնութիւններին չէ շնորհում քաղաքացիական նշանակութիւն ամուսնադրութեան և ամուսնութիւնից բղխած իրաւունքների վերաբերմամբ). բայց ամենակարևոր կէտը մնաց. Բելգիայի հոգևորականութեանը պետութիւնից թոշակ է տրւում։ Այսպէս անուանուած «հիմնական իրաւունքների մէջ», որ 1848 թ. մշակեց Ֆրանկֆուրտի պարլամենտը, հրատարակուած է եկեղեցու պետութիւնից բաժան-

ման սկզբունքը Գերմանիայի համար. սակայն գործնականապէս այդ սկզբունքը գերմանական պետութիւններից և ոչ մէկի մէջ չկարողացաւ գործադրուել։ Ճիշտ նոյն կերպ Իտալիայում կոմս Կավուրի ծրագիրը՝ «Ազատ եկեղեցի ազատ պետութեան մէջ» (libera chiesa in libera stato) եկեղեցու պետութիւնից բաժանման Ամերիկայի սիստեմի մտքով, անյարմար գտնուեց։ Շատ բան, յիրաւի, Իտալիայում կարգաւորուեց այս ուղղութեամբ. օրին. պետութիւնը յաւակնութիւն չունի խառնուել եկեղեցական պաշտօնները նշանակելուն, չէ պահանջում նոյն իսկ եպիսկոպոսների երդումը, placet, recursus ab abusu. միւս կողմից չէ ապահովում պետական օրգանների օգնութեամբ եկեղեցական իշխանութեան կարգադրութիւնների ստիպողական ի կատար ածումը, ամուսնութեան նկատմամբ եկեղեցական պահանջներին քաղաքացիական ոյժ չէ տալիս։ Բայց Իտալիայի թագաւորութեան համար աւելի քիչ հնարաւոր էր, քան մի այլ պետութեան համար կաթոլիկ եկեղեցին ընդունել որպէս մի «մասնաւոր համախմբութիւն». այն պատճառով, որ կաթոլիկ եկեղեցու գլուխը Իտալիայում է նստում։ Դրա համար իտալական 1871 թ. օրէնքը (այսպէս անուանուած «Ապահովութեան օրէնք») պապին այնպիսի իրաւունքներ է տալիս, որ ոչ մի կապ չունեն եկեղեցու, ինչպէս մասնաւոր ընկերակցութեան վրայ ունեցած հայեացքի հետ։ Պապը ճանաչուում է միապետ. իւրաքանչիւր յանցագործում նորա անձի ապահովութեան դէմ համարուում է յանցանք մեծութեան դէմ. պապը ունի դեսպանութեան ներգործական և կրաւորական իրաւունք բոլոր միջազգային արտօնութիւններով։ Պապի պալատները և բազիլիկները համարուում են արտատերիտորիալ[1]։ Պետութիւնը իւր պարտականութիւնն է համարում կոնկլաւի (ծիրանաւորների ժողովի, պապ ընտրելու դէպքում) և տիեզերական ժողովների վերաբերմամբ (երբ Իտալիայում են գումարուում) ձեռք առնել պահպանութեան անհրաժեշտ միջոցներ. նոյնպէս և պապի՝ ամբողջ կաթոլիկ աշխարհի հետ ունեցած հաղորդակցութեան և թղթակցութեան դիւրութեան նկատմամբ, դնելով պապի կարգադրութեան տակ իտալական փոստային հիմնարկութիւնները, նորան իրաւունք տալով թագաւորութեան սահմաններում կազմել և պահպանել սեփական փոստ. անկախ այդ բոլորից պետութիւնը պարտաւորուեց պետական գանձարանից պապին տարեկան հասոյթ տալ։

---

1 Экстерриторіальный.

§ 12. Քրիստոնէական պետութեան (կամ պետական քրիստոնէութեան) եւ համատիեզերութեան (կոորդինացիոն) տեսութիւնները։

Ընդհանուր—եւրոպական կրօնա-քաղաքական յետադիմութիւնը, որ հետեւեց Նապոլեոն 1-ի անկմանը, արտայայտուեց սրբազան դաշնակցութեան մէջ, որա վաւերագրի մէջ, ուր ստորագրել են ցամաքային Եւրոպայի երեք հզօր միապետները—Ռուսաց և Աւստրիայի կայսրներն ու Պրուսիայի թագաւորը,—արձանագրուած է, թէ միապետները և նոցա ժողովուրդը իրենց համարում են մի քրիստոնէական ազգութեան անդամներ. այս ազգութեան իսկական միապետ ճանաչում են աշխարհի քաւիչ Քրիստոսին և ցանկանում են գործել յօգուտ կրօնի, խաղաղութեան և արդարութեան պահպանութեան։ Սրբազան դաշնակցութիւնը կազմող միապետները պատկանում էին երեք զանազան դաւանութիւնների. բայց և այնպէս հնարաւոր դատեցին խօսել ընդհանրապէս քրիստոնէական պետութեան մասին։ Սրանից արդէն հետեւում է, որ «քրիստոնէական պետութիւնը» միապետների աշխարհայեցողութեան մէջ չէր նոյնանում դաւանական պետութեան հետ, ինչպէս միջին դարում պետութիւնը կապուած էր կաթոլիկութեան հետ, իսկ վերանորոգութեան ժամանակից պետութիւններից շատերը կապուած էին բողոքականութեան և կալվինականութեան հետ։ Ցիրաւի՝ մասամբ այդ աշխարհայեցողութեան բացատրութիւնը դրականութեան մէջ, մասամբ էլ քրիստոնէական պետութեան իդեալի իրագործմանը ձգտող մի քանի թագաւորների (առանձնապէս Պրուսիայի Ֆրիդրիխ Վիլհելմ 3-րդ և Ֆրիդրիխ Վիլհելմ 4-րդ թագաւորների) գործնական ձեռնարկութիւնները ցոյց են տալիս, որ քրիստոնէական պետութիւն ասելով հասկացուում էր մի պետութիւն, որ ստորագրուում է ընդհանուր քրիստոնէութեան և ոչ թէ դաւանական քրիստոնէութեան, որը որոշ

դոգմատիկ դաւանաբանական (կոնֆեսիոնալ) վարդապետութիւնների մի ամբողջութիւն է. իսկ այդ ընդհանուր քրիստոնէութիւնը քրիստոնէական դաւանութիւնների գլխաւոր հիմնական սկզբունքների մի վերացութիւն, քաղուածք է. այսինքն արևմուտքի համար՝ հռոմէական—կաթոլիկ, լութերական և վերանորոգչական դաւանութիւնների։ Պետութիւնն, այս տեսութեան համաձայն, մի որոշ եկեղեցու իշխանութեան տակ չէ գտնուում, ինչպէս այդ պահանջում էր միջին դարի հիերոկրատիկ սիստեմը. ոչ էլ ընդհակառակը՝ իշխում է եկեղեցու կեանքի բոլոր արտաքին երևոյթների վրայ, ինչպէս քաղաքավարական պետութիւնն էր իշխում. Քրիստոնէական պետութիւնը գտնուում է ընդհանուր քրիստոնէութեան տիրապետութեան տակ. առաջնորդուում է Ս. Գրքով, որ համայն քրիստոնէութեան սեփականութիւնն է, և ամենից առաջ քրիստոնէական բարոյական օրէնքով. և այս օրէնքը պէտք է կարգաւորէ ոչ միայն քաղաքացիների մասնաւոր յարաբերութիւնները, այլ և թագաւորների բոլոր ձեռնարկութիւնները։ Քրիստոնէական պետութիւնը պաշտպանում է կիրակի օրերի և գլխաւոր քրիստոնէական տօների պահելը. ընդհանուր քրիստոնէական կարգութիւններին[1] —մկրտութեանը և պսակադրութեանը—պետական կեանքում հանրային նշանակութիւն է տալիս. հոգ է տանում չորրորդ դասակարգի մասին՝ պաշտպանելով նորան գործատերերի և բանուորատէրերի շահագործումներից։ Զանազան ոչ քրիստոնէական կրօնական համայնքութիւնների հետ քրիստոնէական պետութիւնը վարուում է այնպէս, ինչպէս պահանջում են քրիստոնէական հանդուրժամտութիւնը և քրիստոնէական սէրը դէպի մերձաւորները. ոչ քրիստոնեաներին շնորհուում է մասնաւոր կամ քաղաքացիական իրաւունքներ, դատաստանական պաշտպանութիւն և հասարակական բարեկեցութեան մի քանի հիմնարկութիւններին մասնակցելու իրաւունք։ Եւ ընդհակառակը՝ քանի որ քրիստոնէական պետութեան դաղափարի հետ կապուում է քրիստոնէական իշխանութիւն, տպա ամեն տեսակ վարչական պաշտօններ, ամբողջ օրէնսդիր, դատող և գործադիր իշխանութիւնը և իւրաքանչիւր ընտրական իրաւունք (ներդրդական և կրաւորական) պէտք է ոչ քրիստոնեաների համար անմատչելի լինեն. որանց կցուում էր երդուեալ դատաւոր և նոտարական վաւերաթղթեր կատարելիս վկայ լինելու իրաւունքը։ Բոլոր այսպիսի իրաւունքները, որ Ֆրանսիայում «droits politiques» էին անուանում, Գերմանիայում ընդունուած էր «staatsbürgerliche Rechte» անուանել։ Քրիստոնեաների ոչ քրիստոնէութիւն ընդունելը, ինչպէս և քրիստոնեայ ծնողների զաւակներին առանց մկրտութեան թողնելը արգելուում է։ Պետութեան քրէական իրաւունքը պէտք է արտացոլէ իւր մէջ քրիստոնէական յայտնութեան բարոյական բնաւորութիւնը և իւր օրէնքները պէտք է հիմնէ հատուցման և ողորմածութեան միացեալ սկզբունքի վրայ։

Այս կամ այն դաւանութեան մի որոշ եկեղեցու հետ քրիստոնէական պետութիւնը պէտք է համաստիճանութեան (կոորդինացիո) յարաբերութեան մէջ գտնուի։ Գոնէ կաթոլիկութեան կողմից՝ համաստիճանութեան տեսութիւնը մշակուած է որպէս քրիստոնէական պետութեան տեսութեան մի յաւելուած կամ լրացումն։ Համաստիճանութեան էութիւնն այս է. պետութիւնը և մի որոշ եկեղեցի կանգնած են միմեանց կից՝ ինչպէս երկու փոխադարձաբար անկախ շրջաններ, որոնցից ոչ մէկը միւսի վրայ բարձրագոյն իշխանութիւն ունենալու յաւակնութիւն չունի. այնպէս որ պետութիւնը չէ միջամուխ լինում եկեղեցական գործերին, իսկ եկեղեցին սահմանափակուում է այն գործերի շրջանով, որ ծագում են եկեղեցական խնդիրներից։ Հիերոկրատիկ սիստեմի տեսակէտից՝ եկեղեցին ինքը, անկախ որ և է երկրային իշխանութիւնից գծում է

1 Институтъ.

իւր գործունէութեան սահմանը. պետական եկեղեցականութեան տեսակէտից, ընդհակառակը՝ պետութիւնն ինքն է որոշում, անկախ եկեղեցուց, իւր և սորա գործունէութեան շրջանները. իսկ համաստիճանութեան տեսութիւնը սկզբունքով պահանջում է երկու իշխանութիւնների ևս փոխադարձ համաձայնութիւնը (խառն բնաւորութիւն ունեցող գործերի համար, որոնց շրջանները բաժանելու նկատմամբ կարող է հարց ծագել։ Այս պատճառով կոնկորդատը իսկապէս մի անտեղի բան է թէ հիերոկրատիկ և թէ պետական եկեղեցականութեան սիստեմում. որովհետև ոչ այս և ոչ էլ միւսը թոյլ չեն տալիս խօսել ոչ պայմանակիցներից հաւասար իրաւունակութեան, ոչ էլ պայմանադրութեան՝ երկու կողմի համար էլ հաւասար չափով պարտադիր լինելու մասին։ Իսկ համաստիճանութեան տեսակէտից՝ կոնկորդատը դառնում է մի կանոնաւոր միջոց վիճելի հարցերը լուծելու և վիճելի եկեղեցա-պետական յարաբերութիւնները կարգաւորելու համար. այն էլ հանդիսանում է իսկական մտքով մի դաշնադրութիւն, որպէս երկու՝ հաւասար իրաւունակութիւն ունեցող կողմերի համար ևս իրաւական պարտաւորիչ մի ակտ։

Քրիստոնեական պետութեան տեսութեանը հակառակելով ասում են՝ թէ շատ բան, որ մտել է դրա ծրագրի մէջ, եկեղեցու և պետութեան յարաբերութիւնների միւս սիստեմների մէջ էլ կարող է ձեռք բերուել (օրինակ՝ կիրակի օրուայ պահելը նոյն իսկ եկեղեցու պետութիւնից բաժանման դէպքում էլ հնարաւոր է, ինչպէս Ամերիկայում. իսկ քրիստոնէական—բարոյական օրէնքի սկզբունքներով պետական օրէնսդրութեան ներշնչուելը մի անխուսափելի բան է քրիստոնէական քաղաքակրթութեանց մէջ, և մասնաւորապէս թոյլերի մասին հոգալը համարւում է նոցա էական խնդիրներից մէկը).—թէ ոչ քրիստոնեաներին դանադան սահմանափակումների ենթարկելով և քրիստոնեաներին արգելելով ոչ քրիստոնեայ դառնալ, այսպէս ասուած, քրիստոնէական պետութիւնը պէտք է հակասէ խղճի ազատութեան, որ քրիստոնէական մի սկզբունք է.—թէ վերացական—քրիստոնէական ամուսնական իրաւունք ստեղծելը, որ հաւասարապէս բաւարարութիւն տար բոլոր քրիստոնէական դաւանութիւններին, մի անիրագործելի բան է և

այլն . . . Առանձնապէս իւր դէմ հակառակութիւն յարուցեց համաստիճանութիւնը, որպէս քրիստոնէական պետութեան տեսութեան մի յաւելուած։ Համաստիճանութեան մասին կարելի կը լինէր խօսել միայն կաթոլիկ եկեղեցու նկատմամբ, որի գլուխը չէ գտնուում որ և է պետական իշխանութեան գերիշխանութեան[1] տակ և, ինչպէս հոգևոր գերիշխանութեան տէր, միջազգային դիրք է բռնում նման պետական գերիշխանութեան տէրերին։ Ուստի այդ տեսակէտից դժուար կլինէր հակառակել եկեղեցական և պետական իշխանութեան համանմանութեանը և կոնկորդատներին, որպէս խառն բնաւորութիւն ունեցող գործերից առաջացած ընդհարումները վերացնելու ամենալաւ միջոցին։ Բայց հէնց կաթոլիկ կանոնական իրաւունքի համար, ինչպէս որ այդ պատմականօրէն մշակուել է, մի խորթ բան է պետական իշխանութիւնը եկեղեցականին հաւասար համարելը. պետական իշխանութիւնը աշխարհական, ծառայական և հոգևորին ստորադրուած մի իշխանութիւն է. և պապի աչքում, որ ամբողջ կաթոլիկ աշխարհի գլուխն է, մի առանձին պետութիւն աւելի բան չէ, քան «գրքի մի գլուխ» (Տէն)։ Կաթոլիկ կենդրոնի կուսակցութիւնը պրուսական պարլամենտում 70-ական թուականներին (այսպէս անուանուած քաղաքակրթական մարտի ժամանակ Culturkampf) համաստիճանութեան տեսակէտին էր. պաշտպանում էր եկեղեցու պետութեան հաւասար իրաւունակութիւնը և այդ հիման վրայ մերժում պետութեան՝ իւր միակողմանի օրէնսդրութեամբ խառն գործերը կարգաւորելու իրաւունքը։ Բայց հէնց կաթոլիկ գրականութեան մէջ այդ հայեացքը կամ հերքւում էր, ինչպէս սխալ կամ ընդունւում էր միայն ինչպէս ժամանակի հանգամանքների առաջ անհրաժեշտ մի զիջողութիւն, որով սակայն դեռ չէին հրաժարւում կանոնական սկզբունքներից (salvis principiis)։ Իսկ պետական իշխանութեան համար կաթոլիկ եկեղեցին, որ գտնւում է նոյն պետութեան սահմաններում և կազմուած է այդ պետութեան հպատակներից, նոյնպէս աւելի բան չէ, քան «գրքի մի գլուխ»։ Պապի ունեցած միջազգային դիրքը չէ խանգարում, որ պետութեան տերրիտորիումի վրայ գտնուած կաթոլիկ եկեղեցու բոլոր անդամներն և օրգանները նոյն պետութեան ծայրագոյն իշխանութեան նկատմամբ հպատակութեան և հնազանդութեան պետական—իրաւական յարակցութեան[2] մէջ լինեն։ Իսկ ինչ վերաբերում է կոնկորդատներին, սրանք նախ՝ չեն կարող մինչև գլուխ գալ պետութեան և եկեղեցու

---

1 Суверенитетъ.

2 Государственно правовое отношеніе.

իշխանութիւնների հաւատացակիցների կատարելապէս հակառակ լինելու պատճառով. և երկրորդ՝ նոյն իսկ կայացած կոնկորդատները իրենց կցուող «օրգանիկ յօդուածների» շնորհիւ կարող են ընդհարումների նոր աղբիւր ծառայել։ Համաստիճանութեան տեսութիւնը աւելի ևս քիչ գործադրելի է աւետարանական եկեղեցու վերաբերմամբ. թէպէտ ոչ միայն գրականութեան մէջ գործադրելու փորձեր են եղել, այլ նաև Գերմանիայի բողոքական պետութիւններից ամենից նշանաւորի գլուխը, ինքը, Պրուսիայի թագաւոր Ֆրիդրիխ Վիլհելմ 4-րդը, 40-ական թուականներին, դեռ ևս «եկեղեցին պետութիւնից բաժանելու» գաղափարի գործածական դառնալուց առաջ (տես § 11), ամաչելով աւետարանական եկեղեցու մէջ ունեցած իւր եպիսկոպոսական գիրքից՝ դիտաւորուեց «եկեղեցու կառավարութիւնը յանձնել արդար ձեռքերի»։ Ցեռագայ բողոքական գիտութիւնը այդ բանի մէջ լոկ թիւրիմացութիւն է տեսնում։ Բողոքական եկեղեցին չէ կարող եկեղեցու վրայ նայել որպէս մի առանձին կազմակերպութեան վրայ, որ՝ պետութեան իշխանութեանը հաւասարազօր իւր սեփական իշխանութիւնն ունի. այսպիսի մի հայեացք չէ համապատասխանում ոչ վերանորոգիչների վարդապետութեան, որոնք ճանաչում և հաստատում էին միայն մի քրիստոնեայ եկեղեցա—պետական կարգ (տես § 7),—ոչ էլ իրական կեանքին, քանի որ աւետարանական եկեղեցին չունի ոչ մի նուիրապետական գլուխ, որ պետութեան գլխի հետ կոնկորդատ կապէ. այլ ընդհակառակը՝ պետութեան գլուխը պետական գերիշխանութեան հետ միացնում է իւր անձի մէջ նաև եկեղեցական գերիշխանութիւնը. նոյն իսկ այնպիսի պետութիւններում, ուր միապետը անձամբ չէ պատկանում աւետարանական դաւանութեան (օր. Աւստրո-Հունգարիայում և Բաւարիայում)։ Համաստիճանութեան տեսութիւնից վերջապէս պէտք է ընդունել, որ ոչ միայն պետութիւնը որոշ դաւանութիւնների եկեղեցիների վրայ՝ որպէս իրեն հաւասար ոյժերի վրայ պէտք է նայէր, այլ այս վերջիններն էլ փոխադարձաբար միմեանց վրայ պէտք է նայէին նոյն տեսակէտից։ Մինչդեռ եթէ առհասարակ իւրաքանչիւր քրիստոնէական եկեղեցուն յատուկ է բացառիկ դիրք դրաւելու ձգտումը, քանի որ իւրաքանչիւր եկեղեցի միայն իրեն է համարում քրիստոնէական ճշմարտութիւնը կրող և արտայայտիչ, ապա առանձնապէս այդ միտքը յատուկ է կաթոլիկութեան, որ թոյլ չէ տալիս որ և է այլ եկեղեցի իրեն համանման և հաւասար չափով իրաւունակ ճանաչել։ Որպէս զի պետութեան սահմաններում հնարաւոր լինի եկեղեցիների խաղաղ համակեցութիւնը, պետական իշխանութիւնը առանձին եկեղեցիներից բարձր պէտք է

գտնուած լինի և գործադրէ դրանց նկատմամբ իւր գերիշխանութեան իրաւունքները (Kirchenhoheit)։

---

§ 13. Իրաւական պետութեան (rechtsstaatliche Theorie) կամ պետութեան՝ եկեղեցիների վրայ ունեցած գերիշխանութեան (Kirchenhoheit) տեսութիւնը։

Իրաւական պետութեան տեսութեան արմատները գտնուում են բնական իրաւունքի մէջ. բայց այս տեսութիւնը աշխատում է խուսափել թէ ֆրանսիական յեղափոխութեան գործիչների արած սխալից, որոնք քաղաքացու[1] և խղճի ազատութիւն հրատարակեցին և մի և նոյն ժամանակ այդ ազատութիւնը բռնադատեցին, և թէ եկեղեցու բոլոր ներքին գործերին քաղաքավարական միջամխութիւնից, նմանապէս նաև եկեղեցու՝ որպէս մասնաւոր համախմբութեան վրայ եղած ամերիկական հայեացքից։ Իրաւական պետութեան տեսութիւնը էապէս տարբերւում է նաև թէ հիերոկրատիայից և թէ պետական քրիստոնէութիւնից այն բանով, որ պարզ կերպով դիտակցում է պետական և եկեղեցական մարմինների տարբեր լինելը։ Իրաւական պետութիւնը չէ յենւում՝ ոչ մի որ և է դաւանութեան դրական եկեղեցական իրաւունքի վրայ, ոչ էլ տարբեր դաւանութիւններից կազմուած մի ընդհանուր քրիստոնէութեան վրայ. այլ գործում է բնական արդարութեան հիմունքով (justitia naturalis)։ Իւրաքանչիւր քաղաքացու տրւում է խղճի անհատական ազատութիւն և քաղաքացիական ու պետական իրաւունքների անկախութիւն դաւանութիւնից. սակայն մի և նոյն ժամանակ գիտնականները նկատում են, որ բացարձակ և անսահման խղճի ազատութիւն չկայ։ Ազատութիւնը ամենից առաջ իւր սահմանը քաղաքացու հա-

---

1 Гражданинъ.

սակի մէջ է գտնում, քանի որ երեխայական հասակում չէ կարող լինել կրօնական ազատ ինքնաորոշում։ Ապա պետութիւնը՝ պաշտպանելով պետական իրաւական կարգի անխախտ լինելը, խղճի անհատական ազատութեան համար դնում է նիւթական սահմաններ. ոչ ոք իրաւունք չունի, յենուելով իւր խղճի վրայ, անպատուել, սպանութիւն գործել, մի ամուսնութեան գոյութեան ժամանակ երկրորդ անգամ ամուսնանալ. նմանապէս ոչ ոք իրաւունք չունի մերժել անձնական և գոյքական բնաւորութիւն ունեցող այն պարտականութիւնների կատարելը, որ դրուած են իւրաքանչիւր հպատակի վրայ, արդարացնելով իրեն իւր խղճի պահանջով։ Իրաւական պետութիւնը եկեղեցական կառավարութեան վրայ չէ նայում, ինչպէս իւր սեփական կառավարութեան մի մասի վրայ և չէ արդելը լինում, որ եկեղեցին կազմուի և զարգանայ իբրև մի հասարակական կազմակերպութիւն։ Եկեղեցին մտնում է պետութեան մէջ, ինչպէս ինքնօրինութեան[1] կամ ինքնավարութեան[2] որոշ շրջան ունեցող մի ընկերակցութիւն, և այդ շրջանի սահմանները որոշում է ոչ եկեղեցին, ոչ էլ եկեղեցու ու պետութեան փոխադարձ համաձայնութիւնը, այլ մի միայն պետութիւնը իւր սեփական օրէնսդրութիւնով։ Պետութիւնից գծուած շրջանի սահմաններում եկեղեցին վարում է ազատ. եկեղեցին իւր սեփական միջոցներով է իւր կանոնադրութիւնները ընդունել տալիս իւր անդամներին և պետութեան աջակցութիւնը վայելում է այն չափով, որքան որ այդ պահանջում են պետութեան շահերը և չէ հակասում խղճի ազատութեան։ Իրաւական պետութիւնը ուղղակի անհնարին բան է համարում վարուել եկեղեցու հետ այնպէս, ինչպէս վարուում է մի մասնաւոր ընկերակցութեան հետ, և հէնց կրօնական համախմբութիւնների մէջ զանազանում է մեծ

1 Автономія.
2 Самоуправленіе.

պատմական եկեղեցիները, որ ներքուստ ձուլուել են ժողովրդի կեանքի հետ և մեծ իշխանութիւն ունեն իրենց անդամների մտքերի վրայ, միւս կրօնական համախմբութիւններից։ Պետութիւնը պատմական քրիստոնէական եկեղեցիները ճանաչում է ոչ միայն իբրև ընկերակցութիւններ՝ քաղաքացիական իրաւունքի իրաւաբանական անձի մտքով, այլ և իբրև արտօնեալ ընկերակցութիւններ։

Պետութեան՝ եկեղեցիների վերաբերմամբ ունեցած իրաւունքների համագումարը գերմանական իրաւաբանական գիտութեան մէջ կոչւում է Kirchenhoheit, ինչպէս հոմանիշ բնական իրաւունքի փիլիսոփայութեան կազմած՝ jura majestatis circa sacra տերմինի («Մեծութեան իրաւունքներ եկեղեցու նկատմամբ»)։ Բայց բնական իրաւունքը մեծութեան այդ իրաւունքները (որ բաժանում էր jus reformandi, jus inspiciendi cavendi և jus advocatiae. տես § 9) աւելի բացասական նպատակների մտքով էր հասկանում, քան դրական (որոշ կրօնական համախմբութիւններ թոյլ չտալու իրաւունք. իրաւունք ամեն տեսակ վտանգներ հեռացնելու, որ համախմբութեան կողմից կարող են սպառնալ պետութեան շահերին, և իրաւունք փարատելու այնպիսի վտանգներ, որ այլ համախմբութիւնների կամ մասնաւոր անձանց կողմից սպառնում են օրէնքների պաշտպանութիւնը վայելող համախմբութեանը)։ Թէպէտ բնական իրաւունքը պետական իշխանութեան ձեռքն էր տալիս նաև եկեղեցու կառավարութիւնը (jus in sacra, interna), բայց տեսականօրէն տարբերում էր միմեանցից մեծութեան՝ եկեղեցու նկատմամբ վայելած իրաւունքներն և եկեղեցու կառավարութիւնը։ Իրական պետութիւնը սկզբունքով հրաժարւում է եկեղեցին կառավարել ինքնօրինութեան այն շրջանում, որ պետական օրէնքներով յատկացուած է եկեղեցուն. իսկ գերիշխանութեան գաղափարը՝ բացասական իրաւունքների ամբողջութեան մտքով, գործադրում է միայն այն կրօնական համախմբութիւնների համար, որ գոյութիւն ունեն պետու-

թեան մէջ մասնաւոր համախմբութիւնների կամ ընկերակցութիւնների դիրքով (Religionshoheit)։ Իսկ եկեղեցիների՝ ինչպէս արտօնեալ ընկերակցութիւնների, վերաբերմամբ մեծութեան իրաւունքների գաղափարն ունի հարուստ դրական բովանդակութիւն։ Պետութիւնը՝ բնական բարոյական օրէնքին ծառայելով, չէ կարող չդնահատել եկեղեցին, որը քարոզում է աստուածային յայտնութեան բարոյական օրէնքը, ազդում է մարդուս հոգու վրայ և ձգտում է նորան բարոյապէս կատարելագործելու, ի կատարումն աստուածային կամքի։ Դրա համար պետութիւնը ոչ միայն վերահսկում է եկեղեցու գործունէութեանը և դրական կերպով մասնակցում խառն բնաւորութիւն ունեցող գործերին (օր. եկեղեցական պաշտօններ հիմնելը կամ փոփոխելը, եկեղեցական պաշտօնեաներ պատրաստելը և նշանակելը, եկեղեցու ունեցուածքի կառավարութիւնը), այլ և աջակցում է եկեղեցուն՝ պահում կիրակի և տօն օրերը. բոլոր ուսումնական հաստատութիւններում կրօնի դասաւանդութիւնը պարտադիր առարկաների շարքում է դնում. հաստատում և պահում է աստուածաբանական ֆակուլտետներ եկեղեցական դիտութիւնը մշակելու համար. ապահովում է եկեղեցու պաշտօնեայ անձերին՝ պետական թոշակ տալով և պաշտօնապէս նոցա իրենց պաշտօնի մէջ որպէս հանրային իրաւունքի պաշտօնեայ օրգաններ ճանաչելով, իսկ հոգեւոր քահանայապետութեան բարձր ներկայացուցիչներին բարձր պետական դիրք շնորհելով (օր. վերին և ներքին պալատների անդամ նշանակելով). ի կատար է ածում եկեղեցու վարչական և դատաստանական հիմնարկութիւնների կարգադրութիւնները և վճիռները. սահմանում է քրէական պատիժներ այնպիսի յանցանքների համար որ միջին դարում կոչւում էին խառն ատեանի յանցանքներ (delicta mixti fori). երբ եկեղեցական հիմնարկութիւնները խուզարկութիւն են անում, աջակցում է նրանց. օր. սոտիկանական հիմնարկութիւնների ձեռքով տեղեկութիւն-

ներ հաղորդելով. պահանջում է եկեղեցական տուրքերը և թոյլ տալիս կրօնի հրապարակական կատարումը։ Երբ պետութեան մէջ մի քանի եկեղեցի է լինում՝ պետութիւնը դրանց հաւասար կերպով է վերաբերւում. սակայն այդ հաւասարութիւնը (պարիտետ) մատեմատիկական մտքով չպէտք է լինի՝ «բոլորին հաւասար», այլ արդարութեան մտքով՝ «իւրաքանչիւրին իւրը»։ Պետութիւնը այն եկեղեցին է աւելի դնահատում և միւսների համեմատ դնում աւելի արտօնեալ դրութեան մէջ, որին պատկանում է պետական տերրիտորիումի ազգաբնակութեան մեծագոյն մասը և որը, հետևապէս, գործունէութեան աւելի մեծ շրջան ունի։ Իսկ միւս կողմից՝ պետութեան հսկողութիւնն էլ եկեղեցիների վրայ կարող է լինել ոչ միատեսակ. կաթոլիկ եկեղեցին, իւր ամուր կազմակերպութեամբ և միջնադարեան աւանդութիւններով, աւելի ընդարձակ և աչալուրջ վերահսկողութեան անհրաժեշտութիւն է առաջ բերում, քան աւետարանական եկեղեցին։

Գերմանական գիտութիւնը խոստովանում է, որ այս տեսութիւնը ապագայի տեսութիւնն է. որովհետև թէպէտ գործնական կեանքը զանազան ցամաքային պետութիւններում ձգտում է եկեղեցա—պետական յարաբերութիւնները կարգաւորել այս տեսութեան ոգով, սակայն ներկայումս եղած սիստեմը իսկապէս զանազան սիստեմների կտորների մի անսկզբունք խառնուրդ է։ Առանձին դիրք է բռնում Ֆրանսիան, որի եկեղեցա—պետական յարաբերութիւնները չատ քիչ առնչութիւն ունեն իրաւական պետութեան տեսութեան հետ վերևում բացատրուած մտքով։ Թէպէտ կաթոլիկ եկեղեցին 1801 թ. մինչև այժմ գործող կոնկորդատի համաձայն ֆրանսիացիների մեծամասնութեան եկեղեցին է, բայց պետութիւնը հէնց կաթոլիկ եկեղեցու հետ թշնամաբար է վարւում։ Այդպիսի թշնամական յարաբերութեան օրինակներ են՝ պետական բոլոր դպրոցներում կրօնի դասաւանդութիւնը արգելուած է. պետութիւնը չէ ճանաչում խոստովանութեան գաղտնի պահելը. հոգևորականութիւնը չէ ազատում զինուորագրութիւնից. եկեղեցու ունեցուածքի կառավարութիւնը ենթարկում է իւր ծանր հսկողութեանը։ Եթէ թշնամութեան պատճառը առաջ այն հանգամանքն էր եղել, որ «կաթոլիկը» համանիշ էր «ռօեալիստին», ուրեմն եղած պետա-

կան կարգի թշնամուն, ապա ըստ երևոյթին այդ պատճառը պէտք է վերանար, երբ պապի և ֆրանսիական հոգևորականութեան կողմից հանրապետութիւնը ճանաչուեց։ Մի բան անկասկած է, որ եթէ մէկը տուժում է այս անկանոն յարաբերութիւնից, այդ ոչ թէ եկեղեցին, այլ պետութիւնն է, որ զրկւում է ամենահաստատ բարոյական հիմքերից՝ դուրս հանելով կրօնը ուսումնարաններից և հոգևորականութեան հետ թշնամաբար վարուելով։ Բայց այն պետութիւնների համար էլ, ուր այնպիսի թշնամութեամբ չեն համակուած դէպի եկեղեցին, ինչպէս Ֆրանսիայում, իրաւական պետութեան կամ եկեղեցու վրայ պետական դերիշխանութեան տեսութիւնը եկեղեցու և պետութեան խաղաղ յարաբերութիւնների համար չէ երաշխաւորում։ Իրաւական պետութիւնը ցանկանում է, որ ինքը իւր սեփական օրէնսդրութիւնով կարգաւորէ այսպէս անուանուած խառն գործերի ամբողջ շրջանը. մինչդեռ եկեղեցական գործերի մեծ մասը հէնց խառն բնաւորութիւն ունի, այսինքն վերաբերում է թէ եկեղեցուն և թէ պետութեանը. օր. եկեղեցական վարդապետութիւնը. պաշտամունքը իւր արտաքին արտայայտութիւններով. եկեղեցու կարգապահական—դատաստանական իշխանութիւնը. եկեղեցական պաշտօններ հիմնելը, փոփոխելը, վերացնելը և նշանակելը. դպրոցական հիմնարկութիւնները, ուր եկեղեցու ապագայ սպասաւորները ստանում են իրենց դաստիարակութիւնը. ամուսնութիւնը. եկեղեցական ընկերակցութիւնները. եկեղեցու ունեցուածքը.—այս բոլորը ոչ միայն եկեղեցու համար են կարևոր, այլ և ունեն պետական կարևոր նշանակութիւն։ Ինչպիսի տեսական հիմքեր էլ որ առաջ բերուէին՝ եկեղեցին պետութեան սահմանում դոյութիւն ունեցող ընկերակցութիւններից մէկը համարելու հայեացքը արդարացնելու համար, բայց և այնպէս մի անհերքելի փաստ է, որ պապը ծայրագոյն իշխանութիւն ունի կաթոլիկ քրիստոնէութեան վրայ, հէնց այդ խառն գործերի վերաբերմամբ յատկութիւն ունի օրէնսդրելու և իւր օրէնսդիր իշխանութիւնը ամենից քիչ կարող է զիջանել յօդուտ մի պետութեան, որ սկզբունքով իրեն անկախ է համարում քրիստոնէութիւնից և օրէնսդրում է փոփոխական պարլամենտական հոսանքների ազդեցութեան տակ։ 70-ական թուականների, այսպէս անուանուած, «քաղաքակրթական մարտը» (Culturkampf), երբ Պրուսիայում զանազան «խառն» բնաւորութիւն ունեցող հարցերի վերաբերմամբ պետական օրէնքների մի շարք հրատարակուեց, և նոյն մարտի ելքը—համարեա այդ բոլոր օրէնքների յետադայ վերացումը—խիստ պայծառ կերպով ցոյց տուին, թէ որքան դժուար է կաթոլիկ եկեղեցու վրայ նայել, ինչպէս պետութեան սահմանում

եղած լոկ մի ընկերակցութեան վրայ։ Արևմտեան Եւրոպայի կեանքում նոյն իսկ աւետարանական եկեղեցու և պետութեան մէջ ընդհարումների հնարաւորութիւն է նկատւում, չընայելով որ եկեղեցական իշխանութիւնը այստեղ միանում է պետութեան իշխանութեան հետ միապետի մի անձի մէջ։ Եկեղեցական օրէնքներ հրատարակելիս նախապէս կշռադատւում են պետութեան շահերին վերաբերող բոլոր հնարաւոր խորհրդածութիւնները, և եկեղեցական օրէնքը պէտք է հրատարակուի միայն այն ժամանակ, երբ մինիստրները կը ծանուցանեն, որ պետական տեսակէտից օրէնքի դէմ առարկութիւն չկայ. (dass gegen das Gesetz von Staatswegen nichts zu erinnern ist). այնպէս որ միմեանց հակառակող եկեղեցական և պետական օրէնքների երևան գալը ըստ երևոյթին աներևակայելի պէտք է ներկայանար. սակայն իրօք կարող է պատահել, որ թագաւորը, որպէս եկեղեցական կառավարութեան գլուխ, հրատարակէ մի եկեղեցական օրէնք մինիստրների առարկութեան հակառակ կամ նոյն իսկ առանց մինիստրների ընդդիմութեան. բայց պալատները այդ օրէնքի մէջ կարող են պետական օրէնքների նկատմամբ հակասութիւն գտնել և ապօրինի յայտարարել, որով պետական դատարանները կարող են այդ եկեղեցական օրէնքի պարտաւորիչ ոյժը ժխտել այն բոլոր յարակցութիւնների համար, որոնք չփւում են քաղաքացիական կարգի հետ։ Հետևանքը կլինի ընդհարում, դուցէ աւելի ևս անելանելի, քան պետութեան և կաթոլիկ եկեղեցու ընդհարումը. և այս պարզ կերպով ցոյց է տալիս, թէ միապետի, ինչպէս աւետարանական եկեղեցու գլխի, դիրքը այնպիսի մի ընկերակցութեան գլխի կամ նախագահի դիրք չէ, որ մտնում է պետութեան կազմի մէջ։

---

§ 14. Եկեղեցա-պետական յարաբերութիւնները Ռուսաստանում։

Մինչև 18-րդ դարը պետութեան և եկեղեցու յարաբերութիւնները Ռուսաստանում որոշւում էին բիւզանդական սկզբունքներով։ Քանի որ Ռուսաց եկեղեցին դեռ կախում ունէր Կ. Պոլսից, նրա բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը այդ սկզբունքները դրսից էր ներմուծում,

որովհետև Ռուսաստանից դուրս էր գտնվում և ներկայանում յանձին պատրիարքի և կայսրի, որոնք Ռուսաց եկեղեցին համարում էին Կ. Պոլսի պատրիարքութեան մետրոպոլիտական շրջաններից մէկը։ Իսկ 15-րդ դարից Ռուսաց եկեղեցա-պետական կեանքը արդէն ինքնիրեն սկսեց կազմակերպուել բիւզանդականի օրինակով։ Ուստի բիւզանդականութեան էական գծերը նաև Ռուսաց եկեղեցա-պետական յարաբերութեան մէջ պէտք է առաջ գային այնպիսի ձևափոխութիւններով, որոնք պայմանաւորուում էին Ռուսաց ազգային կենցաղի առանձնայատկութիւններից։

1) Եկեղեցա-պետական մարմնի միութիւնը Ռուսաստանում կառավարութեան քաղաքականութեան համար նոյնպիսի մի իդէալ էր, ինչպէս և Բիւզանդիայում. եկեղեցին համարւում էր մի և նոյն համախմբութեան կրօնական կողմը, պետութիւնը—քաղաքական։ Հետևանքը այստեղ էլ պէտք է նոյնը լինէր, ինչ որ Բիւզանդիայում՝ եկեղեցուն չպատկանող անձանց քաղաքական և քաղաքացիական ապիրաւունակութիւնը։ Իրօք, այս հետևութեան խստութիւնը մեղմանում էր այն բանով, որ նախ՝ այլազգիների մի մեծ բազմութիւն կար Ռուսաստանում, որոնք չէին պատկանում քրիստոնէութեան, սակայն մտնում էին Ռուսաց պետութեան աւելի ու աւելի ընդարձակուող կազմի մէջ. երկրորդ՝ որ դէթ քաղաքացիական իրաւունակութիւն էր շնորհւում այն անձանց, որոնք պատկանում էին քրիստոնէական օտարերկրեայ դաւանութիւններին. քանի որ ոչ միայն նախնական շրջանում (удѣльно-вѣчевая эпоха), այլ և Մոսկուայի պետութեան ժամանակ, վաճառականական և այլ գործերի պատճառով Ռուսաստանում բնակւում էր օտարերկրացիների մի նշանաւոր թիւ, չնայելով Ռուսաստանի արևմտեան Եւրոպայից բոլորովին կտրուած լինելուն։ Իսկ բնիկ ազգաբնակութեան՝ ուղղափառ եկեղեցուն ստիպողական պատկանելը մի անիմաստ օրէնք էր։

2) Նախ քան Մոսկուայի պետութեան կազմուելը՝ Ռուսաստանում չկար մի այնպիսի աշխարհական իշխանութիւն, որ կարողանար համեմատուել մետրոպոլիտի իշխանութեան հետ և հակադրուել այս վերջինին. որովհետև մետրոպոլիտին—էքզարխին, որը Կ. Պոլսից լիազօրութիւններ էր ստանում, պէտք է հնազանդ լինէին հաւասարապէս թէ եպիսկոպոսները, թէ փոքր (удѣльные) և թէ մեծ իշխանները։ Բայց մի և նոյն ժամանակ ոչ առիթ կար, ոչ էլ նպաստաւոր հող որ Ռուսաց յատկապէս եկեղեցա-պետական յարաբերութիւնների համար այն իրաւական հետևանքները առաջ բերէին, որ բղխում էին մետրոպոլիտի նախապատիւ դիրքից. որովհետև մետրոպոլիտի վրայ էլ կար Բիւզանդիայի պատրիարքի և կայսրի բարձրագոյն իշխանութիւնը։ Ընդհակառակը՝ Կ. Պոլսից անկախ դառնալուց յետոյ, Մոսկուայի թագաւորը Մոսկուայի զօրեղացած պետութեան մէջ անձամբ պէտք է եկեղեցու կարգի և նուիրապետութեան նկատմամբ նոյն դիրքը բռնէր, ինչ դիրք որ բռնել էր կայսրը Բիւզանդիայում։ Թէպէտ Մոսկուայի թագաւորը չանուանեց իրեն ոչ «արտաքին» ոչ էլ «ընդհանուր» եպիսկոպոս, բայց սա էլ ասում էր, որ Աստուած իրեն թագաւոր և հովիւ է դրել հպատակների վրայ, որպէս զի առաջնորդէ նոցա անդրդուելի ուղղափառութեան ճանապարհով, դաստիարակէ նոցա ի ճշմարտութիւն և ի լոյս։ Սա էլ հաւաքում էր իւր երկրում կամ իշխանութեան տակ գտնուած եպիսկոպոսներին՝ մաքուր ցորենից հերետիկոսութեան որոմները կորզելու։ Սա էլ եկեղեցու և պետութեան կարգերի մէջ սահման չէր գծում. հաւասարապէս զբաղուած էր թէ մէկի և թէ միւսի կարգաւորմամբ, և եկեղեցու կարգը հաստատելիս՝ պահպանում էր այդ պետական իշխանութեան բոլոր միջոցներով, «Որպէս զի այդ գործը իւր թագաւորական երկիւղի ներքոյ հաստատ լինի»։ Այս պատճառով եկեղեցական կարգապահութեան զանազան պահանջների խախտման համար սպառնում էին ոչ միայն

աստուածային զայրոյթ և եկեղեցական պատիժ, այլ և թագաւորի սպառնալիքը։

«Վալտամի Սերգիյ և Գերման հրաշագործների խօսակցութիւն» անվաւեր գրուածքում թագաւորին խորհուրդ է տրւում «իւր խոնարհ թագաւորական սաստով սահմանել, որ վանքերում և ամեն ուրեք մօրուք և բեխ չսափրեն, երեսի խաչակնքելը լիովին կատարեն, ամեն մարդ, թէ արական և թէ իգական սեռի, 12 տարեկան հասակից սկսած ամեն տեղ և ամեն տարի ապաշխարէ և հաղորդուի, խոստովանէ Աստուծոյ և խոստովանահօր առաջ։ Թագաւորը պէտք է խիստ հոգատարութիւն ունենայ ամբողջ աշխարհի կողմից իւր հօտի և զօրքի վրայ, որպէս զի բոլորի համար Բարձրագոյն Թագաւորի առաջ պատասխանատուութեան չենթարկուի.... Բարեպաշտ թագաւորներին, մեծ իշխաններին և այլ իշխանութիւնները Աստուած ստեղծել է, որ նոքա իրենց հոգու փրկութեան համար պահպանեն այս աշխարհը» և այլն։

Քանի որ եկեղեցական կարգադրութիւնները մի և նոյն ժամանակ նաև պետական պարտաւորիչ նորմաներ էին, ուստի պետութիւնը իւր աշխարհական օրէնքներն էլ, որ վերաբերում էին քաղաքացիական կարգին, պէտք է համակերպէր եկեղեցու պահանջներին։ Սակայն միւս կողմից Ռուսաստանում չէր կարող անյայտ մնալ «քահանայութեան» և «թագաւորութեան» այն համեմատական դնահատութիւնը, որ հէնց Բիւզանդիայում էլ տեսականի շրջանից երբեմն գործնական հողի վերայ էր տեղափոխւում։ Արդէն Մոսկուայի առաջին մետրոպոլիտները շեշտում էին քահանայութեան գերազանց լինելը ամենայն երկրային իշխանութիւնից, և այս գաղափարի գործնական զարգացման համար Մոսկուայում աւելի նպաստաւոր պայմաններ կային քան Բիւզանդիայում։ Մոսկուայի թագաւորը չունէր այն պատմական անցեալը, որ ունէին քրիստոնէական հռովմէական կայսրները։ Վերջինները բազմազարեան հռովմէական աւանդութիւնների մէջ նեցուկ էին գտնում այն հայեացքի համար, որով իրենք հանդիսանում էին իշխանութեան միակ ներկայացուցիչներ, իսկ եկեղեցական կարգը-պետական հանրային կարգի

մի բաղկացուցիչ մաս։ Իսկ Մոսկուայի թագաւորը գործում էր «նախանձախնդիր լինելով Տեառն Աստուծոյ համար և պաշտպանելով իւր մայր սուրբ եկեղեցին». ուրեմն ոչ այնքան իւր կառավարական իշխանութեան գիտակցութեամբ էր գործում նա, որքան իւր պարտքի գիտակցութեամբ՝ ծառայել Աստծուն և եկեղեցուն բոլոր զօրաւոր միջոցներով, որ թագաւորի կարգադրութեան տակ են. որովհետև այդ պարտքը զանց առնելու համար իրեն թագաւորին սպառնում էր Աստուծոյ բարկութիւնը, որի մասին յիշեցնելու նուիրապետութիւնը ոչ մի առիթ բաց չէր թողնում։ Սակայն նշանաւոր է այն, որ քահանայութեան թագաւորութիւնից գերազանց լինելու բիւզանդական նուիրապետական գաղափարներին, այսպէս ասած, թիկունք տալու համար արդէն 16-րդ դարի սկզբում արևմուտքից Ռուսաստան մուտք գործեց երկու սրերի լատին—գերմանական տեսութիւնը։

Եկեղեցու ունեցուացքը գրաւել փորձողների դէմ գրուած մի ճառի անյայտ հեղինակը (ճառը գրուել է մի անյայտ ռուս արքեպիսկոպոսի յանձնարարութեամբ) ոչ միայն ապացուցանում է, որ «աշխարհական իշխանութիւնը գտնւում է հոգևոր իշխանութեան տակ, քանի որ Աստծուց գերազասուած է հոգևոր պատիւը», այլ և երկու սրերի տեսութիւնը կրկնում է արևմտեան հիերոկրատիկ ձևով, հիմնուելով Ս. Գրքի նոյն տեղերի վրայ, որոնց վրայ յենւում էին միջին դարի կաթոլիկ կանոնագէտները, և նոյն իսկ յիշում է «աշխարհական բազուկների» մասին (brachium saeculare,), որոնց օգնութեամբ եկեղեցին պէտք է գործէ «հակառակորդների ոյժերը փարատելու համար»։ Որ «աշխարհական բազուկներին» կըցւում էր այն պարզ գաղափարը, թէ հերետիկոսների եկեղեցու դատապարտումը պէտք է պետութիւնը ի կատար ածէ, ամենից լաւ երևում է Նովգորոդի եպիսկոպոս Գեննադիի գործունէութեան եղանակից. սա Վոլոկոլամի արժանապատիւ եպիսկոպոս Յոսէֆի հետ միասին 15-րդ դարի վերջում և 16-րդի սկզբում այն կուսակցութեան գլուխը կանգնեց, որ պահանջում էր հերետիկոսներին մահուան պատժի ենթարկել, և յենւում էր Խպանիայի թագաւորի օրինակին, որը հաւատաքննութիւնով մաքրեց իւր երկիրը հերետիկոսութիւններից։ Գեննադին էր, հաւանօրէն, այն արքեպիս-

կապոսը, որի յանձնարարութեամբ անյայտ հեղինակը կազմել էր իւր «ճառը» եկեղեցու ունեցուացքը գրաւողների դէմ։ Բիւզանդական նուիրապետութեան այն գաղափարը, թէ քահանայութիւնը գերադանց է թագաւորութիւնից՝ երկու սրերի արևմտեան տեսութեան հետ չփուելու շնորհիւ, ստանում էր ճիշտ իրաւաբանական ձևակերպութիւն։

17-րդ դարում Միքայէլ Թէոդորովիչի և Ալէքսէյ Միխայլովիչի թագաւորութեան ժամանակ՝ Ֆիլարէտ և Նիկոն պատրիարքները նոյն «մեծ տէր» («великій государь») տիտղոսն էին կրում, ինչ որ և ինքը թագաւորը. այնպէս որ Մոսկուայի պետութեան մէջ երևան եկաւ իսկական երկիշխանութիւն կամ երկպետութիւն։ Եւ եթէ Միքայէլի թագաւորութեան ժամանակ երկու իշխանութիւնների այդ ակներև համագոյութիւնը ընդհարման առիթ չէր տալիս հայր-պատրիարքի և որդի-թագաւորի մէջ. բայց ընդհարումը անխուսափելի կերպով պէտք է առաջ գար Ալէքսէյ Միխայլովիչի թագաւորութեան ժամանակ, որը «մեծ տէր» տիտղոսին արժանացրեց ոչ թէ իւր հարազատ հօրը, այլ մի օտարի՝ այն էլ եռանդուն և իշխասէր մարդու։ Դարձեալ նշանաւոր է և այն, որ Նիկոն պատրիարքը՝ թագաւորի և իշխանաւորների հետ իւր վարած մարտում, քահանայութեան թագաւորութիւնից դերադանց լինելը պաշտպանում էր ոչ միայն այնպիսի ապացոյցներով, որ կարելի էր բիւզանդական աղբիւրներից քաղել. օր. Էպանագոգէից, այլ և այն տեսակ հիմքերով, որոնք պարզ ցոյց են տալիս, թէ նա ծանօթ է եղել արևմտեան հիերոկրատիկ տեսութեանը։ Ոչ թէ քահանայութիւնն է թագաւորութիւնից սկիզբ առնում, այլ թագաւորներն են թագաւորութեան օծւում քահանայութեան ձեռքով, ասում էր Նիկոնը։ Քահանայութիւնը սկզբնական իշխանութիւն է, թագաւորութիւնը ածանցեալ. թագաւորը օծուելուց առաջ պէտք է հաւատի խոստովանութիւն արտասանէ. իսկ քահանայապետը՝ լսելուց յետոյ, պէտք է դատէ, արդեօք թագաւորը ճշմարիտ

հաւատ ունի կամ արժանն է երդման. թագաւորի իշխանութիւնը լուսին է, որ իւր լոյսը ստանում է արևից. իսկ քահանայապետինը այդ արևն է, որի շնորհիւ թագաւորը լուսաւոր մարմին է դառնում. թագաւորը, որպէս աշխարհական մարդ, եկեղեցում ոչ մի իշխանութիւն չունի, այլ միայն պարտականութիւն՝ գործել իւր սրով ուղղափառ հաւատի թշնամիների դէմ, երբ այդ պահանջում են քահանայապետութիւնը և ամբողջ հոգևորականութիւնը։ Այս նոյն տեսակէտն է, որ միջին դարում Հռովմի պապերն ունէին։ Այս տեղ էլ, ինչպէս և 16-րդ դարում, ճիշտ իրաւաբանական ձևակերպութիւն ստացաւ բիւզանդական քահանայապետութեան այն գաղափարը՝ թէ քահանայութիւնը թագաւորութիւնից դերադանց է։ Արևելեան պատրիարքները, որ հրաւիրուել էին Մոսկուա Նիկոն պատրիարքի դատաստանի համար և պատմութեան անպատեհութիւնների շնորհիւ արդէն սոսկալի էին աւելի համեստ խորհրդածութիւնների, բացադրեցին թագաւորին, որ ինքը «իշխանութիւն ունի իշխելու պատրիարքի վրայ, ինչպէս և բոլոր ժողովրդի. որովհետև մէկ ինքնակալ պետութեան մէջ չպէտք է երկու գլուխ լինի. այլ թող մէկը լինի աւագագոյնը»։ Բայց այս հայեացքը Ռուսաց նուիրապետութեան մէջ ընդհանուր հաւանութիւն չգտաւ, թէպէտ նոյն նուիրապետութիւնը դատապարտեց Նիկոնին, և վիճելի հարցը լուծուեց Պետրոս Մեծի ժամանակ պատրիարքութեան վերացմամբ։

3) Նուիրապետութեան բարձրագոյն ներկայացուցիչների համար առ հասարակ պետական գործերին մասնակցելու շատ ճանապարհներ էին բացուած։ Ռուսաստանի նախնական շրջանում (въ удѣльно-вѣчевой періодъ) քահանայապետները շատ անգամ գործում էին որպէս խաղաղարարներ, վերջ էին դնում և նոյն իսկ լուծում իշխանների մէջ ծագած վէճերը, օրհնում էին նոցա խաղաղութեան դաշինքները, երդմնեցնում էին իշխաններին դաշնադրութեան կէտերը ճիշտ պահելու համար, իսկ

երբ դրժում էին, երդմնազանցներին մերժում էին եկեղեցուց։ Մոսկուայի թագաւորների ձեռքով առանձին երկիրները միացնելու շրջանում, նուիրապետութիւնը պաշտպանում էր սոցա քաղաքականութիւնը՝ մերժելով եկեղեցուց անհնազանդ փոքր իշխաններին (удѣльныхъ князей). իսկ միւս կողմից ընդունում էր այս վերջիններիս իւր պաշտպանութեան տակ Մոսկուայի թագաւորի առաջ, և առ հասարակ միջնորդում էր կամ բարեխօսում նոցա առաջ զայրոյթի ենթարկուած մարդկանց համար։ Այնպիսի կարևոր օրէնսդրութիւններ հրատարակելիս, ինչպէս են Դատաստանագիրքը և 1649 թ. օրէնսգիրքը (Уложеніе), հայցում էին մետրոպոլիտի կամ պատրիարքի և ամբողջ սուրբ ժողովի օրհնութիւնը. հոգևորականութիւնը մասնակցում էր նմանապէս նաև պետութեան հանդիպանքի ժողովներին (земскій соборъ)։ Հոգևոր իշխանութիւնները վայելում էին մեծ արտօնութիւններ հողատիրութեան և դատաստանի վերաբերմամբ։

4) Եկեղեցա-պետական կազմակերպութիւնը և Մոսկուայի թագաւորների եկեղեցա-պետական իշխանութիւնը սկզբունքով մի լինելով՝ աշխարհական իշխանութեան օրգանները, օրին. գաւառակալները (воеводы), իրենց կարգադրութեան տակ եղած միջոցներով պէտք է աջակցէին եկեղեցական կարգապահութեան պահանջների պահպանութեանը. որովհետև եկեղեցական պահանջների իւրաքանչիւր զանցառութիւն համարւում էր Աստծու երկիրի և թագաւորական պատուէրի մոռացումն։

5) 18-րդ դարից սկսած պետութեան և եկեղեցու յարաբերութեան բիւզանդական սիստեմը պետական եկեղեցականութեան, այսինքն այն սիստեմի, խիստ կնիքը ստացաւ, որ այդ ժամանակ ծաղկել էր արևմտեան Եւրոպայի պետութիւններում։ տակայն միևնոյն ժամանակ թագաւորի, որպէս թէ եկեղեցու և թէ պետութեան մէջ ծայրագոյն կառավարչի՝ դաղափարը միացաւ քրիստոնէական թագաւորի դաղափարի հետ։ Պետրոս Մեծը վերջ

դրեց պատրիարքութեան, որը շատերին առիթ էր տալիս կարծելու, թէ պատրիարքը «երկրորդ պետ է, հաւասարազոր ինքնակալին կամ նորանից մեծ», և թէ քահանայութիւնը կամ հոգևոր պաշտօնը «մի այլ և աւելի լաւ պետութիւն է»։ Բայց նա իւր եկեղեցական բարենորոգութիւնները պատճառաբանում էր ոչ թէ բնական իրաւունքի դաղափարներով, այլ հետևեալ կերպով։ Պետրոս Մեծը յայտնում էր, որ ժողովրդի կեանքի միւս շրջանները բարեփոխելիս, ինքը՝ ինչպէս քրիստոնեայ թագաւոր, սուրբ եկեղեցու ամենայն բարեկարգութեան և ուղղադաւանութեան պաշտպան, ոչ միայն չէր կարող անուշադիր թողնել հոգևոր շրջանը դրա «անկարդաւորութեամբ և դործերի մեծ պակասաւորութեամբ», այլ և «իւր խղճի վրայ մեծ երկիւղ էր կրում, չըլինի թէ Բարձրեալի առաջ ապերախտ դտնուի, որ Նորանից ինչպէս զինուորական նոյնպէս և քաղաքացիական դասակարդը բարելաւելու այսքան օժանդակութիւն ստանալուց յետոյ, արհամարհում է հոգևոր դասակարդի բարելաւումը»։ Պետական եկեղեցականութեան տերրիտորիալ դաղափարը, ի հարկ է, իւր պարդ արտայայտութիւնը դտաւ այն բանի մէջ, որ Սինոդը դասուեց պետական հիմնարկութիւնների կարդը և հոգևոր տեսչութիւնը—միւս տեսչութիւնների շարքը. մանաւանդ երբ, Պետրոս Մեծի մահից յետոյ, Սինոդը, ղրկուելով «կառավարիչ» տիտղոսից, ենթարկուեց Ծայրագոյն Դաղտնի Խորհրդին և Կաբինետին։ Բայց կայսերական հրովարտակներում, որչափ սրանք վերաբերում էին եկեղեցական դործերին, միշտ կարելի է եկեղեցու բարիքի մասին հոդացողութիւն տեսնել։ Արևմտեան Եւրոպայի մտքերի յետադայ հոսանքները նոյնպէս մեծ կամ փոքր չափով ազդում էին Ռուսաց կեանքի վրայ։ Այսպէս՝ քրիստոնէական պետութեան տեսութիւնը այն մտքով, ինչպէս որ զարդացաւ արևմուտքում 19-րդ դարի սկզբին, երևան եկաւ Աղեքսանդր Առաջին կայսրի ձեռնարկութիւններում. Աղեքսանդր I-ին քրիստոնէական պետութեան

դաղափարների ոչ միայն եռանդուն կուսակից էր, այլ և գլխաւոր սկզբնապատճառներից մէկն էր (տես եր. 63)։ Այդ դաղափարների արդիւնք էր, նախ՝ Բիբլիական լնկերութեան հիմնարկումը, որը՝ միւս քրիստոնէական դաւանութիւնների հոգևոր և աշխարհական անձանց հետ կից, իւր անդամների թւում համարում էր նաև ուղղափառ եկեղեցու բարձրագոյն հոգևորականութիւնը. երկրորդ՝ մասամբ, լուսաւորութեան և հոգևոր գործերի միացեալ մինիստրութեան հիմնարկումը։ Թէպէտ այս մինիստրութիւնը պէտք է իւր տեսչութեան շրջանի մէջ մտցնէր Ռուսաստանում գոյութիւն ունեցող բոլոր, նոյն իսկ և ոչ քրիստոնեայ, դաւանութիւնները, բայց 1817 թուի հրովարտակում դորա հիմնարկումը պատճառաբանուած էր այն ցանկութեամբ, որ քրիստոնէական բարեպաշտութիւնը միշտ ճշմարիտ լուսաւորութեան հիմք լինի։ Նոյնպէս նշանաւոր է, որ Ռուսաստանում նոյն իսկ աւելի վաղ, քան Պրուսիայում, տեղի ունեցաւ բողոքական դաւանութիւնների միացումը մի աւետարանական եկեղեցի կազմելու նպատակով. մի և նոյն ժամանակ Աղեքսանդր I-ը յայտնեց, որ այդ անցքը կծառայէ աւետարանական դաւանութեան պատկանող իւր հպատակների սրտերում այն ճշմարտութիւնների արմատ ձգելուն, որոնց վրայ հաստատւում է քաղաքացիական կարգի հիմքը և որոնք դրուած են իբրև գրական ապագայ երջանկութեան. իսկ երբ պաստորներից մէկը եկեղեցական երդացաւորութեան մի գիրք կազմեց, որ գայթակղութիւն առաջացրեց, կայսրը Աստծու և աւետարանական եկեղեցու առաջ իւր սրբազան պարտքը համարեց պաշտպանել եկեղեցին այդ գայթակղութիւնից։ Իրօք նոյն մաքերը յետագայում առաջնորդում էին Նիկողայոս I կայսրին. Հռովմի հետ ունեցած սորա յարաբերութեան և բանակցութիւնների մէջ կարելի է տեսնել մի և նոյն ցանկութիւնը՝ եկեղեցական գործերը կարգաւորել յօգուտ հռովմ-կաթոլիկ դաւանութեան քրիստոնեայ հպատակների բարիքի և հռովմ-

կաթոլիկ եկեղեցին դնել արժանավայել դիրքի վրայ։—Իսկ ինչ վերաբերում է համաստիճանութեան (կոորդինացիօ) տեսութեանը, որը արևմուտքում զարգացաւ ինչպէս քրիստոնէական պետութեան տեսութեան մի յաւելուած, մինչև այժմ էլ այդ տեսութիւնը կրկնւում է ռուս հոգևորական հեղինակների մի քանի գրուածքներում։ Ապա՝ իրաւական պետութեան դաղափարները անկասկած արտայայտուեցին ռուսաց կեանքում, որովհետև մասամբ այդ դաղափարների ազդեցութեանը պէտք է վերագրել, որ ռուսաց օրէնսդրութիւնը որոշ չափով ընդունում է քաղաքացիական և քաղաքական իրաւունքների դաւանութիւնից անկախ լինելու սկզբունքը։

Ներկայումս Ռուսաստանում գոյութիւն ունեցող եկեղեցա-պետական յարաբերութեան սիստեմը կարելի է բնորոշել հետևեալ գծերով։

1) Ուղղափառ եկեղեցին և Ռուսաց պետութիւնը դաղափարով դեռ մէկ մարմին են համարւում. սակայն իրօք՝ Ռուսաց պետութեան և ուղղափառ եկեղեցու օրդանիկ ձուլումը աւելի ևս քիչ է հնարաւոր, քան Բիւզանդիայում և Մոսկուայի պետութեան մէջ։ Թէպէտ ուղղափառութիւնից հրաժարուելը այժմ էլ պետութեան կողմից հալածանքի է ենթարկուում, բայց ռուսաց կայսրութեան այն հպատակները, որ երբէք ուղղափառութեան չեն պատկանել, ընդհանուր կանոնով պետութեան իրաւազօր քաղաքացիներ են (նշանաւոր բացառութիւն են այդ կանոնից հրէաները)։ Զանազան դաւանութիւնների կրօնական գործերի կառավարութիւնը համարւում է պետական կարգի մի մաս։ Թէոդոր Իվանովիչ Թագաւորի կառավարութիւնը կարող էր ասել, թէ Ռուսաց կայսրը գործ չունի օտարերկրեայ դաւանութիւնների հետ, և այլակրօնների կրօնական համախմբութիւնները մասնաւոր համախմբութիւններ համարել, որոնցով պետական կառավարութիւնը հետաքրքրւում է միայն այնչափ, որ նոքա չխանգարեն պետական կարգը։ Բայց այն ժամա-

նակից, երբ 18-րդ և 19-րդ դարերում Ռուսաստանին միացան Բալտիկեան երկիրը և Փինլանդիան լութերական աղդաբնակութիւնով, արևմտեան և լեհական նահանդները–կաթոլիկ և Կովկասը հայ–լուսաւորչական աղդաբնակութիւնով, և բացի սրանից բազմիցս օտարերկրեայ դաղթականութիւններ կանչուեցան Ռուսաստան՝ Մոսկուայի այդ տեսակէտը ուղղակի անհնարին դարձաւ։ Իրենք այլակրոններն էլ խնդրագրով դիմում էին կառավարութեանը՝ կարգաւորելու իրենց եկեղեցական դործերը։ 19-րդ դարի առաջին կիսում ս. Սինոդը, ինչպէս կայսրից լիազորութիւն ստացած օրդան, կառավարում էր այլակրոնների հոգևոր դործերը և հաղիւ թէ միայն Եկատերինա 2-րդի օրով աղատուեց սկզբունքով այլակրոնների հոգևոր դործերի կառավարութեանը մասնակցելուց։ Կամաց–կամաց, զանազան յայտարդական փոփոխութիւնների ենթարկուելով՝ ստեղծուեց եկեղեցական, իսկ ոչ քրիստոնեաների համար կրօնա–հասարակական կազմակերպութիւն. կաթոլիկների նկատմամբ մանաւանդ Հռովմի պապի հետ բանակցելու և համաձայնութեան դալու համար։ Այդ կազմակերպութիւնը, որ կարդաւորուում է Ռուսաց կայսրութեան Օրինադրքի (Сводъ законовъ) մէջ մտած օրէնսդրութիւններով (Уставы), համարւում է պետական կարդի մի մաս. այնպէս որ այս մտքով կարելի է ասել՝ թէ ռուսաց պետութիւնը ձուլուած է նաև այլ դաւանութիւնների հետ։ Միևնոյն ժամանակ պէտք է նկատել, որ պետական եկեղեցականութեան սիստեմը արտայայտուել է աւելի այլ քրիստոնէական դաւանութիւնների հոգևոր դործերի նկատմամբ, քան ուղղափառ։ Մինչդեռ ուղղափառ եկեղեցու հոգևոր դործերի կառավարութիւնը կազմակերպուած է կառավարութեան (вѣдомство) մի առանձին շրջանի ձևով, որ պետութեան միւս կառավարութիւններից անջատ դիրք ունի, միւս քրիստոնէական դաւանութիւնների հոգևոր դործերը մտնում են պետութեան ներքին դործոց մինիստրութեան կառա-

վարութեան շրջանը. իսկ ոչ քրիստոնէական դաւանութիւնների հոգևոր դործերը նոյն իսկ մտնում են նահանգական ատեանների (губернское правленіе) տեսչութեան շրջանը։

2) Ամենայն Ռուսաց կայսրը չէ կարող բացի ուղղափառութիւնից մի այլ հաւատ դաւանել։ Նա է Ռուսաստանում տիրող հաւատի դաւանութեան ծայրագոյն պաշտպանը և պահապանը, ուղղահաւատութեան և ս. եկեղեցու ամենայն բարեկարգութեան խնամողը, և այս մտքով 1794 թ. դահի ժառանգութեան ակտի մէջ եկեղեցու գլուխ է անուանուած (Основ. зак. ст. 41—43). հետևապէս ուղղափառութիւնը պաշտպանելու և եկեղեցական բարեկարգութիւնը հաստատելու միջոցների ձեռնարկութեան մէջ նա դործում է որպէս եկեղեցու գլուխ ս. Սինոդի միջոցով կամ պետական կառավարութեան կարդով (օր. Սիբիրում, Ռիգայում, Վարշավայում և այլ տեղերում ուղղափառ եկեղեցիներ կառուցանելու դործում)։ Բացի դրանից պատմական աւանդութիւնների իմաստով՝ Ռուսաց կայսրը ամբողջ արևելեան քրիստոնէութեան գլուխ է։ Ռուսաց կայսրի՝ բացի ուղղափառութիւնից որ և է այլ դաւանութեան պատկանելը, հետևապէս, նոյնքան անհնարին բան է, որչափ անհնարին է օր. որ Հռովմի պապը աւետարանական դաւանութեան պատկանէ։ Ռուսաստանը, որպէս ուղղափառ թագաւոր և տիրող ուղղափառ եկեղեցի ունեցող մի պետութիւն, կարելի է անուանել ուղղափառ պետութիւն. կայսրութեան բազմալեզու կազմից ուղղափառ եկեղեցում է ստանում իւր հոգևոր սնունդը ժողովրդի այն տարրը, որ Ռուսաց պետութեան սերմն և արմատն է եղել։ Բայց Ռուսաստանում դոյութիւն ունեցող միւս քրիստոնէական դաւանութիւնների վերաբերմամբ էլ կայսրի իշխանութիւնը միայն պետական իշխանութիւն չէ, որ պաշտպանում է պետութեան շահերը, այլ մի քրիստոնեայ և ինքնակալ թագաւորի բարեխնամ իշխանութիւն՝ որ կախուած չէ բազմակրոն և անկրոն կազմ ունեցող որ և է պարլամենտից.

և այս մտքով Ռուսաստանը կարելի է անուանել քրիստոնեայ պետութիւն։ Վերջապէս Ռուսաց միապետի իշխանութիւնը ոչ քրիստոնէական դաւանութիւնների վերաբերմամբ— պետական իշխանութիւն է, որ կարգ է պահպանում և գործում է քրիստոնէական համբերողութեան և բնական արդարութեան ոգով. այս մտքով Ռուսաստանը կարելի է անուանել իրաւական պետութիւն։ Կայսերական իշխանութիւնը քրիստոնէական բարեգործութեան կեդրոնն ու շարժիչն է։

3) Ուղղափառ հոգևոր նուիրապետութիւնը, ինչպէս և միւս քրիստոնէական դաւանութիւնների հոգևորականութիւնը, պետական կառավարութեան գործերին չէ մասնակցում, բացառապէս նուիրուած լինելով իւր հոգևոր կոչմանը։

4) Պետական կառավարութեան օրգանները զանազան միջոցներով աջակցում են եկեղեցական կարգի պահպանութեանը։ Այսպէս օր. եկեղեցական գործերի վերաբերեալ մի քանի օրէնքներ հանդէս են եկել որպէս Պետական Խորհրդարանի և մինիստրների Կոմիտեի բարձրագոյն հաստատութիւն ստացած կարծիքներ։ Դատաստանական օրգանները օրէնքների հիման վրայ յանցաւորներին սրանց դաւանութեան հոգևոր վարչութեանն են յանձնում եկեղեցական ապաշխարութեան ենթարկելու համար. հալածում են հերետիկոսութիւնը և եկեղեցուց հրաժարուելը. պատասխանատուութեան են ենթարկում ոչ քրիստոնեաներին, երբ նոքա տնական ծառայութեան կամ այլ աշխատանքի համար վարձուած կամ թէ իրենց մօտ արհեստ սովորող որ և է քրիստոնէական դաւանութեան պատկանող անձերին արգելում են պահել կիրակի կամ սահմանուած տօն օրերը և միւս կրօնական պարտականութիւններ կատարել։ Կառավարութեան օրգանները՝ «յանցանքների առաջն առնելու և վերջ դնելու» օրէնքդրութեան (Уставъ о предупрежденіи и пресѣченіи преступленій) և այլ օրէնքների հիման վրայ եկեղեցական

կանոնների զանցաւման առաջն առնելու միջոցների են ձեռնարկում։ Նահանգապետներին առանձնապէս պարտականութիւն է դրուում՝ ամեն դէպքում և իրենց ունեցած ամբողջ իշխանութեամբ աջակցել ուղղափառ հոգևոր իշխանութեանը պահպանելու եկեղեցու իրաւունքները և հաւատի անսասանութիւնը. ուշի ուշով հսկել, որպէս զի հերետիկոսութիւններ, հերձուածներ և տգիտութիւնից առաջացած մոլորութիւններ չտարածուեն իրենց վստահացած նահանգի բնակիչների մէջ (ст. 523 т. II ч. I св. зак. общ. губ. учр.)։ Այս ընդհանուր կանոնի համաձայն նահանգապետները քաղաքային և գաւառական ոստիկանութիւնների միջոցով պէտք է հարկաւոր հսկողութիւնն ունենան, որպէս զի աստուածպաշտութեան և բոլոր եկեղեցական ծիսակատարութիւնների ժամանակ ոչ ոք չխանգարէ անհրաժեշտ կարգապահութիւնն ու խաղաղութիւնը և որ ամեն մի հակառակ վարմունքի համար, թէկուզ առանց դիտաւորութեան կատարուած, յանցաւորը օրէնքների համաձայն պատասխանատուութեան ենթարկուի. այս նկատմամբ նահանգապետները հարկաւոր պաշտպանութիւն և աջակցութիւն են ցոյց տալիս կայսրութեան մէջ նաև միւս ազատ դաւանելի կրօններին։ (ст. 524) Առհասարակ բոլոր դաւանութիւնների հոգևոր—կառավարական հիմնարկութիւնների կարգադրութիւնները, որոշումները և վճիռները պետութեան մէջ գործադիր ոյժ ունեն. պետութիւնը պաշտպանում է դաւանական ամուսնական իրաւունքը և յանձնում հոգևորականութեանը մետրիկների մատեանների կամ այլ խօսքով քաղաքացիական դիրքը որոշող ակտերի կազմելը և այլն։ Եւ քանի որ եկեղեցա–պետական յարաբերութիւնների օրէնքով գրականապէս կարգաւորելը հիմնուած է զանազան դաւանութիւնների կրօնական կարգի և պետութեան կարգի միմեանց հետ ձուլման գաղափարի վրայ, ուստի Ռուսաստանում դժուար է ցոյց տալ մի շրջան, ուր այս կամ այն եկեղեցին գործեր բացառապէս իւր կարգապահու-

թեան միջոցներով և իւր անդամների խղճի վրայ ունեցած ազդեցութեամբ։ Պետական կառավարութիւնը միշտ կարող է օգնութեան կոչուել և պէտք է պահպանէ եղած եկեղեցական կարգը, որպէս հանրային կարգի մի մասնիկ՝ գործնականը ցոյց է տալիս, որ մի քանի նահանգապետներ՝ о предупрежденіи и пресѣченіи преступленій օրէնդրութեան 18 և 20-րդ յօդուածների հիման վրայ, բոլոր ծառայողներին պարտաւորեցնում են ամեն տարի խոստովանուել և հաղորդուել, և հետամուտ են լինում այդ պարտականութեան կատարմանը։ Առհասարակ յիշեալ օրէնդրութեան ընդարձակ պրակը՝ «կրօնի դէմ յանցանքների առաջն առնելու և վերջ դնելու մասին» («о предупрежденіи и пресѣченіи преступленій противъ вѣры»), հնարաւորութիւն է տալիս, որ ոստիկանութիւնը բաղմակողմանի կերպով աջակցէ եկեղեցական կարգապահութեանը։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/II. 1922
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԱՆԿ

Երես.

§ 1. Քրիստոնեաների և պետական իշխանութեան յարաբերութիւնը ըստ Ս. Գրքի 5
§ 2. Եկեղեցու գիրքը հեթանոս հռոմէական կայսրութեան մէջ 7
§ 3. Պետութեան և եկեղեցու յարաբերութեան՝ բիւզանդական սիստեմի էական յատկանիշները . . 12
§ 4. Երանելի Օգուստինոսի աշխարհայեցողութիւնը՝ իբրև տեսական հիմք միջին դարի հիերոկրատիկ սիստեմի 23
§ 5. Միջին դարի հիերոկրատիկ սիստեմը . . . 26
§ 6. Հիերոկրատիկ հայեացքի դէմ եղած ընդդիմադրութիւնը միջին դարում 31
§ 7. Կրօնական վերանորոգութեան (ռեֆորմացիо) գաղափարների ազդեցութիւնը եկեղեցա-պետական յարաբերութեան վրայ 40
§ 8. Բնական իրաւունքի գաղափարների ազդեցութիւնը եկեղեցա-պետական յարաբերութիւնների վրայ . 43
§ 9. Կրօնական վերանորոգութեան և բնական իրաւունքի փիլիսոփայութեան գաղափարների ազդեցութիւնը կաթոլիկ պետութիւնների և կաթոլիկ եկեղեցու յարաբերութիւնների կազմուելու վրայ . 46
§ 10. Ֆրանսիական-յեղափոխական օրէնդրութիւնը և Նապոլեոնի կոնկորդատը 53
§ 11. Պետութեան և եկեղեցու յարաբերութեան հիւսիսամերիկական սիստեմը 59
§ 12. Քրիստոնէական պետութեան (կամ պետական քրիստոնէութեան) և համատիճանութեան (կոորդինացիо) տեսութիւնները 63
§ 13. Իրաւական պետութեան (rechtsstaatliche Theorie) կամ պետութեան՝ եկեղեցիների վրայ ունեցած գերիշխանութեան (Kirchenhoheit) տեսութիւնը . 69
§ 14. Եկեղեցա-պետական յարաբերութիւնները Ռուսաստանում 75

ՎՐԻՊԱԿՆԵՐԻՑ ԿԱՐԵՒՈՐՆԵՐԸ

էրես.	տող.	տպուած է	ուղիղը
12	3 Ն.	դաւանուելու	դաւանելու
13	1 Ն.	Іерахія	Іерархія
15	4 վ.	կարգի	կարգերի
43	3 Ն.	մա-	
46	6 վ.	,և	և
»	17 վ.	լինին	լինի
48	18 վ.	բողոքել	բողոքելը
51	6 վ.	գաղափարին	գաղափարին
53	1 Ն.	արաբերութեան	յարաբերութեան
57	5 վ.	վերականգնեցաւ	վերականգնեցաւ.
63	7 վ.	ուր	որ
64	3 Ն.	է	են
80	4 վ.	-րագանց	-զանց

ՀՀ Ազգային գրադարան
NL0219473

38.863

348
И-80